

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**



<b>1. ԱՐԹՈՒՐ ՂԱՄՔԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԳՆՎԹՅԱՆ</b>	
Մարդու իրավունքների խախտման մարզինալ դրույթները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագծում	2
<b>2. ՏԻԳՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆ</b>	
Հայաստանի Հանրապետության պաշտպանության ոլորտի իրավաբաղաքական բարեփոխումները և դրանց կանխատեսելի զարգացումները	8
<b>3. ԼԻԼԻԹ ՄԱՐԳՍՅԱՆ</b>	
Միջազգային հիմնարար փաստաթղթերը մարդու և բաղաքացու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ	15
<b>4. ԳՈՒՐԳԵՆ ՄԱԴՈՅԱՆ</b>	
Ոստիկանության կադրային կազմի ապահովման կազմակերպարական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում	20
<b>5. ՎԱՀԵ ՀԱՆՎԵՐԳՅԱՆ</b>	
Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության կառավարման իրավական կարգավորման հիմնախնդիրները	26
<b>6. ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</b>	
Տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը և պայմանները	33
<b>7. ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ</b>	
Խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմի լրամշակման և բարելավման մասին	43
<b>8. ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ</b>	
Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտները քաղաքացիական դատավարությունում	47
<b>9. ԱՇԽԵՆ ԳԱՐՍԼՅԱՆ</b>	
Դատական ակտը վերաքննության կարգով վերանայելուն նախապատրաստելու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում	53
<b>10. ԽԱՉԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ</b>	
Ներում շնորհելու պատմաիրավական վերլուծության և միջազգային իրավական կարգավորման առանձին հիմնահարցերը	61
<b>11. ԱՐՏԱԿ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ</b>	
Զինծառայողների հանցավորության ընդհանուր կրիմինալոգիական բնութագիրը	68
<b>12. АНДРАНИК КАРАПЕТЯН</b>	
Уголовно-процессуальные гарантии охраны тайны	74

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ >>**

**ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազության բաժնի պետ,  
իրավաբանական գիտությունների դոկտոր

**ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ**

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ  
ՄԱՐԳԻՆԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ**

ՀՀ արդարադատության նախարարությունը շրջանառության մեջ է դրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի (այսուհետև՝ Նախագիծ) լրամշակված տարբերակը: Նախագծի հիմքում ընկած է ՀՀ կառավարության կողմից հաստատված նախագծի հայեցակարգը, որի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն բավարարում է քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգին ներկայացվող պահանջները: Նշված փաստաթղթում հեղինակները մանրամասն ներկայացրել են գործող քրեական դատավարության օրենսգրքի դրական և բացասական կողմերը, արդի իրավակիրառ պրակտիկայում ծագած խնդիրները և այդ խնդիրները լուծելու ոլորտում գործող քրեական դատավարության օրենսգրքի անգործունակությունը՝ դրանով իսկ փորձելով հիմնավորել նաև նոր քրեական դատավարության օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը (այսուհետև՝ ՀՀ քր. դատ. օր.): Առավել արժեքավոր է այն, որ հեղինակները ներկայացնում են Նախագծի հայեցակարգային խնդիրները, հայեցակարգային զարգացման և արդարադատության արդյունավետության բարձրացման ուղիները, որոնք, մեր կարծիքով, հանդիսանում են ցանկացած բարեփոխումների հայեցակարգի միջուկը<sup>1</sup>:

Հայեցակարգի 1.16-րդ կետում նշված է, որ Նախագիծը նպատակ է հետապնդում իրավունքի հանրաճանաչ սկզբունքների հիման վրա երաշխավորել քրեադատավարական ոլորտ ներգրավված անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, մշակել դրանց սահմանափակման համաչափ և թափանցիկ մեխանիզմներ, իսկ 1.17-րդ կետում որպես ՀՀ քրեադատավարական

օրենսդրության զարգացման հայեցակարգային հիմնական ուղղություն՝ նշվում է. «Քրեական գործերի քննության ընթացքում (հատկապես՝ մինչդատական վարույթում) անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների ամրապնդում, մասնավորապես, պաշտպանության կողմի իրավունքների ընդլայնում և դատական վերահսկողության ինստիտուտի ուժեղացում ու հստակեցում»:

Արդյո՞ք Նախագծում պահպանվել են հայեցակարգային նշված գաղափարները: Կարծում ենք՝ Նախագիծը իր դրական կողմերի հետ մեկտեղ պարունակում է մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից խիստ խոցելի, քրեական վարույթի հանրային մասնակիցների կողմից մարդու իրավունքների խախտման առումով մարզինալ վարքագծի հնարավորություն ընձեռող դրույթներ: Դրանք են՝

1. մեղադրյալի խոստովանական ցուցմունքի պատշաճությունն ապահովելու նպատակով դատական դեպոնացումը,
2. ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձի սկզբնական կալանքի միջնորդությունն առանց հիմնավորման ներկայացնելը,
3. անձի ձերբակալման ընթացքում օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու հիմքով խափանման միջոց կիրառելու և կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդությունը մերժելը:

1. Նախագծի 312-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցուցմունքի դատական դեպոնացումը կատարվում է մեղադրյալի խոստովանական ցուց-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մունքի պատշաճությունն ապահովելու նպատակով, քննիչի միջնորդությամբ: Մեղադրյալի ինքնախոստովանական ցուցմունքների դատական դեպոնացումը մեղադրյալի իրավունքների խախտման համար նարգինալ վարքագծի պոտենցիալ է պարունակում հետևյալ պատճառաբանությամբ՝ ըստ Նախագծի՝ մեղադրյալի ցուցմունքի դատական դեպոնացումը կատարվում է մեղադրյալի խոստովանական ցուցմունքի պատշաճությունն ապահովելու նպատակով: «Պատշաճ ցուցմունք»-ը նոր օրենսդրական եզրույթ է, որի բովանդակությունը պարզելու համար պետք է վերլուծել Նախագծի 22-րդ հոդվածում ամրագրված «Պատշաճ ապացուցում» վերտառությամբ սկզբունքը: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք պետք է հաստատվի պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ, իսկ 5-րդ մասի համաձայն՝ հանցագործության համար անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա. այն պետք է հաստատվի փոխկապակցված վերաբերելի, թույլատրելի, հավաստի ապացույցների ամբողջությամբ: Նշված դրույթներից պետք է եզրակացնել, որ պատշաճ է համարվում այն ապացույցը, որը բավարարում է վերաբերելիության, թույլատրելիության և հավաստիության հատկանիշներին: Այստեղից կարելի է եզրակացնել, որ խոստովանական ցուցմունքների դեպոնացման և դրա պատշաճության ապահովման նպատակով պետք է հավաստվի ցուցմունքի թույլատրելիությունը, հավաստիությունը և վերաբերելիությունը:

Արդյո՞ք իրավաչափ և իրատեսական է մինչդատական վարույթում հարցաքննության ընթացքում դատարանի ներկայությամբ ապահովել ցուցմունքի պատշաճությունը: Այս հարցին պատասխանելու համար պետք է պարզել, թե դատարանը մեղադրյալի խոստովանական ցուցմունքների դեպոնացման դեպքում ինչպիսի լիազորություններ ունի և ինչպես կարող է ապահովել այդ ցուցմունքների պատշաճությունը: Նախագծի 325-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դեպոնացման ժամանակ դատարանն, ըստ էության, հարցեր տալու իրավունք չունի, իսկ 5-րդ մասի համաձայն՝ ցուցմունքի դեպոնացման արդյունքում կազմվում է հարցաքննության արձանագրություն, նախագահող դատավորն այն հաստատում է իր կնիքով: Ինչ-

պես նկատում ենք, դատավորը մեղադրյալի ցուցմունքների դեպոնացման դեպքում մեղադրանքի էության վերաբերյալ հարցեր տալու իրավունք չունի, իսկ հարցաքննության արձանագրության հաստատումը, ըստ էության, դատավորի պարտականությունն է: Նախագծի նշված գլխում նախատեսված չէ նաև դատավորի կողմից արձանագրության մեջ առարկություններ ներկայացնելու հնարավորություն: Ստացվում է՝ դատավորը ոչ թե մասնակցում, այլ պասիվ կերպով ներկա է գտնվում հարցաքննությանը, չունի հարցաքննության ընթացքում հնարավոր խախտումները կանխելու կամ դրանց արձագանքնելու հնարավորություն: Փաստորեն, դատավորը, խոստովանական ցուցմունքների հավաստիությունն ապահովելու նպատակով հարցաքննությանը ներկա գտնվելով, իրականացնում է նոտարին կամ ընթերակային հատուկ գործառույթներ, այն է՝ հաստատել կամ ամրագրել իր մասնակցությամբ կատարված քննչական գործողության արդյունքները<sup>2</sup>:

Քննարկվող ինստիտուտի կողմնակիցները նշում են, որ դատավորի մասնակցությամբ հարցաքննության անհրաժեշտությունը պայմանավորված է մեղադրյալի նկատմամբ որևէ ճնշում կամ խոշտանգում բացառելու հանգամանքով, քանի որ անձը դատավորի ներկայությամբ ավելի անկաշկանդ և վստահ ցուցմունք կտա, իսկ հետագայում էլ՝ դատական քննության փուլում, չի փոխի իր կողմից նախաքննության ժամանակ տված ցուցմունքները: Կարծում ենք՝ իրականում նշված ինստիտուտը չի կարող խոչընդոտել քննիչի կողմից մույն այդ անձանց նկատմամբ բռնություն կամ խոշտանգում կիրառելուն և դրանից հետո դատավորի ներկայությամբ նրանց հարցաքննելուն: Բանն այն է, որ մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալը (հատկապես, եթե նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը) գտնվում է քրեական հետապնդման մարմնի անմիջական հսկողության տիրույթում, իսկ դատավորի մասնակցությունը հարցաքննությանն ունի հատվածային բնույթ: Ավելին, իրավական ռեալիզմի տեսանկյունից դատավորի ներկայությամբ տրված ցուցմունքները գործնականում կղիտվեն առավել արժանահավատ և անվիճելի ապացույցներ մույնիսկ այն պարագայում, երբ անձը հետագայում դատարանում ներկայացնի իր նկատմամբ խոշտանգում կիրառելու վերաբերյալ վստահելի հայ-

տարարություն: Այս հայտարարությունն ի սկզբանե կղիտվի ոչ հավաստի գուտ այն պատճառով, որ ցուցմունքները ստացվել են դատավորի ներկայությամբ, իսկ մեղադրյալը ցուցմունքի դեպոնացման ժամանակ չի հայտարարել իր նկատմամբ խոշտանգում կիրառելու մասին: Մինչդեռ, ինչպես նշվեց, տեսականորեն անձի նկատմամբ խոշտանգում կարող է կիրառվել մինչև նրան դատարան տանելը: **Այս դրույթի պահպանումը կվտանգի խոշտանգումների վերաբերյալ հայտարարություններով պետության կողմից պատշաճ քննություն կատարելու՝ առանց այդ էլ փխրուն հիմքերի վրա գտնվող պրակտիկան<sup>3</sup>:**

2. Նախագծի երկրորդ մարզինալ դրույթն ամրագրված է 116-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության մասին վկայող հանգամանքների (մեղադրյալի փախուստը կանխելու, մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելու համար, մեղադրյալի կողմից իր վրա օրենքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար) հիմնավորում չի պահանջվում ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձի սկզբնական կալանքի կամ այլընտրանքային խափանման միջոցի կիրառման դեպքում:

Ընդունում ենք, որ առաջին անգամ անձին կալանավորելու միջնորդության քննարկման ժամանակ մեղադրանքի ծանրությունը քրեական վարույթից մեղադրյալի խուսափելու հավանականությունը գնահատելու համար ունի կարևոր նշանակություն և նման կարգավորումը ինքնին չի հակասում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային: Սակայն, կարծում ենք, Նախագծով նախատեսված կարգավորման պայմաններում իրավակիրառ պրակտիկան կընթանա մարդու իրավունքների խախտման սահմանագծով:

Ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների գործերով սկզբնական կալանքի հիմնավորման պահանջի բացակայությունը կասկածի տակ է դնում կալանավորման նկատմամբ դատական երաշխիքների իրական լինելը: Այսպես, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների գործերով սկզբնական կալանքի միջնորդությունը դատարանում քննարկելիս դատարանը պարտավոր է բավարարել միջնորդությունը հետևյալ երկու

պայմանների առկայության դեպքում՝ 1. եթե անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել ծանր և առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեղադրանքով, 2. առկա է հիմնավոր կասկած այն մասին, որ մեղադրյալը կատարել է իրեն վերագրվող հանցանքը: Նշված պայմանների առկայության դեպքում կալանքի կիրառման դատական երաշխիքը դառնում է խիստ ձևական, քանի որ դատարանն իրավունք չունի մի կողմից գնահատելու որպես մեղադրյալ ներգրավելու որոշման իրավական և փաստական հիմքերը (նշված հարցը կազմում է բուն արդարադատության առարկան), մյուս կողմից՝ նշված գործերով քննիչը պարտավոր չէ հիմնավորել խափանման միջոց կիրառելու միջնորդությունը: Զննարկվող դրույթը գործնականում կարող է «խրախուսել» վարույթն իրականացնող մարմնին խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը հիմնավորելու պարտականությունից խուսափելու նկատառումներից ելնելով՝ անձի նկատմամբ արհեստականորեն, առանց բավարար հիմքերի քրեական հետապնդում հարուցել ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածներով: Այս դեպքում քրեական հետապնդման մարմինը գիտակցում է, որ ոչ պաշտպանության կողմը, ոչ էլ դատարանն այդ փուլում իրավասու չեն անդրադառնալ մեղադրանքի իրավական և փաստական հիմքերին: Ուստի, այս պարագայում դատական երաշխիքները և պաշտպանության կողմի իրավունքների իրականացումը դառնում են ոչ իրական:

Նախագծի նման կարգավորումը չի բխում նաև ՀՀ քր. դատ. օր.-ի հայեցակարգի 1.17-րդ կետով սահմանված ՀՀ քրեադատավարական օրենսդրության զարգացման հայեցակարգային այն ուղղությունից, ըստ որի՝ պետք է վերանայել դատավարական հարկադրանքի միջոցների, մասնավորապես, ձերբակալման և կալանավորման կիրառման հիմքերը, պայմանները և ընթացակարգերը՝ ուղղված դրանց օրինականության նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը:

Կարծում ենք՝ պետք է պահպանել ՀՀ իրավական համակարգում ձևավորված կալանավորման կիրառման հետևյալ իրավական չափորոշիչները. քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ռելու միջնորդության քննարկման արդյունքներով դատարանը՝ ա) պետք է արձանագրի հիմնավոր կասկածի առկայությունը կամ բացակայությունը, բ) պետք է պարզի կալանավորման մյուս պայմանների առկայությունը, գ) այն դեպքում, երբ դատարանը կհանգի այն հետևությանը, որ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերը բավարար են արձանագրելու, որ առկա է անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, և, միաժամանակ, կալանավորման մյուս պայմանները նույնպես առկա են, ապա պետք է կայացնի հիմնավորված և պատճառաբանված որոշում<sup>4</sup>։

3. Նախագծի 295-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խափանման միջոց կիրառելու և կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդության քննության արդյունքում դատարանը մերժում է միջնորդությունը, եթե հանգում է հետևության, որ անձի ձերբակալման ընթացքում թույլ են տրվել օրենքի կոպիտ խախտումներ։ Նախագծի 13-րդ գլխում ձերբակալման ընթացակարգի, ձերբակալված անձի նվազագույն իրավունքների ապահովման առումով սահմանված են մի շարք պահանջներ, որոնցից որևէ մեկի ձևական չպահպանումը դատարանը կարող է գնահատել օրենքի կոպիտ խախտում ու նույնիսկ կալանքի կիրառման հիմքերի առկայության դեպքում մերժել խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը։ Մարդու իրավունքների խախտման տեսանկյունից քննարկվող դրույթը մարզինալ է, քանի որ ձերբակալման ընթացքում թույլ տրված կոպիտ խախտումների հիման վրա խափանման միջոցի կիրառման բացառումը կարող է հանգեցնել քրեական վարույթի մասնավոր մասնակիցների օրինական շահերի խախտումներին, օրինակ՝ խափանման միջոցի կիրառումը պայմանավորված է տուժողի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ։

Կարծում ենք՝ ձերբակալման ընթացքում թույլ տրված կոպիտ խախտումների դեմ իրավական պաշտպանության միջոցների, այդ թվում՝ ձերբակալման 72 ժամվա ընթացքում անձին կալանավորելու մասին որոշում չկայացնելու դեպքում անձին ազատ արձակելու հարցերի հավասարակշռված պատասխանները տրված են ՀՀ Սահմանադրական և ՀՀ վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումներում։ ՀՀ Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության

16-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը, այդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման առարկան և նպատակը, 12.10.2009թ. ՄԴ-Ո-827 որոշմամբ սահմանել է, որ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածը, այդ թվում նաև դրա 3-րդ մասում ամրագրված դրույթը չի սահմանում «ձերբակալման» և «կալանավորման» ինստիտուտների կիրառման, ձերբակալման կամ կալանավորման մասին իրավասու մարմինների կողմից անհրաժեշտ որոշումներ կայացնելու հաջորդականությունը, ձերբակալումը չի դիտարկում որպես կալանավորման պարտադիր նախապայման և, հետևաբար, ձերբակալված լինելու փաստի բացակայությունը՝ որպես կալանավորումը բացառող հանգամանք։ Միաժամանակ, քրեական գործի մինչդատական վարույթի փուլում վերահսկողական իր գործառույթն իրականացնելու նպատակով դատարանի կողմից կալանավորման վերաբերյալ ընդունված որոշումը ոչ թե անձին դատապարտող ակտ է, այլ արդյունավետ ու անաչառ արդարադատություն իրականացնելու, Սահմանադրության 16-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջների կատարումն ապահովող նախապայման։

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «ձերբակալում» և «կալանավորում» ինստիտուտների կիրառման պարտադիր հաջորդականության հնարավորությունը բացառվում է նաև այդ ինստիտուտների էության, նպատակների և կիրառման հիմքերի համատեքստում։

«Ձերբակալում» և «կալանավորում» ինստիտուտների՝ օրենսդրությամբ սահմանված նպատակների և հիմքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այդ ինստիտուտներն ունեն ինքնուրույն բովանդակություն, հետապնդում են միմյանցից, ըստ էության, տարբերվող նպատակներ, ունեն կիրառման էապես տարբերվող հիմքեր։ Դրանցից յուրաքանչյուրն օրենսդիրն ընտրել է որպես ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասում մատնանշված առանձին նպատակների հասնելու ինքնուրույն դատավարական միջոցներ, որոնք կիրառվում են տարբեր հիմքերի առկայության դեպքում։ Հետևաբար, դրանցից յուրաքանչյուրն առանց որևէ փոխապայմանավորվածության, փոխկապակցվածության և հաջորդականության, ինքնուրույնաբար կարող է կիրառվել, երբ

առկա են դրանով հետապնդվող նպատակները և կիրառման համար անհրաժեշտ հիմքերը: Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պարագայում, երբ կալանավորման հիմքերն առավել ակնհայտ են և ոչ վիճահարույց, կալանավորումը, ըստ էության, այն համարժեք իրավաչափ միջոցն է, որն անհրաժեշտ է կալանավորմամբ հետապնդվող նպատակին հասնելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը՝ 18.12.2009թ. որոշմամբ, անդրադարձել է ձերբակալման օրինականության նկատմամբ դատական վերահսկողության, կալանքի և ձերբակալման հարաբերակցության հարցերին: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը որոշման 18-րդ կետում նշել է, որ ձերբակալման օրինականությունը չի կարող դուրս մնալ դատական վերահսկողության շրջանակից, և հարկադրանքի այդ միջոցի կիրառման ընթացքում թույլ տրված խախտումները պետք է արժանանան համարժեք իրավական գնահատականի և հանգեցնեն համարժեք իրավական հետևանքների: Հակառակ դեպքում կխախտվի ձերբակալվածի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: Ուստի, կալանավորման միջնորդությունը քննելիս ձերբակալման ընթացակարգի խախտման փաստ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է ձեռնարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան միջոցներ: Ձերբակալման առավելագույն ժամկետի խախտման պարագայում այդ միջոցները պետք է հանգեն հետևյալին.

- ա) 72-ժամյա ժամկետի խախտման փաստի արձանագրում,
- բ) ՀՀ քր. դատ. օր.-ի 360.1 հոդվածի հիման վրա լրացուցիչ որոշման կայացում կամ խախտումն ակնհայտ և կոպիտ լինելու դեպքում ՀՀ քր. դատ. օր.-ի 184-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմում,
- գ) անօրինական ձերբակալման համար փոխհատուցում ստանալու պահանջով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան դիմելու ընթացակարգի պարզաբանում:

Ի դեպ, Նախագծում ձևական մոտեցում է դրսևորվել նաև մինչդատական ակտի դատական վիճարկման վարույթի արդյունքների նկատմամբ: Մասնավորապես, Նախագծի 311-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ամեն դեպքում մինչդատական

ակտի դեմ բերված բողոքը բավարարվում է, եթե վարույթի հանրային մասնակիցը չի ներկայացրել դատարանի պահանջած նյութերը: Փաստորեն, բողոքը մեխանիկորեն բավարարվում է, եթե վարույթի հանրային մասնակիցը դատարանի պահանջով չի ներկայացնում համապատասխան նյութեր: Օբյեկտիվորեն հարց է ծագում, թե, օրինական ու հիմնավոր մինչդատական ակտի դեմ (որով դատավարության մասնակցի որևէ իրավունք չի խախտվել) բերված բողոքը նշված ձևական հիմքով բավարարելով, դատարանն ինչպե՞ս է վարույթի հանրային մասնակցի վրա անձի իրավունքների խախտումը վերացնելուն ուղղված կոնկրետ վարույթային ակտեր կայացնելու (կատարելու) պարտականություն սահմանելու: Կարծում ենք՝ Նախագծի քննարկվող կարգավորումը անընդունելի է, և այն կարելի է փոխարինել վարչական դատավարությունում առկա այն մոտեցմամբ, ըստ որի՝ վարչական մարմինը պարտավոր է ներկայացնել իր տիրապետության ներքո գտնվող գրավոր ապացույցները: Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կողմի պնդմամբ գրավոր ապացույցը գտնվում է հակառակ կողմի կամ գործին մասնակից չհանդիսացող այլ անձի տիրապետության ներքո, ապա կողմը միջնորդում է դատարանին՝ կարգադրելու ապացույցին տիրապետող անձին՝ ներկայացնելու գրավոր ապացույցը: Միջնորդության մեջ մատնանշվում է այն փաստը, որի ապացուցման համար պահանջվում է գրավոր ապացույցը: Եթե ապացույցին տիրապետող հակառակ կողմը չի կատարում ապացույցը ներկայացնելու վերաբերյալ դատարանի կարգադրությունը, ապա միջնորդող կողմի ներկայացրած չվավերացված պատճենը կարող է համարվել հավաստի: Այն դեպքերում, երբ միջնորդող կողմը պատճենը չի ներկայացրել, նրա ցուցմունքում արված պնդումները փաստաթղթի բովանդակության մասին դատարանը կարող է համարել հավաստի:

Քրեական դատավարությունում կարելի է նախատեսել, որ վարույթի հանրային մասնակիցը պարտավոր է ներկայացնել իր տիրապետության ներքո գտնվող գրավոր նյութերը, եթե դրանք անհրաժեշտ են բողոքաբերին՝ բողոքում նշված փաստերն ապացուցելու և բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար: Եթե վարույթն իրականացնող մարմինը չի ներկայացնում

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իր տիրապետության ներքո եղած նյութերը, ապա բողոքաբերի կողմից նշված փաստերը կարող են դատարանի կողմից համարվել հավաստի:

Այսպիսով, Նախագծում պետք է հետևողականորեն պահպանել ՀՀ քր. դատ. նոր օր.-ի հայեցակարգում սահմանված «անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների ամրապնդման, դատական վերահսկողության

ինստիտուտի ուժեղացման ու հստակեցման» գաղափարը և խուսափել այնպիսի դրույթներից, որոնք սահմանային են քրեական վարույթի մասնավոր մասնակիցների իրավունքների խախտմանը կամ խիստ ձևականացված պահանջներ են դնում քրեական վարույթի հանրային մասնակիցների առջև:

<sup>1</sup> Տե՛ս Ղամբարյան Ա. Քրեական դատավարության ռազմավարության հայեցակարգը: «Օրինականություն», 2011, թիվ 63, էջեր 7-10:

<sup>2</sup> Տե՛ս Ղամբարյան Ա. Մինչդատական վարույթի բարեփոխումները ՀՀ քրեական դատավարությունում. Գիտագործնական ձեռնարկ. Եր., «Օրենք և իրականություն», 2010. էջ 76:

<sup>3</sup> Այս մասին տե՛ս Ղամբարյան Ա., Բաղդասարյան Գ. Դատարանում նախաքննական ցուցմունքների հրապարակումը և ցուցմունքների դատական դեպոնացումը: «Օրինականություն», 2013, թիվ 75, էջեր 37-47:

<sup>4</sup> Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հրատապ հիմնախնդիրները: Գիտագործնական ձեռնարկ. Հեղ. խումբ՝ Դ.Ավետիսյան, Վ.Ենգիբարյան, Ա.Թաթոյան, Ա.Վարդապետյան: ՀՀ դատավորների միություն: Գիտ. խմբ.՝ Դ.Ավետիսյան, Վ.Ենգիբարյան. - Եր. : «ՀՀ դատավորների միություն» հասարակական կազմակերպություն, 2012. էջ 80:

## РЕЗЮМЕ

*Маргинальные положения нарушения прав человека в проекте  
Уголовно-процессуального кодекса РА*

Министерство юстиции РА ввело в обращение проект Уголовно-процессуального кодекса РА, где преследуется цель на основе общепризнанных принципов права гарантировать права и свободы лиц, участвующих в уголовном процессе, создать соразмерные и прозрачные механизмы их ограничения. Хотя в проекте в целом выполнили минимальные стандарты защиты прав человека, проект содержит условия, которые чрезвычайно уязвимы с точки зрения прав человека и позволяет маргинальные нормы с точки зрения нарушения прав человека. Авторы статьи с точки зрения прав человека считают неприемлемыми:

1. судебная депонация в целях обеспечения конгруэнтности признательных показаний,
2. ходатайства ареста тяжких или особо тяжких преступлений без обоснования обвиняемых,
3. во время ареста человека на основе грубейших нарушений закона проявлять сдержанность и отказ в продлении срока ареста.

## SUMMARY

*The marginal provisions of violations of human rights on the project of Criminal  
Procedure Code of Republic of Armenia*

The Ministry of Justice has put into the project of Code of Criminal Procedure, where the goal is pursued on the basis of the principles of human rights to ensure protection of the rights and freedoms of a person involved in criminal procedure, create proportionate and transparent mechanisms of its limitation. Although in the project generally are maintained to ensure minimum standards of human rights, but the project include norms which are very vulnerable in terms of human rights and are marginal clauses in terms of the violation of human rights by participants in the criminal proceedings. The authors of the article consider to be inadmissible norms in the terms of the protection of human rights:

1. judicial deponation in order to ensure the propriety of defendant's confession statements,
2. submit a petition to the portal detention without legal justification about a person who charged with a serious or particularly serious crime,
3. during the arrest of a person on the basis of rough violations of the law apply precautionary measures and rejection extend the period of motion is used as a measure of restraint.

### ՏԻԳՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության նորմատիվ ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական  
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դասախոս,  
քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային ոլորտներում ընթացող բարեփոխումների պայմաններում մշակվում և իրականացվում են համալիր միջոցառումներ՝ ուղղված զինված ուժերի մարտունակության բարձրացմանն ու արդի մարտահրավերներին դիմակայելու կարողության ապահովմանը: Նշված բարեփոխումների արդյունավետությունը կախված է մի շարք խնդիրների հաջող լուծումից, որոնցում, առաջին հերթին, կարելի է ընդգծել պաշտպանության ոլորտի իրավական-քաղաքական հենքի կատարելագործումը՝ նպատակ ունենալով ապահովել երկրի ռազմական անվտանգությունը երաշխավորող բանակ:

Հայաստանի զինված ուժերը կարողանում են աշխարհին ներկայանալ իրենց ճկունությամբ և բարեփոխվելու ունակությամբ: Պաշտպանական բարեփոխումների շրջանակներում մշակվել է ՀՀ ՁՈՒ զարգացման միջնաժամկետ պլանը՝ մինչև 2015 թվականը, որում հստակ մատնանշվում են երկրի պաշտպանության ոլորտի կատարելագործման ուղղությամբ Հայաստանի գործընկերների հետ հետագա համագործակցության առաջնահերթ ոլորտները՝ պլանավորման, բյուջետավորման և ծրագրավորման համակարգ, մասնագիտական ռազմական կրթություն և սերժանտական համակարգ, փոխգործունակության կարողությունների զարգացում, զինված ուժերում մարդու իրավունքների և կարգապահության ամրապնդում, ինչպես նաև հասարակայնության հետ կապեր: Այս բոլոր ուղղություններով ակնկալվում է ՆԱՏՕ-ի կողմից բազմակողմ և Դաշինքի անդամ պետությունների կողմից երկկողմ օժանդակություն<sup>1</sup>: Անցած տարի-

ների ընթացքում իրականացվեց նաև ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը, որի արդյունքների իրականացմանն ուղղված գործողությունները միավորվեցին մեկ միասնական փաստաթղթում՝ ՀՀ զինված ուժերի զարգացման պլանում<sup>2</sup>:

Այսօր հայկական բանակի հարաճուն զարգացման հիմքում համազգային մոտեցման շնորհիվ երկրի պաշտպանական ոլորտում հաջողությամբ իրականացվում են մեծածավալ աշխատանքներ. մասնավորապես, ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումները համալրվում են նորագույն ռազմական տեխնիկայով և սպառազինությամբ, պաշտպանական գոտիներում և տեղամասերում կատարելագործվում են ամրաշինական կառույցները, տարեցտարի բարելավվում են զինծառայողների ծառայության, կենցաղի, հանգստի և ժամանցի պայմանները, առանձնակի ուշադրություն է դարձվում զինծառայողների, զոհված ազատամարտիկների, հաշմանդամների և նրանց ընտանիքների սոցիալական ու բնակարանային խնդիրների լուծմանը, իրականացվում են աննախադեպ ծավալների կապիտալ և վերանորոգման շինարարական աշխատանքներ: Այս բոլոր միջոցառումների շնորհիվ օրեցօր ավելանում են ՁՈՒ մարտական կարողությունները, ավելի է մեծանում վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, որի պարագայում ՀՀ զինված ուժերը հանդես են գալիս որպես մրցունակ, անընդհատ կատարելագործվող, բարեփոխվող և զարգացման ուղին բռնած կառույց՝ առաջնային կարևորության նպատակ ունենալով Հայաստանի ռազմական անվտանգության երաշխավորումը<sup>3</sup>:

www.lawinstitute.am



**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

Ընդհանուր առմամբ, վերոնշյալ միջոցառումներից ելնելով, պաշտպանական բարեփոխումների գործընթացը կարելի է բաժանել 3 փուլերի.

1. հայեցակարգային՝ ռազմական դոկտրինի և այլ հայեցակարգային փաստաթղթերի մշակում՝ ՀՀ ռազմական անվտանգության ապահովման հիմնադրույթների, ռազմական անվտանգության ապահովման համակարգի, դրա կառուցվածքի, խնդիրների, գործունեության և զարգացման ուղղությունների ու նպատակների հստակեցման համար,

2. Ձև-ի հնարավորությունների և արդիականացման անհրաժեշտությունների վերանայում՝ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կարիքների, պահանջվող բարեփոխումների որոշում և պլանավորում,

3. գործնական բարեփոխումների իրականացում՝ Ձև-ի համար հասանելի ազգային և միջազգային հնարավորությունների կիրառմամբ:

Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից 2007 թվականի հունիսին հաստատված ՀՀ պաշտպանական բարեփոխումների 2007-2015 թվականների ծրագրի շրջանակներում 2007 թվականի դեկտեմբերին վերջինիս կողմից հաստատվեց Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը, որի հիման վրա առաջնային նշանակություն տրվեց երկրի պաշտպանության կազմակերպման և իրականացման գործընթացի օրենսդրական ապահովման արդիականացմանն ու զինված ուժերի նոր կառուցվածքի ձևավորմանը:

ՀՀ պաշտպանության բնագավառում արտահայտված խնդիրներին համապատասխան ընդունվեցին «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենքը (որում նախատեսվեց քաղաքացիական հատուկ ծառայության ներդրումը ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում), «Ռազմական ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» փաթեթը (ռազմական ոստիկանությանը վերապահվեցին որոշակի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու իրավասություններ), «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (պաշտպանության նախարարության հա-

մակարգի իրավական վիճակի առանձնահատկությունների վերաբերյալ, որը սահմանում է ՀՀ Նախագահը) և մի շարք այլ օրենսդրական ակտեր, իսկ 2008 թվականի ընթացքում բազմակողմանի քննարկումների արդյունքում մշակվեց և ՀՀ Ազգային ժողովի ընդունմանը ներկայացվեց «Պաշտպանության մասին» ՀՀ նոր օրենքը, որն ուժի մեջ մտավ 2008 թվականի դեկտեմբերի 25-ին: ՀՀ Նախագահի կողմից հաստատվեց ՀՀ զինված ուժերի կառուցվածքը, իսկ ՀՀ կառավարության կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատելու մասին» որոշումը<sup>4</sup>, որով նախարարության և զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրությունների ու կառուցվածքների հետ միասին հաստատվեցին ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման ղեկարտամենտի և քննչական ծառայության կանոնադրություններն ու կառուցվածքները, ստեղծվեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

ՀՀ պաշտպանական բարեփոխումների իրավական ապահովման շրջանակներում վերջին երկու տարվա ընթացքում փոփոխություններ և լրացումներ կատարվեցին «Զինվորական ծառայություն անցնելու մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Զինապարտության մասին» և «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքներում, ինչպես նաև մշակվեց և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ նոր օրենքը:

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ օրենքով քայլեր են կատարվել՝ ապահովելու պաշտպանական բարեփոխումների ծրագրով նախատեսված հետևյալ միջոցառումների իրականացումը. զինված ուժերում պայմանագրային սերժանտական համակարգի ընդլայնման, ռազմակրթական համակարգի զարգացման, զինծառայողներին պաշտոնի նշանակման և ազատման գործընթացում թափանցիկության ապահովման, ծառայողական առաջխաղացման հնարավորությունները հստակեցնելու, կարգապահության ամրապնդման ուղղություններով,

որոնց լիարժեք իրականացման համար օրենքն ունի թերի կարգավորումներ: Մասնավորապես, օրենքը հատակ կարգավորումներ չէր նախատեսում պարտադիր զինվորական ծառայության գորակոչված և սպայական կամ սերժանտական դասընթացներ անցնելու ցանկություն հայտնաձև և այդ դասընթացներն ավարտած զինծառայողների կարգավիճակի, զինվորական պաշտոնների նշանակման, կադրերի տրամադրության տակ թողնելու, զինվորական ծառայության պայմանագրերի կնքման, դադարեցման և կասեցման հիմքերի, զինվորական ծառայության ընդհանուր, ինչպես նաև զինվորական կոչումների կրման ժամկետում չհաշվարկվող ժամանակահատվածների, զինվորական ծառայությունից արձակելու հիմքերի և կարգի վերաբերյալ<sup>5</sup>:

Նշված օրենքում փոփոխությունների և լրացումների կատարման նպատակն է զինված ուժերում պայմանագրային սերժանտական համակարգի ընդլայնումը, ռազմակրթական համակարգի զարգացումը, զինծառայողներին պաշտոնի նշանակման և ազատման գործընթացում թափանցիկության ապահովումը, ծառայողական առաջխաղացման հնարավորությունների հստակեցումը, կարգապահության ամրապնդումը: Այդ փոփոխությամբ շարքային կազմի մեջ մտնող սերժանտական կոչումները և պաշտոնները ներառվեցին ենթասպայական կազմի մեջ՝ որպես կրտսեր ենթասպայական կազմ, սահմանվեցին սերժանտական կոչումների կրման նոր ժամկետներն ու շնորհման կարգը (որոնց հանրագումարը կկազմի 20 տարի), հստակեցվեցին սպայական կամ սերժանտական դասընթացներ անցնելու ցանկություն հայտնաձև և այդ դասընթացներն ավարտած զինծառայողների կարգավիճակը, որի համաձայն՝ ուսումնառության ժամանակահատվածի համար կնքվում է զինծառայության անցման պայմանագիր չհանդիսացող քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր, զինվորական պաշտոնների նշանակման և ազատման, կադրերի՝ տրամադրության տակ թողնելու կարգը, զինվորական ծառայության պայմանագրերի, այդ թվում՝ առաջին և նոր, կնքման, դադարեցման և կասեցման հիմքերը, այդ պայմանագրերի ուժի մեջ մտնելու կարգը, զինվորական ծառայության ընդհանուր, ինչպես նաև զինվորական կոչումների կրման ժամկետում չհաշվարկվող ժամանակահատվածները, զինվորական ծառայությունից արձակելու հիմքերը, կարգը և երաշխիքները,

ռազմաուսումնական հաստատություններ կամ սպայական կամ սերժանտական դասընթացներ, կամ ակադեմիական կրթություն, կամ պետական լիազոր մարմնի պատվերով բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա (ադյունկտուրա), կլինիկական օրդինատուրա, դոկտորանտուրա ավարտած և նախատեսված ժամկետներում հետուսումնական պայմանագրային զինծառայությունից հրաժարված անձանց կողմից ուսման ծախսերի փոխհատուցման հիմքերն ու կարգը, պարտադիր զինծառայողներին խրախուսման կարգով տրվող արձակուրդը փոխարինվեց պարտադիր կարգով տրվող արձակուրդով:

«Ձինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելը պայմանավորված էր գորակոչային և պահեստագորային համակարգի կատարելագործման նկատառումներով՝ զինված ուժերում իրականացվող պաշտպանական բարեփոխումներին համապատասխան կարգավորելու անհրաժեշտությամբ: Քաղաքացիներին զինվորական հաշվառումից հանելու հիմքերի ցանկում նախատեսվում էր ազատագրվման դատապարտված անձանց ևս հանել զինվորական հաշվառումից, ինչը որոշակի խոչընդոտներ էր հարուցում նրանց անձնագրավորման, ինչպես նաև հետագա զինհաշվառման կազմակերպման հարցում: Օրենքի կիրառման ընթացքում որոշակի խնդիրներ էին առաջացել ռազմաուսումնական հաստատություններից հեռացված քաղաքացիների գորակոչի կազմակերպման, գորակոչի ժամանակ բնակության վայրին մոտ ծառայելու արտոնությունների, առողջական վիճակի պատճառով տարկետումների տրամադրման, զինվորական ծառայության ընթացքում, ինչպես նաև ազատագրվման ձևով պատիժ կրելուց հետո զինծառայողների առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությանը ոչ պիտանի ճանաչելու և այդ հիմքով պահեստագորում հաշվառելու, պահեստագորում հաշվառված անձանց բժշկական վերափորձաքննության ենթարկելու գործընթացում: Օրենքով նախատեսված չէր նաև վարժական հավաքների, զինվորական վարժանքների և գորավարժությունների հայտարարման կարգը:

Փաստորեն, այդ օրենքի նշված դրույթները համապատասխանեցվեցին առկա իրականության կարգավորման պահանջներին, իսկ օրենքում օգ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տագործվող «ազատության սահմանափակման» հասկացությունը ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված չէր, «կալանք» հասկացությունն օգտագործվում է որպես պատժի տեսակ, որի կապակցությամբ կատարվեց համապատասխան հստակեցում՝ ապահովելով ազատագրվածան դատապարտված անձանց զինվորական հաշվառման իրականացումը, հստակեցվեցին ռազմաուսումնական հաստատություններից հեռացված կամ ազատված անձանց գորակոչման և հետագա ծառայությունը շարունակելու ուղարկելու կարգը, բնակության վայրին մոտ գտնվող գորամասում ծառայելու արտոնություն ունեցող քաղաքացիների շրջանակը, բնակության վայրին մոտ գտնվող գորամասի տեղակայման հեռավորությունը փոխարինվեց մինչև 150 կիլոմետրով, քանի որ նշված արտոնությունից օգտվող գորակոչիկների թվաքանակը բավականին մեծացել է, դրա հիմնական բեռն ընկնում է Երևան քաղաքից գորակոչվող անձանց վրա և մեծ դժվարություններ են առաջանում Երևանից մինչև 100 կմ հեռավորության վրա տեղակայված գորամասերում նշված արտոնությունից օգտվող գորակոչիկների տեղավորման խնդրում, ինչպես նաև գորամասերի մարտունակության ապահովման հարցում<sup>6</sup>:

Հստակեցվեցին նաև գորակոչի և պարտադիր զինծառայության ընթացքում առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչվելու դեպքում պահեստագործում հաշվառվելու ու պահեստագործում հաշվառվելուց հետո բժշկական վերափորձաքննության կարգը, նշված գործընթացում բժշկական հետազոտման և գորակոչիկների պիտանիության վերաբերյալ որոշումների կայացման օբյեկտիվությունն ապահովելու և որոշակի կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով համապատասխան եզրակացություններ տալու իրավասություն է վերապահվում նաև ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական վարչությանը, գորակոչիկներին ուսման կապակցությամբ և ընտանեկան դրության բերումով տարկետումների տրամադրման գործառույթը վերապահվում է տեղական գորակոչային հանձնաժողովներին, կարգավորվում են զինծառայության ընթացքում ազատագրվածան դատապարտված անձանց կողմից պատժի կրումից ազատվելուց հետո հետագա ծառայությունը շարունակելու ուղարկելու, վարժական հավաքների, զինվորական վարժանքների և գորավարժությունների հայտարարման հետ կապ-

ված հարաբերությունները, քանի որ օրենքը հստակ չէր նախատեսում պարտադիր զինվորական ծառայության ընթացքում ազատագրվածան դատապարտված անձանց պատժի կրումից ազատվելուց հետո հետագա զինծառայության ուղարկելու որոշում կայացնելիս նրանց առողջական վիճակի փորձաքննության, ինչպես նաև ընտանեկան դրության բերումով տարկետման իրավունք ձեռք բերելու դեպքում պահեստագործում հաշվառելու կարգը, ինչպես նաև չէր հստակեցվում, թե ով էր հայտարարում վարժական հավաքները, զինվորական վարժանքները և գորավարժությունները:

Որպես այդպիսին՝ տվյալ փոփոխությունների ու լրացումների ընդունմամբ կրթաբարձրացման գորակոչի կազմակերպման արդյունավետությունը, կկատարելագործվի զինված ուժերը ֆիզիկապես առողջ գորակոչիկներով համարելու գործընթացը, կնվազեցվեն որոշակի կոռուպցիոն ռիսկեր, կապահովվի տեղական գորակոչային հանձնաժողովների դերի և պատասխանատվության բարձրացումը, կկարգավորվեն որոշակի կատեգորիայի քաղաքացիների գորակոչի, վարժական, զինվորական վարժանքների և գորավարժությունների հայտարարման կարգի հետ կապված հարաբերությունները:

«*Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին*» ՀՀ օրենքում փոփոխություններն ու լրացումները պայմանավորված են օրենքով նախատեսված արտոնությունների կիրառման արդյունքում զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց, հաշմանդամ կամ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամ համարվող անձանց շրջանակը հստակեցնելու անհրաժեշտությամբ: Բժշկական սպասարկման և բնակարանային ապահովվածության արտոնությունների կիրառման, ինչպես նաև բնակելի տարածությունների վարձակալության դիմաց դրամական փոխհատուցման տրամադրման գործընթացում օրենքը չէր նախատեսում զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց, հաշմանդամ կամ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամ համարվող անձանց շրջանակը, ինչն առաջացնում էր օրենքի դրույթների ոչ միատեսակ կիրառում և դրա արդյունքում՝ չհստակեցված ծախսերի կատարում: Արդյունքում բժշկական սպասարկման և բնակարանային ապահովվածության արտոնությունների կիրառման գործընթացում կապահովվի օրենքի դրույթների միատեսակ կիրառումը, ինչը

կնպաստի հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, կատարվող ծախսերի օպտիմալացմանը<sup>7</sup>։

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում նախատեսվում է<sup>8</sup> լրամշակել այլընտրանքային ծառայության ուղարկելու դիմումների քննարկման կարգը, փոփոխվում են այլընտրանքային ծառայություն անցնելու ժամկետները՝ համապատասխանաբար 30 ամիս և 36 ամիս, այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրեր են նախատեսվում նաև Հայաստանի Հանրապետության համայնքները, այլընտրանքային ծառայության համար պատասխանատու և այլընտրանքային ծառայության ընթացքի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններ են սահմանվում Հանրապետության մարզպետները (Երևան քաղաքում՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը)։

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրքը։ ՀՀ պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ դեռևս 2011 թվականին ՀՀ Ազգային ժողով էր ներկայացվել «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի նախագիծը, որի առնչությամբ ՀՀ Ազգային ժողովում երկու անգամ տեղի ունեցան խորհրդարանական լսումներ. դրանց արդյունքներով ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի միջոցով օրենքի նախագիծը ներկայացվեց միջազգային փորձաքննության։ Եվրոպական փորձագետների առաջարկությունների հիման վրա օրենքի նախագիծը լրամշակվեց և Ազգային ժողովի 2012 թվականի գարնանային նստաշրջանում ընդունվեց ու վավերացվեց ՀՀ Նախագահի կողմից։

Մինչ այդ ՀՀ ՋՌԻ կարգապահական հարաբերությունները կարգավորվում էին 1996 թվականին ընդունված ՀՀ կառավարության N 247 որոշմամբ, ինչը չէր համապատասխանում ՀՀ Սահմանադրության և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին<sup>9</sup>։ Միաժամանակ, գործող որոշման մի շարք դրույթներ արդեն իսկ ժամանակավրեպ էին և չէին բավարարում ՀՀ զինված ուժերի արդի զարգացման ու իրականացվող պաշտպանական բարեփոխումների պահանջները։

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ նոր օրենքով կարգավորվում են զինծառայողների պարտականությունները՝ կապված զինվորական

կարգապահության պահպանման հետ, զինծառայողներին տրվող խրախուսանքի և կարգապահական տույժերի տեսակները, դրանք կիրառելու կարգն ու պայմանները, հրամանատարների իրավունքները խրախուսանքների և կարգապահական տույժերի կիրառման գործընթացում, ինչպես նաև զինվորական կարգապահության ամրապնդման հետ կապված այլ հարաբերություններ։ Մասնավորապես՝ սահմանվել են զինվորական կարգապահության ապահովման սկզբունքները, բոլոր օղակների զինծառայողների պարտականությունները, ինչպես նաև հրամանատարների (պետերի) դերը զինվորական կարգապահության ապահովման գործում, բոլոր խմբերի հրամանատարների (պետերի) կարգապահական իրավունքի սահմանները։ Նախատեսվել են խրախուսանքների և կարգապահական տույժերի տեսակները, դրանց տրման և կիրառման կարգը, հստակեցվել են կոնկրետ սպայական, ենթասպայական ու շարքային կազմերի զինծառայողներին տրվող խրախուսանքների և կարգապահական տույժերի տեսակները, հրամանատարների կարգապահական իրավունքը ենթակա զինծառայողների նկատմամբ խրախուսանք կիրառելիս, կարգապահական խախտումը որակելու և ծառայողական քննություն անցկացնելու պայմանները, ինչպես նաև հրամանատարների կարգապահական իրավունքը ենթակա զինծառայողների նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելիս։ Ներկայացված առաջարկությունների հիման վրա «կարգապահական մեկուսացում» տույժը փոխարինվել է «կարգապահական վաշտ ուղարկելը» կարգապահական տույժով, որն իրենից ներկայացնում է կայազորային սկզբունքով ստեղծված կարգապահական առանձին վաշտերում օրվա խստացված կարգացուցակով ծառայություն։

Օրենքում սահմանվել են նաև կարգապահական խախտման հասկացությունը, կարգապահական խախտումների դրսևորման ձևերը, ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, այդ խախտումների կանխարգելման հնարավորությունները, կարգապահական խախտումների կոնկրետ տեսակները և դրանց համար նախատեսվող կարգապահական տույժերի տեսակները, կանոնակարգվել է զինծառայողի կողմից ծառայության անցման հետ կապված հարցերով, ինչպես նաև իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը բողոքարկելու մասին զեկուցագիր ներկայացնելու, դրանք քննարկելու և լուծում տալու կարգը<sup>10</sup>։

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Արդեն նշվեց, որ պաշտպանական բարեփոխումների միջոցառումները նախանշված են ըստ ռազմական դոկտրինի՝ կարճաժամկետ ու միջնաժամկետ ծրագրերով մինչև 2015 թվականը, որից հետո պետք է լրամշակվի ռազմական դոկտրինը, և բարեփոխումները կներկայացվեն նոր ծրագրային ուղեցույցներով: Ոլորտի՝ գործնականում նկատվող խնդիրներ կարելի է դիտարկել զինված ուժերի կրթական կամ բժշկական ծառայություններ մատուցող զինվորական հաստատությունների ու զորամասերի գործունեության օրենսդրական հիմքերի հստակեցման, զինվորական բնույթի առանձնահատկություններից ելնելով նրանց իրավական կարգավիճակի սահմանման հարցերում: Հայաստանի գործող օրենսդրությանը համապատասխան զինված ուժերի զինվորական հոսպիտալները և կայազորային պոլիկլինիկաներն իրականացնում են զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների անվճար բժշկական օգնություն և սպասարկում, իսկ ռազմական ուսումնական հաստատություններն ապահովում են համապատասխան աստիճանի կրթական ծրագրով զինված ուժերի համար մասնագետների պատրաստումը, սակայն օրենսդրորեն ամրագրված չէ նրանց կազմակերպական-իրավական ձևը, քաղաքացիաիրավական հարաբերություններում նրանց գործունեության սահմանները և շրջանակը: Միաժամանակ, հստակեցված չէ զորամասերի կարգավիճակը, որոնք, չունենալով պետական գրանցում, որոշակի դեպքերում հանդես են գալիս որպես գործատու՝ իրավունք ունենալով պայմանագրային հիմունքներով պաշտոնի նշանակել վարձու աշխատողների, ինչը խնդիրներ է առաջացնում քաղաքացիաիրավական օրենսդրության և ընդհանուր քաղաքականության իրագործման շրջանակներում: Արդյունքում իրավաքաղաքական հենքի առաջնային լուծում պահանջող խնդիրների շարքում կարելի է առանձնացնել պաշտպանական բարեփոխումների ապահովման շրջանակներում զինված ուժերի համապատասխան կառույցների իրավական կարգավիճակի և գործունեության կանոնակարգումը, իրականացվող գործառույթների համապատասխանեցումը օրենսդրության ու քաղաքականության պահանջներին:

Որպես հաջորդ ուղղություն կարելի է ներկայացնել ռազմաքաղական բնագավառում պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկատվության վերանայումը, ծառայողա-

կան գաղտնիք կազմող տեղեկությունների հստակեցումը, ինչի անհրաժեշտությունը բխում է այն հանգամանքից, որ գործող օրենսդրության մեջ հստակ ամրագրված չեն այն տեղեկությունների շրջանակները, որոնք, իրենց բնույթով չհանդիսանալով պետական գաղտնիք, պարունակում են ծառայողական գաղտնիքի տարրեր: Այստեղ անհրաժեշտություն է նկատվում պաշտպանական բնագավառում պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկատվության շրջանակում փոփոխությունների կատարման, մասնավորապես՝ ծառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների տարանջատման ու հստակեցման, դրանց գաղտնագրման եղանակների սահմանման հարցերի շուրջ:

Այսպիսով, ռազմական դոկտրինի մշակումը և պաշտպանական ռազմավարության վերանայումը ստեղծում են բոլոր նախադրյալները երկրի պաշտպանության առանձին ոլորտների արդիականացմանն ուղղված արդյունավետ բարեփոխումներ իրականացնելու համար: Առաջնահերթ բարեփոխումներ են անցկացվում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկման մեխանիզմների զարգացման ուղղությամբ: Ընդ որում, պաշտպանական բարեփոխումների նպատակներն ու տրամաբանությունը հանգեցրին նաև պաշտպանության ոլորտի օրենսդրական բարեփոխումների: Այս ոլորտում գործող օրենքները, որոնք ընդունվել էին տարբեր ժամանակահատվածներում, երբեմն, նույնիսկ, բարոյապես հնացած լինելով, լիարժեքորեն չէին արտացոլում բարեփոխումների ուղղությամբ որդեգրված նպատակները և այդպիսով հնարավորություններ չէին ընձեռում դրանք կյանքի կոչելու համար: Արդյունքում փոփոխություններ և լրացումներ կատարվեցին ՀՀ պաշտպանության բնագավառին առնչվող հիմնական մի շարք օրենքներում, ինչպես նաև ընդունվեցին ամբողջությամբ նորերը, օրինակ՝ ուղղված ՀՀ զինված ուժերում կարգապահության ամրապնդմանն ու այդ հարաբերությունների կարգավորման գործընթացի զարգացմանը:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊՆ պաշտպանության ռազմավարական վերանայում // ՀՀ ՊՆ պաշտոնական կայքը՝ www.mil.am

<sup>2</sup> Ավելի մանրամասն տե՛ս ՀՀ ՊՆ կողմից ներկայացված «Պաշտպանության ռազմավարական վերանայման 2011-2015թթ. ծրագիրը» (հանրային օգտագործման համար) // www.mil.am

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 20-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ, 28.01.2012թ. // <http://www.mil.am/1327666346/page/35>

<sup>4</sup> ՀՀ պաշտպանության նախարարության ներկայիս համակարգը (կառուցվածքը և կանոնադրությունները) սահմանվում է ՀՀ կառավարության 25.12.2008թ. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննչական ծառայության կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատելու, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ», Հայաստանի Հանրապետության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննչական ծառայություն ստեղծելու մասին» թիվ 1554-Ն որոշմամբ (ՀՀ ՊՏ 2009/2, 14.01.2009թ.):

<sup>5</sup> Տե՛ս «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2012/20, 18.04.2012:

<sup>6</sup> Տե՛ս «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2012/20, 18.04.2012:

<sup>7</sup> Տե՛ս «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2012/20, 18.04.2012:

<sup>8</sup> Ներկայումս «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ նախագիծը ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը:

<sup>9</sup> ՀՀ Սահմանադրության և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն՝ բացառապես օրենքներով են սահմանվում կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերը, կարգն ու պայմանները, ֆիզիկական անձանց նկատմամբ պարտականությունները:

<sup>10</sup> Լրացուցիչ տե՛ս «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրը» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2012/20, 18.04.2012:

**РЕЗЮМЕ**

***Политическо-правовые реформы и их прогнозируемые результаты в сфере обороны Республики Армения***

Эффективность оборонительных реформ Республики Армения зависит от успешного решения ряда проблем, в которых, в первую очередь, можно подчеркнуть совершенствование политико-правовой базы сферы. Цели и логика подобных реформ привели к переменам политико-правовых основ в сфере обороны. Действующие законодательные акты, принятые в разные времена, не полноценно отражали основные цели проводимых реформ. В результате были внесены изменения и дополнения в некоторых законах, касающихся оборонительной сферы РА, а также были приняты совершенно новые правовые акты.

**SUMMARY**

***The political and legal reforms and the predictable developments of them in the defence sector of the Republic of Armenia***

The effectiveness of the defense reform of the Republic of Armenia depends on the successful resolution of many problems, in which, first of all, we have to emphasize the legal and political grounds improvement in the defence sector. Such reform aims and rationale entailed legal and political reforms in the defense sector. The current legislation, which were admitted at different times, did not fully reflect the main objectives of the reforms. As a result, changes and additions were made in a set of basic laws related the defense sector of the Republic of Armenia and entirely new ones accepted.

**ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնական,  
Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ  
ՍԱՐԴՈՒ ԵՎ ԶԱՂԱՔԱՅՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Միջազգային իրավունքն արդի դարաշրջանում ազգային օրենսդրության ձևավորման և զարգացման միտումների վրա ընդհանրապես և մարդու իրավունքների բնագավառում մասնավորապես հսկայական ներգործություն ունի: Դեռ ավելին, միջազգային իրավունքի նորմերի փոխակերպումը (տրանսֆորմացիան) ազգային օրենսդրության համակարգի հիմնականում տեղի է ունենում մարդու իրավունքների ոլորտում:

Մարդու իրավունքների բնագավառում միջազգային համագործակցությունը սկսեց ձևավորվել դեռևս Առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո, երբ Ազգերի լիգայի հովանու ներքո կնքվեց պայմանագրերի մի ամբողջ համակարգ, որոնցում նախատեսվում էր ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը:

Սակայն, մարդու իրավունքների և ազատությունների արդի միջազգային չափանիշները ձևավորվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Ներկա ժամանակաշրջանում միջազգային հանրաճանաչ փաստաթղթերում ամրագրված մարդու իրավունքներն ու ազատությունները ընդունված է անվանել միջազգային չափանիշներ (ստանդարտներ)<sup>1</sup>:

Մարդու իրավունքների վերաբերյալ արդի միջազգային բազմաթիվ պայմանագրերի, համաձայնագրերի, պակտերի, հռչակագրերի, կոնվենցիաների, բանաձևերի հիմնաքարը դրեց Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կանոնադրությունը. չնայած ընդհանուր նորմեր է պարունակում մարդու իրավունքների վերաբերյալ, այդուհանդերձ, այդ կարևորագույն փաստաթուղթը յուրօրինակ սահմանադրության դեր խաղաց և կանխո-

րոշեց միջազգային իրավունքի, մասնավորապես մարդու իրավունքների միջազգային իրավական կարգավորման հիմնական ուղղությունները<sup>2</sup>:

Այսպես, ՄԱԿ-ի կանոնադրության ներածական մասում խնդիր է դրվում. «...կրկին հաստատել հավատք մարդու հիմնական իրավունքների, մարդկային անհատականության, արժանապատվության և արժեքավորության, տղամարդու և կնոջ իրավահավասարության, մեծ ու փոքր ազգերի իրավունքների նկատմամբ և ստեղծել պայմաններ, որոնց դեպքում պահպանվում է արդարությունը և հարգանքը պայմանագրերից ու միջազգային իրավունքի այլ աղբյուրներից բխող պարտավորությունների հանդեպ և նպատակ սոցիալական առաջընթացի ու կյանքի բարելավմանը ավելի մեծ ազատության պայմաններում»: Կանոնադրության առաջին հոդվածը կազմակերպության նպատակների շարքին է դասվում «...անկախ ռասայից, սեռից և լեզվից կամ դավանանքից՝ բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի ընդլայնումը և այդ հարցերում միջազգային համագործակցության ձեռքբերումը»:

ՄԱԿ-ի կանոնադրությունը նախատեսում է նաև այդ ընդհանուր նպատակից բխող որոշակի պարտավորություններ: Ըստ կանոնադրության 55-րդ «գ» հոդվածի՝ ՄԱԿ-ը պետք է ըստ ամենայնի աջակցի. «... մարդու հիմնական իրավունքների և ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի ձևավորմանը և դրանց պահպանմանը»: Կանոնադրության հաջորդ հոդվածը (56-րդ) ՄԱԿ-ի անդամ պետություններին պարտավորեցնում է. «Կազմակերպության հետ համաձայնեցված միացյալ և ինքնուրույն միջոցներ ձեռնարկել 55-րդ հոդվածում շարադրված նպատակներին

www.lawinstitute.am

հասնելու համար»:

ՄԱԿ-ի կանոնադրությունը խնդրո առարկայի հարցում որոշակի առումով թերի է, քանի որ չի սահմանում, թե որոնք են «մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները»: Այս բացը լրացնում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը<sup>3</sup>: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան դեռևս 1946թ. փետրվարին որոշում կայացրեց Մարդու իրավունքների միջազգային բիլլ ստեղծելու մասին: Երկու տարի անց ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը դարձավ այդ բիլլի առաջին հիմնադիր փաստաթուղթը:

Հռչակագիրն ունի 30 կետ, որոնցում ամրագրված մարդու իրավունքները պայմանականորեն կարելի է դասակարգել երկու հիմնական խմբի՝ քաղաքացիական ու քաղաքական (3-րդից 21-րդ կետեր), և տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների (22-րդից 28-րդ կետեր): Առաջին խմբի մեջ են կյանքի, ազատության, անձնական անձեռնմխելիության, կտտանքներից և ստրկությունից ազատ լինելու, քաղաքական կյանքին մասնակցելու, սեփականության, ամուսնության իրավունքները և հիմնական ազատությունները՝ համոզմունքների և դրանք ազատորեն արտահայտելու, մտքի, խղճի և կրոնի ազատությունը, խաղաղ հավաքների և ասոցիացիաների ազատությունը:

Իրավունքների երկրորդ խումբն են կազմում սոցիալական ապահովության, աշխատանքի, հանգստի, կրթության, մշակութային կյանքին մասնակցելու և այլ հիմնական իրավունքները<sup>4</sup>:

Հռչակագրի 1-ին կետն ազդարարում է, որ. «բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով. նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պետք է միմյանց հետ վարվեն եղբայրության ոգով», իսկ 2-րդ կետն ազդարարում է, որ. «յուրաքանչյուր մարդ օգտվում է բոլոր իրավունքներից՝ առանց խտրականության»:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հռչակագրի իմպերատիվ և դիսպոզիտիվ նորմերի խնդրի լուսաբանումը: Նշենք, որ, ի տարբերություն իրավունքների բիլլը կազմող մյուս երկու փաստաթղթերի, հռչակագիրը միջպետական պայմանագիր կամ համաձայնագիր չէ: Այն ընդունվել է որպես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձև, որը ըստ այն ընդունողների մտահղացման, չպետք

է պետությունների համար կրեր պարտավորեցնող (իմպերատիվ) բնույթ: Սակայն, հռչակագրի համընդհանուր պաշտպանությունը հաստատվում է աշխարհի բոլոր երկրներում դրա լայն տարածման և գործադրման փաստով, որի ուժով այսօր մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի քննարկման ժամանակ գրեթե ամենուր ընդունված է վկայակոչել հռչակագիրը: Հռչակագրի դրույթներն, ըստ էության, արտացոլվել են բազմաթիվ պետությունների սահմանադրություններում, այդ թվում՝ նաև ՀՀ Սահմանադրությունում: Դրանք տեղ են գտել նաև միջազգային շատ փաստաթղթերում և տարածաշրջանային պայմանագրերում ու կոնվենցիաներում, ինչպես նաև ՄԱԿ-ի բազմաթիվ բանաձևերում:

Պետությունները հռչակագիրը հաճախ վկայակոչում են այլ պետություններին մարդու իրավունքների խախտման մեջ մեղադրելիս՝ դրանով իսկ հաստատելով հռչակագրի նորմերի համապարտադիր (իմպերատիվ) բնույթը<sup>5</sup>:

Իհարկե, Հռչակագիրը, որպես այդպիսին, իրավաբանական պարտադիր փաստաթուղթ չէ, սակայն միջազգայնագետների գերիշխող կարծիքի համաձայն՝ այն ինքնաբերաբար ձեռք է բերել պարտավորեցնող բնույթ և միջազգային հանրության կողմից ընկալվում է որպես միջազգային սովորույթային իրավունքի բաղկացուցիչ մաս:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամփոփված իրավունքները հետագայում տեղ են գտել մի շարք միջազգային պայմանագրերում, հռչակագրերում ու սկզբունքներում: Որպես պարտադիր իրավական նորմեր՝ դրանք առաջին անգամ օգտագործվել են երկու պայմանագրերում՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրերում<sup>6</sup>: Այսօր «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը համալրվել է արդեն ուժի մեջ մտած երկու կամընտիր արձանագրություններով, որոնցից մեկը սահմանում է անհատական բողոքարկման ընթացակարգը, իսկ մյուսի նպատակը մահապատժի վերացումն է:

Ի տարբերություն համընդհանուր հռչակագրի՝ մարդու իրավունքների պայմանագրերը կրում են իրավական պարտադիր բնույթ, որոնց միջոցով կարող է գնահատվել անդամ պետությունների վե-



**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

րաբերմունքն իրենց քաղաքացիների նկատմամբ: Վավերացնելով մարդու իրավունքների պայմանագիրը՝ պետությունները հաշվետու են դառնում միջազգային հանրության, նույն պայմանագիրը վավերացրած մյուս պետությունների, ինչպես նաև իրենց քաղաքացիների և իրենց տարածքներում ապրող մյուս բնակիչների առջև: Որոշ երկրներում, մասնավորապես նորանկախ պետություններից շատերում, միջազգային պայմանագրերին տրվել է ազգային օրենքներին հավասար կարգավիճակ, և դրանց դրույթներն ուղղակիորեն կիրառվել են ազգային դատարաններում: Ոչ անդամ պետությունների համար ևս մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշները հաճախ համոզիչ ուժ են հանդիսանում ազգային օրենքների մեկնաբանման գործում: Պետք է նկատի առնել, որ այսօր գրեթե բոլոր երկրների իրավական համակարգերը ապահովում են հիմնական սահմանադրական իրավունքներից կամ մարդու իրավունքներից օգտվելու հնարավորություն: Խոշտանգումների չենթարկվելու իրավունքն ընդհանուր է բազմաթիվ իրավական համակարգերի համար<sup>7</sup>:

Միջազգային պայմանագրերի վավերացումով պետությունների ստանձնած պարտավորությունները, ընդհանուր առմամբ, կարելի է բաժանել դրական և բացասական պարտավորությունների: Դրական են համարվում այն պարտավորությունները, որոնց համաձայն՝ անդամ պետությունները պետք է ձեռնարկեն որոշակի գործողություններ: Բացասական են համարվում այն պարտավորությունները, ըստ որոնց՝ անդամ պետությունները պետք է ձեռնպահ մնան իրենց իրավասության տակ գտնվող անձանց իրավունքները խախտելուց:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի հոդվածներն ընդգրկում են՝

- խոշտանգումներից, ստրկությունից, բռնի աշխատանքից, կամայական ձերբակալումից կամ կալանքից ազատ լինելու իրավունքը,
- ազատագրված բոլոր անձանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի իրավունքը,
- պայմանագրային պարտավորությունները կատարելու ի վիճակի չլինելու համար ձերբակալումից ազատության իրավունքը,
- ազատ տեղաշարժվելու և բնակության վայրի ընտրության ազատության իրավունքը,
- օրենքով հավասարապես պաշտպանված

լինելու, դատարանների և տրիբունալների առջև հավասար լինելու, քրեական կամ քաղաքացիական քննության ժամանակ երաշխիքներ ունենալու իրավունքը,

- բոլոր անձանց՝ ամենուրեք որպես օրենքին ենթակա անձ ճանաչվելու իրավունքը, ինչպես նաև անմեղ համարվելու իրավունքը, քանի դեռ նրանց մեղավորությունն ապացուցված չէ օրենքով,
  - անձնական կյանքի իրավունքը, ինչպես նաև իր պատվի և արժանապատվության նկատմամբ անօրինական ոտնձգություններից ազատությունը, մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը,
  - կարծիք ունենալու և այն ազատորեն արտահայտելու իրավունքը,
  - խաղաղ հավաքների իրավունքը և ուրիշների հետ միավորումներ կազմելու ազատության իրավունքը,
  - ամուսնության տարիքի հասած տղամարդկանց և կանանց համար ընտանիք կազմելու իրավունքը, ամուսինների հավասար իրավունքներն ու պարտականություններն ամուսնության պահին, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում,
  - երեխաների իրավունքները,
  - պետական կառավարմանը մասնակցելու, ընտրելու և ընտրվելու, հավասարության ընդհանուր պայմաններով պետական ծառայության մտնելու իրավունքները:
- Դաշնագիրն անդամ պետություններից պահանջում է նաև՝
- ձերբակալված անձանց տեղեկացնել ձերբակալման պատճառների մասին,
  - ձերբակալված անձանց շտապ կարգով հասցնել դատավորի մոտ և երաշխավորել պատշաճ ժամկետում դատական քննության անցկացումը կամ ազատ արձակումը,
  - սահմանափակել իր տարածքում օրինականորեն գտնվող օտարերկրացիների վտարումը,
  - արգելել հետադարձ ուժ ունեցող քրեական օրենսդրությունը,
  - օրենքով արգելել պատերազմի քարոզչությունը, ազգային, ռասայական և կրոնական ատելություն քարոզող ելույթները,
  - ապահովել իրենց տարածքներում ապրող էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնությունների պաշտպանությունը:

Ինչպես Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը, այնպես էլ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը հաստատում են բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և դաշնագրում ամրագրված իրավունքներից օգտվելու՝ տղամարդկանց և կանանց հավասար իրավունքը:

Պետության մեջ արտակարգ դրությունների ժամանակ անդամ պետությունները կարող են դաշնագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ կասեցնել որոշ իրավունքներ, սակայն պարտավոր են այդ մասին տեղեկացնել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին՝ պաշտոնապես հայտարարելով արտակարգ դրության մասին և ճշտելով, թե հատկապես որ դրույթներն են կասեցվում: Որոշ դրույթներ ենթակա չեն կասեցման ցանկացած հանգամանքներում: Դրանք են ապրելու իրավունքը, խոշտանգումներից և ստրկությունից ազատ լինելու իրավունքը և պարտքը չվճարելու դեպքում ձեռքակալվելուց ազատ լինելու իրավունքը:

Դաշնագրի իրականացումը վերահսկում է Մարդու իրավունքների կոմիտեն: Մասնակից պետությունները պարտավոր են պարբերաբար զեկույցներ ներկայացնել կոմիտեին՝ դաշնագրի բոլոր դրույթների կենսագործման ուղղությամբ իրենց ձեռնարկած ջանքերի մասին:

«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի հիմքում ընկած է այն կանխադրույթը, ըստ որի՝ արժանապատիվ կյանքով ապրելու իրավունքն անհասանելի կմնա, քանի դեռ բոլոր հիմնական կենսական անհրաժեշտությունները համարժեքորեն և հավասարապես մատչելի չեն յուրաքանչյուր մարդու համար:

Վերը նշված միջազգային պակտերը, անմիջականորեն չկարգավորելով անձի իրավական կարգավիճակը, այնուամենայնիվ, մեծ ներգործություն ունեն ներպետական օրենսդրության վրա, քանզի մասնակից պետությունները պարտավոր են իրենց ներքին օրենսդրությունը համապատասխանեցնել այդ պակտերում ամրագրված միջազգային չափանիշներին:

Մարդու իրավունքների միջազգային բիլլը մարդու իրավունքների ուղղությամբ ՄԱԿ-ի ողջ աշխատանքի բարոյական և իրավական հիմքն է: Այն ամփոփում է մարդու իրավունքների համընդ-

հանուր չափանիշները և հիմք է հանդիսացել մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի ավելի քան 50 այլ կոնվենցիաների, հռչակագրերի ընդունման և միջազգային նվազագույն կանոնների ու սկզբունքների հարցերով մարմինների ստեղծման համար:

Մարդու իրավունքների միջազգային ստանդարտները կարևոր նշանակություն ունեն իրավունքների սահմանափակման իրավաչափության հիմքերի որոշարկման և ազգային իրավական համակարգերում մարդու իրավունքների մասին օրենսդրության կատարելագործման համար: Այդ է պատճառը, որ 2002 թվականի մարտի 20-ին, վավերացնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան, Հայաստանի Հանրապետությունը միացել է մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգին և ստանձնել ոչ միայն Կոնվենցիայում ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության, այլ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավագործության ճանաչման պարտավորություններ:

2002 թվականի ապրիլի 26-ին Հայաստանի Հանրապետությունը Կոնվենցիայի վավերացման վերաբերյալ վավերագիրն ի պահ է հանձնել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին, և Կոնվենցիայի 59-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա այդ պահից այն Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել, և Եվրոպական դատարանն իրավասու է դարձել քննելու Կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով պաշտպանվող իրավունքների ու ազատությունների՝ Հայաստանի կողմից ենթադրյալ խախտումների վերաբերյալ բողոքները:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես ճանաչել և իրավաբանորեն ամրագրել է մարդու անօտարելի իրավունքներն ու ազատությունները, որպիսի հանգամանքը հնարավորություն է տվել 2005 թվականի նոյեմբերի 27-ին հանրաքվեի միջոցով փոփոխված ՀՀ Սահմանադրության մեջ առավել լիարժեքորեն ամրագրել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ դրանով իսկ մարդու բնական իրավունքներին ու ազատություններին հաղորդելով գործող օրենսդրությամբ ամրագրված օբյեկտիվ «դրական» իրավունքի տեսք: Մարդու և քաղաքացու իրավունքների վերաբերյալ սահմանադ-

րական դրույթները խարսխված են վերը թվարկված միջազգային հանրաճանաչ փաստաթղթերի պահանջների հիման վրա, ինչը կարևոր երաշխիք է հանդիսանում մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության համար:

<sup>1</sup> Տե՛ս Գորշկով Ս. Ա. Стандарты Совета Европы по правам человека и российское законодательство. М., 2001.

<sup>2</sup> Տե՛ս Երիցյան Ա. Գ. Права и свободы человека и гражданина в демократическом государстве: система, институты, юридический механизм реализации и защиты. М., 1998. С. 52-69.

<sup>3</sup> Տե՛ս Կրեմլի իրավունքներն ու դատավարությունը: Միջազգային փաստաթղթերի ժողովածու. Երևան, 1996:

<sup>4</sup> Տե՛ս Լուկաշևա Ե. Ա. Человек, право, цивилизации: нормативно-ценностное измерение. М., 2009, С. 50.

<sup>5</sup> Տե՛ս Оль П. А., Ромашов Р. А., Пищенко А. Г., Шукшина Е. Г. Государство, общество, личность: проблемы совместимости. М., 2005. С. 35-37.

<sup>6</sup> Տե՛ս Международные акты о правах человека. Сборник документов. М., 2005.

<sup>7</sup> Տե՛ս Бондарь Н. С. Гражданин и публичная власть. Конституционное обеспечение прав и свобод в местном самоуправлении. М., 2004. С. 39-41.

## РЕЗЮМЕ

### *Основные международные документы о правах и свободах человека и гражданина*

В статье обобщается неоспоримая истина о том, что конституционные права и свободы человека и гражданина, как правило, неотъемлемы и неразделимы, считаются высшей ценностью общества, определяют основные направления правовой политики государства. Международные стандарты прав человека имеют важную роль для определения оснований правомерности ограничений прав и совершенствования законодательства о правах человека в национальных правовых системах.

Автор также делает вывод о том, что Республика Армения официально признала и юридически закрепила неотъемлемые права и свободы человека, что дало возможность в измененной путем референдума Конституции РА наиболее полностью закрепить основные права и свободы человека и гражданина.

## SUMMARY

### *International basic documents about the rights and freedoms of man and citizen*

In this article the author ascertains the undeniable truth that the constitutional rights and freedoms of individual /man/ and citizen, as a rule, are inalienable and indivisible, are considered as the highest value of the society and define the basic directions of legal policy of the state. International standards of human rights play an important role in defining the legitimacy of the grounds of restriction of rights and in the improvement of human rights legislation in the national legal systems.

The author also concludes that the Republic of Armenia to its honor has officially recognized and legally stipulated inalienable human rights and freedoms, which has made possible to set forth the fundamental rights and freedoms of individual /man/ and citizen most fully in the Constitution, amended by referendum.

### ԳՈՒՐԳԵՆ ՍԱԴՈՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի  
գրասենյակի փաստաբան  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական  
իրավունքի ամբիոնի հայցորդ

## ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ոստիկանությունում ծառայության կազմակերպման իրավական ապահովման հիմնախնդիրներից է ոստիկանության ծառայողների կադրային կազմի ընտրությունը և պահպանումը: Կադրային կայուն քաղաքականության հիմքը կազմում են ոստիկանության ծառայողների ընտրության և ծառայողական-պաշտոնային հաջող առաջխաղացումների վերաբերող հարցերը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը, ՀՀ-ն հռչակելով ժողովրդավարական պետություն, սահմանում է, որ ՀՀ 18 տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:

Հիմնական օրենքը, միաժամանակ, ամրագրում է, որ քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք, և այդ ծառայության սկզբունքներն ու կազմակերպման կարգը սահմանվում են օրենքով<sup>1</sup>:

Ոստիկանությունում ծառայության անցնելու իրավունքը պետական կառավարմանը անմիջականորեն մասնակցելու և հանրային ծառայության անցնելու՝ քաղաքացիների սահմանադրական իրավունքների մի մասն է: Այն 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիներին պետական ծառայության անցնելու հավասար հնարավորություն է տալիս: Սակայն, այս իրավունքը իրենից ներկայացնում է հավասար իրավաբանական հնարավորություն, բայց ոչ դրա փաստացի իրականացում: Դա չի նշանակում, որ 18 տարին լրացած քաղաքացիները ցանկացած պահի իրավունք ունեն, իսկ պետական մարմինները պարտավոր են անհապաղ

նրանց նշանակել իրենց ցանկացած պաշտոններում:

Պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառնությունների արդյունավետ իրականացման, նրանց բնականոն գործունեության համար անհրաժեշտ է, որ նրանք ունենան հատուկ պատրաստված և որոշակի պայմանների բավարարող ծառայողական անձնակազմ, ուստի, դրա ապահովման համար, ելնելով պետական ծառայության տեսակների առանձնահատկություններից, ՀՀ օրենսդրությունը պետական համապատասխան ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար սահմանում է այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում անձն առանց խտրականության իրավունք ունի, և այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում անձն իրավունք չունի զբաղեցնելու համապատասխան պետական ծառայության պաշտոնը: Օրենքով ոստիկանությունում ծառայության համար ներկայացվող այդ հանգամանքների ամբողջությունը կազմում են ոստիկանությունում ծառայության պաշտոն զբաղեցնելու պայմանները: Դրա տակ նկատի են առնվում այն պահանջները, որոնք ներկայացվում են ոստիկանության ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու ցանկություն ունեցող անձին<sup>2</sup>:

ՀՀ ոստիկանությունում ծառայության՝ որպես մասնագիտական գործունեության, ունեցած յուրահատկությամբ պայմանավորված՝ ՀՀ օրենսդրությունը ոստիկանությունում ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար սահմանում է նախ այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում անձն առանց խտրականության իրավունք ունի, և ապա նաև այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում անձն իրավունք չունի զբաղեցնելու համապատասխան պետական ծառայության պաշտոն: Օրենքով ոստիկանությունում

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նում ծառայության համար ներկայացվող այդ հանգամանքների ամբողջությունը կազմում են ոստիկանությունում ծառայության պաշտոն զբաղեցնելու պայմանները: Դրա տակ նկատի են առնվում այն պահանջները, որոնք օրենքով սահմանված կարգով ներկայացվում են ոստիկանության ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու ցանկություն ունեցող անձին:

Այդ պայմանները նպատակ են հետապնդում ոստիկանությունը համալրել բանիմաց, մասնագիտական պարտականությունների կատարմանն ունակ ծառայողներով, ինչպես նաև խոչընդոտել և կանխել ռիսկային հանդիսացող անձանց ներթափանցումը ոստիկանության համակարգ: Այդ նպատակների իրականացման ապահովմամբ են մեծապես պայմանավորված ոստիկանության ծառայության խնդիրների արդյունավետ իրականացումը, ոստիկանության ծառայության՝ որպես հանրապետական գործադիր մարմնի, և ոստիկանության ծառայողի՝ հասարակության շրջանում ունեցած հեղինակության բարձրացումը:

Այսպես, «Ոստիկանությունում ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից՝ ոստիկանությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության մինչև 30 տարեկան այն քաղաքացին, որը՝

1) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի քաղաքացիների և այն քաղաքացիների, ովքեր ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից հոր (մոր) կամ հարազատ եղբոր (քրոջ)՝ ՀՀ պաշտպանության կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ զոհված լինելու և ընտանիքի միակ արու զավակը լինելու՝ կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու, մինչև ՀՀ քաղաքացիությունն ընդունելն օտարերկրյա պետությունների զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու, գիտական աստիճան /գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր/ ունենալու և մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ զբաղվելու կամ ընտանեկան դրության բերումով պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստացած ու

այդ իրավունքը մինչև 27 տարեկանը լրանալը չկորցնելու հիմքերով,

2) իր անձնական հատկանիշներով, առողջական վիճակով և ֆիզիկական պատրաստականությամբ ունակ է կատարելու ոստիկանության ծառայողի պարտականությունները:

Առանձին մասնագիտություններով ոստիկանությունում պաշտոնի կարող են նշանակվել «Ոստիկան» և «Ոստիկան սպա» մասնագիտական որակավորում չունեցող քաղաքացիները՝ վերապատրաստման արդյունքներով: Այդ մասնագիտությունների, մասնագիտական կրթության որակավորման աստիճանների և պաշտոնների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ոստիկանության ծառայողին ներկայացվող ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է ՀՀ կառավարությունը:

Ոստիկանությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից,

3) դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար,

4) դատապարտվել է անզգույշ հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

5) որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում:

Ոստիկանությունում ծառայության անցնելու հավակնորդ անձի անձնական հատկանիշները կարող են ստուգվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Ոստիկանությունում ծառայության անցնող քաղաքացիները, ինչպես նաև ոստիկանության ծառայողները ՀՀ կառավարության սահմանած կարգով անցնում են հոգեֆիզիոլոգիական հետազոտություն, թեստավորում՝ ալկոհոլից, քմրամիջոցներից և հոգեմետ նյութերից կախվածությունը ստուգելու նպատակով:

Ոստիկանությունում ծառայության անցնելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը և ոստիկանությունում ծառայության անցնելու հետ

կապված որոշումներ ընդունելու կարգը սահմանվում են պետական կառավարման մարմնի ղեկավարի հրամանով:

Ոստիկանությունում ծառայություն անցնելու համար ներկայացվող պահանջները վերը նշված բովանդակությունն են ստացել 2011 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունված «Ոստիկանությունում ծառայության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով մինչ այդ ոստիկանությունում ծառայության անցնելու պայմանները սահմանելիս օրենքը, բացի պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու չափանիշից, պահանջում էր, որ ոստիկանությունում ծառայության անցնող քաղաքացիները տիրապետեն հայոց լեզվին և իրենց գործնական, անձնական, բարոյական հատկանիշներով, կրթությամբ, առողջական վիճակով և ֆիզիկական պատրաստակամությամբ ունակ լինեն կատարելու ոստիկանության ծառայողի պարտականությունները: Օրենսդիրը միևնույն ժամանակ նախատեսում էր, որ առանձին մասնագիտություններով ոստիկանությունում ծառայության անցնելու համար կարող են սահմանվել տարիքային ավելի բարձր սահմանափակումներ: Այդ մասնագիտությունների ցանկը և դրանց համար նախատեսված տարիքային սահմանափակումները սահմանելու իրավասությունը վերապահված էր ՀՀ կառավարությանը:

Մեր կարծիքով, ներկայումս ոստիկանությունում ծառայության անցնելու համար ներկայացվող պահանջների համակարգը նախկինի համեմատ ունի ինչպես առավելություններ, այնպես էլ որոշ թերություններ:

Կարծում ենք՝ ոստիկանությունում ծառայության անցնելու պայմանների համակարգում ինչպես նախկինում, առավել ևս ներկայումս հիմնախնդիր է հանդիսանում ծառայության անցնելու համար օրենքով տարիքային սահմանափակման նախատեսելու հարցը:

Ի տարբերություն հանրային ծառայության որոշ տեսակների, որոնց դեպքում օրենսդիրը որպես ծառայության անցնելու համար անհրաժեշտ պայման նախատեսում է տարիքային նվազագույն ցենզ, այն է՝ 18 տարին լրացած լինելը, ոստիկանությունում ծառայության անցնելու համար օրենքը, նշելով, որ ՀՀ ոստիկանությունում ծառայության կարող են անցնել մինչև 30 տարեկան քաղաքացիները, սահմանում է տարիքային առավելա-

գույն ցենզը: Իրավական նման կարգավորման դեպքում, հաշվի առնելով այն, որ ոստիկանությունում ծառայության կարող են անցնել նաև իգական սեռի քաղաքացիները, որոնց դեպքում խոսք չի կարող լինել պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու մասին, և այն, որ ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններում ծառայության կարող են անցնել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող քաղաքացիները, ինչպիսի պայմաններում չի բացառվում, որ ոստիկանությունում ծառայություն անցնելու հավակնորդություն ներկայացնեն 16-18 տարեկան միջնակարգ կրթություն ունեցող ՀՀ իգական սեռի քաղաքացիները, նպատակահարմար է օրենքով սահմանել նաև ոստիկանությունում ծառայության անցնելու տարիքային նվազագույն՝ 18 տարեկանը լրացած լինելու ցենզը:

Ավելին, կարծում ենք, որ որևէ կերպ հիմնավորված չէ «Ոստիկանությունում ծառայության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 08.12.2011թ-ի ՀՀ օրենքով ոստիկանությունում ծառայության անցնելու համար ներկայացվող պահանջները սահմանելիս բոլոր մասնագիտություններով ծառայության անցնելու համար իմպերատիվ կերպով որպես առավելագույն տարիքային ցենզի 30 տարեկանի սահմանումը:

Այս առթիվ, մեր կարծիքով, նախկինում առավել ճիշտ մոտեցում էր ցուցաբերված հիմնախնդրին, երբ սահմանվում էր, որ առանձին մասնագիտություններով ոստիկանությունում ծառայության անցնելու համար կարող են սահմանվել ավելի բարձր տարիքային սահմանափակումներ: Առանձին մասնագիտություններով ոստիկանությունում ծառայություն անցնելու համար համաձայն «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ կառավարության որոշմամբ որպես առավելագույն տարիք սահմանված էր մինչև 42 տարեկանը<sup>3</sup>:

Օրենսդիրի կողմից ոստիկանությունում ծառայության անցնելու համար ընդհանուր մինչև 30 տարեկան լինելու վերաբերյալ պահանջի սահմանումը, չնայած նրան, որ նպատակ է հետապնդում ոստիկանության ծառայության թափուր պաշտոնները համարել հնարավորինս երիտասարդ և հեռանկարային կադրերով, այնուամենայնիվ, կարծում ենք, արդյունավետ չէ, և անհարժեշտ է

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

այստեղ կիրառել Ռուսաստանի Դաշնության պրակտիկան՝ որպես առավելագույն տարիքային ցենզ սահմանելով 35 տարեկանը:

Բացի այդ՝ կարծում ենք, որ ոստիկանության համակարգը բանիմաց կադրերով համալրելուն կնպաստի ոստիկանության ծառայության մասին ՀՀ օրենքով սահմանելը, որ ոստիկանությունում ծառայության անցնելու վերը նշված տարիքային սահմանափակումները չեն տարածվում նախկինում ոստիկանությունում որոշակի ժամկետով (մեր կարծիքով, առավելագույնը 30 տարեկանը ենթադրող մասնագիտությունների համար 7 տարվա, իսկ 42 տարեկանը ենթադրող մասնագիտությունների համար 15 տարվա) ոստիկանությունում ծառայության ստաժ ունեցող քաղաքացիների վրա, ովքեր ոստիկանությունում ծառայությունից ազատվել են օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից անձնական նախաձեռնությամբ գրավոր դիմումի հիման վրա և սահմանված կարգով կադրերի ռեզերվից հանվելու հիմքերով:

Ոստիկանությունում, ինչպես նաև պետական ծառայության այլ տեսակներում ծառայության անցնելու պայմանների համեմատական հետազոտության արդյունքում պարզվում է, որ օրենսդիրը ծառայության անցնելու պայմանների առումով (առանձին բացառություններով) հիմնականում ցուցաբերել է միատեսակ մոտեցում: Այս առումով ոչ իրավաչափ մոտեցում է դրսևորվել միայն ՀՀ դատախազության համակարգում և ՀՀ պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի՝ քննիչի, պաշտոնում պետական ծառայության անցնելու համար ներկայացվող արգելքներում որպես այդպիսին ոչ արդարացնող հիմքով անձի նկատմամբ հարուցված քրեական հետապնդման դադարեցված լինելը սահմանելը: Այս հիմքով քաղաքացիների՝ օրենքով սահմանված կարգով հանրային ծառայության իրավունքի անցնելու սահմանադրական իրավունքի սահմանափակումը հակասում է ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածով սահմանված անմեղության կանխավարկածի սկզբունքին, որի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Ակնհայտ է, որ անմեղ անձանց միջև այդ հիմքով ընդհանրապես, առավել ևս հանրային ծառայության անցնելու ընթացքում,

տարբերակված մոտեցում ցուցաբերելն անթույլատրելի է:

Ոստիկանությունում ծառայության անցնելու համար օրենքով արգելքների սահմանման ընթացքում առկա հաջորդ թերությունը, մեր կարծիքով, կապված է այն հանգամանքի հետ, որ օրենքը որպես ոստիկանությունում ծառայություն անցնելու արգելք չի նախատեսում, որ ոստիկանությունում ծառայության չեն կարող անցնել այն անձինք, ովքեր դատարանի դատավճռով ազատվել են պատժի կրումից ոչ արդարացման հիմքով: Այս եզրահանգման համար հիմք է հանդիսանում այն, որ օրենսդիրը ոստիկանությունում ծառայությունից ազատելու հիմքեր սահմանելիս նշել է, որ ծառայողները ոստիկանությունում ծառայությունից ազատվում են նրանց նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, այդ թվում՝ դատարանի դատավճռով ոչ արդարացման հիմքով պատժից ազատվելու կամ պատիժը կրելը հետաձգելու դեպքում<sup>4</sup>:

Առկա թերությունն ակնհայտ է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նորմի համատեքստում, համաձայն որի՝ դատավաճություն չունեցող են համարվում այն անձինք, ովքեր դատարանի դատավճռով դատապարտվել են առանց պատիժ նշանակելու կամ դատարանի դատավճռով ազատվել են պատիժը կրելուց, կամ պատիժը կրել են այնպիսի արարքի համար, որի հանցավորությունն ու պատժելիությունը վերացված է օրենքով: Ակնհայտ է, որ նշված հանգամանքի առկայությունը, որի առաջացման հետ կապվում է ոստիկանությունում ծառայությունից ազատումը, միանշանակ, պետք է արգելք հանդիսանա ոստիկանությունում ծառայության անցնելու համար: Հակառակ դեպքում իրավական գործող կարգավորման պայմաններում ստացվում է, որ անձին, որը դատարանի դատավճռով ոչ արդարացման հիմքով ազատվել է դատավորությամբ կատարած հանցագործության համար պատժի կրումից, չի արգելվում ոստիկանությունում ծառայության անցնել այն դեպքում, որ ոստիկանությունում ծառայող անձը նման կարգավիճակում հայտնվելու դեպքում ազատվում է ծառայությունից:

Ոստիկանությունում ծառայության անցնող անձինք ՀՀ պետական դրոշի առջև ՀՀ կառավարության սահմանած կարգով տալիս են երդում:

Ոստիկանությունում ծառայության մասին

www.lawinstitute.am

ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության ծառայող է համարվում ՀՀ այն քաղաքացին, ով ծառայում է ոստիկանությունում, տվել է ոստիկանության ծառայողի երդում, զբաղեցնում է ոստիկանության ծառայության որևէ խմբի պաշտոն և ունի ոստիկանության կամ զինվորական կոչում կամ օրենքով սահմանված կարգով գտնվում է ոստիկանության կադրերի ռեզերվում կամ կադրերի գործող ռեզերվում:

Ոստիկանության ծառայող են համարվում նաև ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատություններում պետական պատվերի շրջանակներում սովորող (այսուհետ՝ սովորող), ինչպես նաև ՀՀ կամ օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություն ՀՀ ոստիկանության կողմից գործուղված առկա ուսուցման ձևով սովորող ՀՀ քաղաքացիները:

Իրավական այս նորմի բովանդակությունից բխում է, որ անձն առաջին դեպքում ոստիկանությունում ծառայողի կարգավիճակ է ձեռք բերում միաժամանակ մի շարք պայմանների բավարարելու դեպքում: Վերջինս նախ պետք է հանդիսանա ՀՀ քաղաքացի, ապա ծառայելիս լինի ոստիկանությունում, տված լինի երդում, զբաղեցնի ոստիկանության որոշ խմբի պաշտոն, ունենա ոստիկանության կամ զինվորական կոչում կամ օրենքով սահմանված կարգով գտնվի ոստիկանության կադրերի կամ կադրերի գործող ռեզերվում:

Ոստիկանության կոչումների շնորհման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 26.12.2012թ-ի թիվ 2159-Ն որոշմամբ սահմանված ոստիկանության կոչումների շնորհման կարգի 4-րդ կետի համաձայն՝ ոստիկանությունում ծառայության անցնող քաղաքացուն պաշտոնի նշանակման հրամանով միաժամանակ շնորհվում է համապատասխան կոչում: Ոստիկանության ուսումնական հաստատություններում առկա ուսուցման ձևով սովորող քաղաքացուն կոչում շնորհվում է որպես սովորող հրամանագրվելու մասին հրամանով: ՀՀ կամ օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություն ոստիկանության կողմից գործուղված առկա ուսուցման ձևով սովորող ՀՀ քաղաքացուն կոչում շնորհվում է գործուղման մասին հրամանով:

Ոստիկանությունում ծառայության անցնող անձանց երդում տալու կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 31.10.2002թ-ի թիվ 1728-Ն

որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի համաձայն՝ ոստիկանության ծառայողի երդում տալիս են՝

ա) ոստիկանության կրտսեր, միջին, ավագ և գլխավոր խմբի պաշտոններում առաջին անգամ ընդունվող ծառայողները՝ համապատասխանաբար վերապատրաստման և ուսումնական փորձաշրջանի արդյունքներով պաշտոնի նշանակվելուց ու ծառայության վայր ներկայանալուց հետո՝ 1 ամսվա ընթացքում,

բ) ոստիկանության ուսումնական հաստատություններում սովորողներն ուսումնական հաստատությունում որպես սովորող հրամանագրվելու օրվանից մեկ ամիս հետո՝ 15-օրյա ժամկետում, իսկ պայմանագրային հիմունքներով այլ պետությունների ուսումնական հաստատություններ ուսումնառության ուղարկվող սովորողները՝ միջգերատեսչական կամ միջկառավարական պայմանագրով նախատեսված ժամկետում,

գ) զինված ուժերի, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր մարմինների և դատախազության ծառայողները՝ ոստիկանության թափուր պաշտոններում նշանակվելուց հետո՝ 1 ամսվա ընթացքում,

դ) երդումը տրվում է մեկ անգամ. այն չի կրկնվում հետագայում (ծառայությունը փոխելիս, աշխատանքում վերականգնվելիս, կրկին ոստիկանությունում ծառայության նշանակվելիս և այլն):

Իրավական կարգավորման նման պայմաններում ոստիկանությունում ծառայության անցնող ՀՀ քաղաքացին, իրավասու պաշտոնատար անձի հրամանով նշանակվելով ոստիկանությունում ծառայության պաշտոնում, ունենալով ոստիկանությունում ծառայության կոչում, որոշակի ժամանակահատված՝ մինչև երդում տալը, կարող է իրականացնել իր ծառայողական լիազորությունները, սակայն անհասկանալիորեն չհամարվել ոստիկանության ծառայող: Այս թյուրիմացությունը, կարծում ենք, կարելի է վերացնել իրավական կարգավորման հետևյալ երկու ձևերից մեկը կիրառելով.

ա) սահմանելով, որ ոստիկանությունում ծառայողը պաշտոնը ստանձնում է՝ ոստիկանության ծառայության երդում տալով.

բ) իրավական կարգավորմամբ ոստիկանության ծառայողի հասկացությունը վերջինիս կողմից երդում տալու հանգամանքի հետ չկապե-



լով:

Ոստիկանությունում ծառայողի այս հասկացության հաջորդ թերությունը հանդիսանում է այն, որ ոստիկանությունում ծառայողի հասկացությունը պայմանավորվում է անձի՝ ոստիկանությունում ծառայելու հանգամանքի հետ, մինչդեռ ակնհայտ է, որ հնարավոր չէ ոստիկանության ծառայող հանդիսանալ և չծառայել ոստիկանությունում: Կարծում ենք, որ հասկացությունը սահմանելիս այդ, այսպես կոչված, պարտադիր տարրի մատնանշումն ավելորդ է:

Այսպիսով, ոստիկանությունում ծառայության անցնելու ընթացքում առաջացող հարաբերությունների իրավական ներկա կարգավորումը ընդհանուր առմամբ ապահովում է պետական հատուկ ծառայության այս ոլորտում հանրային ծառայության կայունության, օրենքի առջև հանրային ծառայողների իրավահավասարության, քաղաքա-

ցիների համար իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան հանրային ծառայության հավասար մատչելիության, հանրային ծառայողների արհեստավարժության, ազնվության, պատասխանատվության զգացումի և մյուս սկզբունքների իրացումը: Միևնույն ժամանակ կարծում ենք, որ դրան վերաբերող վերը նշված հիմնախնդիրների հաղթահարման համար ներկայացվող առաջարկների քննարկումն ու գործնական կիրառումը կնպաստի ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ծառայությունը բանիմաց, իրենց ծառայողական լիազորություններն առավել արդյունավետ իրականացնելու ընդունակ կադրերով:

<sup>1</sup> ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀ ՊՏ 2005 (հատ. թող.), 05.12.2005, հոդվածներ 1, 30 և 30.2:

<sup>2</sup> Տե՛ս Ноздрачев А.ф. Государственная служба. 1999г. Москва. С. 317.

<sup>3</sup> Տե՛ս «Ոստիկանությունում ծառայության անցնելու համար առանձին մասնագիտությունների ցանկը և դրանց համար նախատեսված առավելագույն տարիքային սահմանափակումները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 05.12.2002թ.-ի թիվ 1914-Ն որոշումը, ՀՀ ՊՏ 2002.12.25/57 /232/:

<sup>4</sup> Տե՛ս «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 45, մաս 1-ին, կետ 9:

## РЕЗЮМЕ

### *Организационные правовые проблемы обеспечения кадрового состава полиции Республики Армения*

Как в каждом государстве, так и в Республике Армения, сознание огромной роли личных, профессиональных и моральных качеств государственных служащих в эффективном решении проблем, стоящих перед государством обуславливает государственную кадровую политику.

Эта политика включает в себя весь сектор публичной службы, в том числе и сектор особого вида государственной службы в полиции.

В статье представлены организационные правовые проблемы отбора и удержания сотрудников полиции и предложены пути для их преодоления.

## SUMMARY

### *The Legal and Organizational Issues of Manpower Policy at the RA Police*

As is the case in all states, the manpower policy pursued by the country is well conditioned by the immense role the personal, professional and moral values play in the effective solution of the problems confronting the Republic of Armenia. The policy encompasses all the spheres of public activity including the police service which is regarded a special type of state service.

The current work highlights the organizational and legal issues arising in the selection of police workers and suggests solutions to overcome them.

### ՎԱՀԵ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատավորի օգնական  
Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության  
ամբիոնի հայցորդ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանում ժողովրդավարական արժեքա-  
յին համակարգի ինստիտուցիոնալիզացիան թե-  
լադրեց համարժեք քաղաքական համակարգի կա-  
յացում և կադրային քաղաքականության իրակա-  
նացում ժողովրդավարական չափանիշներին հա-  
մապատասխան: Այդ իսկ պատճառով քաղաքացի-  
ական ծառայության կայացման, ժողովրդավարա-  
կան, իրավական և սոցիալական պետության գոր-  
ծառնությունների արդյունավետ իրականացման և քա-  
ղաքացիական հասարակության ձևավորման գոր-  
ծում առանցքային նշանակություն ունի պետական  
կադրային քաղաքականության արդյունավետ  
իրականացումը՝ սկսած պրոֆեսիոնալ պատ-  
րաստվածությամբ, բարեխիղճ և բարձր բարոյա-  
կանությամբ աշխատողներով համալրումից մինչև  
նրանց պաշտոնից ազատման հետ կապված հա-  
րաբերությունների մասով քաղաքականության  
մշակումը, իրականացումը և դրա իրավական կար-  
գավորումը:

Անվիճելի է, որ ժամանակակից պայմաննե-  
րում ցանկացած կազմակերպության գործունեու-  
թյան արդյունավետությունն ամենից առաջ կախ-  
ված է գլխավոր ռեսուրսի՝ կադրերի արդյունավետ  
կառավարումից: Ժամանակակից կառավարումը  
կազմակերպությունների հիմնական կառուցված-  
քում շատ է կարևորում «մարդկային գործոնը»<sup>1</sup>:  
ԱՄՆ-ի հիմնադիր հայրերից մեկը՝ Թ. Ջեֆերսոնը  
(1743-1826), համարում էր, որ գործադիր իշխանու-  
թյան հիմնական պարտականությունը ճիշտ մար-  
դուն ճիշտ տեղում դնելն է: Բնականաբար, նա այս-  
տեղ նկատի ուներ պաշտոնների նշանակումը և  
կադրային ճիշտ քաղաքականությունը<sup>2</sup>, իսկ ԱՄՆ-  
ի 26-րդ նախագահ Թեոդոր Ռուզվելտը համարում  
էր, որ լավագույն գործադիրը նա է, ով բավական  
գիտակից է լավ մարդիկ ընտրելու համար, ովքեր  
կկատարեն այն, ինչ ինքն է ուզում, և բավական

ինքնատիրապետում ունի նրանց չխառնվելու հա-  
մար, երբ նրանք անում են դա<sup>3</sup>:

Այդուհանդերձ, արդյունավետ գործող պետա-  
կան կառավարման համակարգ և գրավիչ քաղա-  
քացիական ծառայություն ունենալու համար բա-  
վականաչափ թվաքանակի պրոֆեսիոնալ և հմուտ  
մասնագետներ ունենալը բավարար չէ, այլ անհրա-  
ժեշտ են նաև համապատասխան ինստիտուցիո-  
նալ կառույցներ՝ ապահովելու, որ համապատա-  
խան օրենսդրությամբ (հատկապես սահմանադ-  
րությամբ և քաղաքացիական ծառայության օրեն-  
քով) սահմանված սահմանադրական և պետական  
ծառայության արժեքները գործնականում հարգ-  
վեն և իրագործվեն:

Ինչպես հայտնի է, կառավարումը ենթադրում  
է օբյեկտի և սուբյեկտի առկայություն, իսկ տվյալ  
դեպքում կառավարման օբյեկտ է հանդիսանում  
քաղաքացիական ծառայությունը՝ որպես մասնա-  
գիտական գործունեության ոլորտ, իրավական, սո-  
ցիալական և կազմակերպչական ինստիտուտ, պե-  
տական ծառայողների և պետության միջև հարա-  
բերությունների համակարգ: Վերը նշվածի հետ  
կապված մասնագիտական գրականությունում առ-  
կա են երկու հակադիր մոտեցումներ՝

1. Քաղաքացիական ծառայության կառավա-  
րումը դիտարկվում է որպես քաղաքացիական ծա-  
ռայողների գործունեության կառավարում՝ հաշվի  
չառնելով քաղաքացիական ծառայության մյուս  
կողմերը:

2. Շեշտադրումը տեղափոխվում է քաղաքա-  
ցիական ծառայության սուբյեկտի վրա՝ քաղաքա-  
ցիական ծառայողների գործունեությունից ան-  
ջատված<sup>4</sup>:

Քաղաքացիական ծառայողների մասնագի-  
տական գործունեության կառավարման սուբյեկտ-  
ներ են հանդիսանում հիմնականում վերադաս դե-

www.lawinstitute.am

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կավարները՝ պաշտոնների հիերարխիային համապատասխան պաշտոնատար անձինք (աշխատակազմի ղեկավար), իսկ հանրապետական մակարդակում՝ պետական մարմինները (խորհուրդ, նախարարություն և այլն): Վարչական կառավարման գրականության մեջ պետական ծառայության կառավարման մարմինները ընդունված է դիտարկել հատուկ պետական մարմիններ կամ նրանց ստորաբաժանումներ, որոնց իրավասության շրջանակում է հասարակական զարգացումներին զուգընթաց պետական ծառայության համակարգի զարգացման ապահովումը: Ընդհանրապես առանձնացվում են քաղաքացիական ծառայության ապահովման մարմին և քաղաքացիական ծառայության կառավարման մարմին հասկացությունները: Եթե առաջինի խնդիրն է հանդիսանում տվյալ պետական մարմնի յուրահատկություններին համապատասխան քաղաքացիական ծառայության համակարգի իրավական նորմերի, հրամանների, կարգադրությունների կատարման կազմակերպումը կամ կատարումը, ապա երկրորդը՝ «պետական ծառայության կառավարման մարմինը, պետական մարմին է, որի կոչումը հասարակության զարգացմանը համապատասխան պետական ծառայության հարաբերությունների համակարգի զարգացումն է, այդ թվում՝ հասարակական կոնկրետ պահանջներին համապատասխան պետական ծառայության իրավասության սահմանների, դրա տեսակների և ոլորտների սահմանումը, պետական ծառայության անձնակազմի կառավարման կազմակերպումը, պետական ծառայության բարեփոխումների կարգի, պայմանների և գործընթացների ապահովումը, պետական ծառայողների պրոֆեսիոնալիզմի և իրազեկության բարձրացումը»<sup>5</sup>:

Քաղաքացիական ծառայության կադրային քաղաքականության միջոցով է ստեղծվում կադրային այնպիսի ներուժ, որը թույլ է տալիս ապահովել պետության, պետական մարմինների արդյունավետ գործունեությունն ու զարգացումը, և որը «կարող է դիտարկվել որպես ելակետային գործոն՝ չափելու համար պետական իշխանության արդյունավետությունը և ապահովելու հասարակության մեջ բարեփոխումների գործընթացի կառավարելիությունը, իրավական պետության կայացումը, գործողությունների ծրագրի մշակումը, կառավարման կառուցվածքում, ոճում և համակարգերում փոփոխությունները, պետության և մարդու փոխազդեցությունները»<sup>6</sup>:

Քաղաքացիական ծառայության՝ որպես կառավարման օբյեկտի, համակողմանի դիտարկումը թույլ է տալիս հստակ սահմանել քաղաքացիական ծառայության խնդիրները, նրա կառավարման մեթոդները՝ հաշվի առնելով գործադիր իշխանության մարմինների համակարգում քաղաքացիական ծառայության առանձնահատկությունները:

Մասնավորապես, քաղաքացիական ծառայության կառավարումը՝ որպես պետական մարմինների իրավասությունների կատարումն ապահովող մասնագիտական գործունեություն, առաջին հերթին ենթադրում է հենց այդ գործունեության նպատակների և խնդիրների իրականացում: Միաժամանակ, կառավարողի (սուբյեկտ) և կատարողի (օբյեկտ) փոխհարաբերություններում մի դեպքում կարող է լինել նպատակների համադրում, իսկ մյուս դեպքում հակադրում, և այստեղ է, որ առանցքային նշանակություն են ձեռք բերում արդյունավետ կառավարման էության հստակեցումը, կառավարչական ազդեցության մեթոդի ընտրությունը, կառավարողից կառավարվողին լիազորությունների փոխանցման (պատվիրակման) ծավալը, վերադասության և ստորադասության պատշաճ կարգավորումը, փոխադարձ վստահության սահմանները, վերահսկողության տեսակի ընտրությունը և այլն:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մարմինների կազմավորումը պայմանավորված էր ՀՀ քաղաքացիական ծառայության մասին օրենքի ընդունմամբ և դրանով էլ պայմանավորված՝ քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման և դրա կառավարման անհրաժեշտության առաջացման հետ: Մասնավորապես, պետական կառավարման համակարգի բարեփոխումների արդյունքում արդյունավետ, միասնական կադրային քաղաքականություն իրականացնելու, պետական ապարատը քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ արհեստավարժ, բարոյական բարձր հատկանիշներով օժտված կադրերով համալրելու, քաղաքացիական ծառայողների իրավական պաշտպանվածությունը և օրինական շահերը պաշտպանելու նպատակով ստեղծվել և գործում է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի յոթ անդամները նշանակվում են ՀՀ Նախագահի կողմից, վարչապետի առաջարկությամբ, սակայն ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը

հաշվետու է միայն Ազգային ժողովի առաջ, որը դրսևորվում է վերջինիս իր գործունեության մասին ամենամյա հաղորդումներ ներկայացնելու ձևով<sup>7</sup>, իսկ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի գործունեության նկատմամբ դատական վերահսկողությունն իրականացվում է վարչական դատավարության կարգով: Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի գործունեության որոշ տեսակների նկատմամբ իրականացվում է վերահսկողություն նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից<sup>8</sup>:

Փաստորեն, մեր հանրապետությունում այնքան է կարևորվում քաղաքացիական ծառայության կառավարման հատուկ լիազորություններով օժտված մարմնի դերը՝ որպես քաղաքացիական ծառայության համակարգում քաղաքացիական ծառայության ինստիտուտների կազմակերպման, գործառնության ապահովման, քաղաքացիական ծառայության անձնակազմի պատրաստման, ընտրության, մասնագիտական առաջխաղացման, քաղաքացիական ծառայողների պետական պատվերի ձևավորման և տեղաբաշխման, կադրերի ռեզերվի ձևավորման, քաղաքացիական ծառայության արդյունավետության վերլուծության և գնահատման, քաղաքացիական ծառայության բնագավառում միջազգային համագործակցության, պետական իշխանության արդյունավետության չափման, հասարակության մեջ բարեփոխումների գործընթացի կառավարելիության ապահովման և իրավական պետության կայացման ինստիտուցիոնալ կառույց, որ նրա ձևավորման և գործունեության հիմքում դրվել է սահմանադրական մարմինների և քաղաքացիական հասարակության կողմից վերահսկելի, սակայն, միևնույն ժամանակ, հարաբերականորեն անկախ լինելու սկզբունքները:

Հաշվի առնելով, որ տվյալ դեպքում կառավարման օբյեկտը հանդիսանում է քաղաքացիական ծառայությունը՝ որպես մասնագիտական գործունեության ոլորտ, իրավական, սոցիալական և կազմակերպչական ինստիտուտ, քաղաքացիական ծառայողների և պետության միջև հարաբերությունների համակարգ, իսկ կառավարում իրականացնողը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդն է, հետևաբար ենթադրվում է, որ կառավարողն իր գործառնությունները պետք է իրականացնի կառավարման գործառնությունների հաշվառմամբ:

Այդուհանդերձ, կառավարման գործառնությունների շարքում իր առանցքային տեղն ունի ռազմավարա-

կան պլանավորումը, որը, որպես կառավարման կարևորագույն գործառնություն, հնարավորություն է ընձեռում պարզել համակարգի նվաճումները, որոշել զարգացման նպատակը և խնդիրները, հստակեցնել սահմանված նպատակին հասնելու ուղիներն ու մեթոդները: Կառավարման այս գործառնության գլխավոր խնդիրը ապագայի անորոշության մեջ կազմակերպության գործունեության նպատակամետ ուղղությունների և դրանց իրացման մեթոդների կանխագուշակումն է: Երբ որոշակիացված է ապագան, ապա կառավարման մյուս գործառնությունը՝ կազմակերպումը, մոտիվացիան, վերահսկողությունը, ուղղվում են առաջադրված նպատակի ու խնդիրների կենսագործմանը: Հետևաբար, որքան հիմնավոր մշակված լինի ռազմավարությունը, այնքան ավելի հեշտ կլինի ստեղծել կազմակերպության նպատակները և խնդիրները իրականացնելու համար անհրաժեշտ կազմակերպական կառուցվածք, այսինքն՝ ընտրված ռազմավարության իրագործման համար չափազանց կարևորվում է կազմակերպական կառուցվածքի ստեղծումը, իսկ կառավարման կազմակերպական կառուցվածքի ստեղծմանն էլ հենց ուղղված է կառավարման կարևոր գործառնություններից մեկը՝ կազմակերպումը, որը բնութագրվում է որպես կառավարման կազմակերպական կառուցվածքների ստեղծման միջոցառումների ամբողջություն: Այն ուղղված է կազմակերպության սահմանված նպատակների իրագործմանը, սակայն կառավարման կազմակերպական կառուցվածքների ստեղծման համար չափազանց կարևորվում են մի շարք կատեգորիաներ՝ լիազորություններ, պատասխանատվություն, լիազորությունների պատվիրակում և այլն: Կառավարման գործում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում նաև մոտիվացիան, որի անտեսման պայմաններում ցանկացած հրաշալի ռազմավարություն և կազմակերպական կառուցվածքի և էթիկայի նորմերի պահպանման մասին խոսելը դառնում է ինքնանպատակ: Միաժամանակ, կառավարման մյուս՝ վերահսկողական, գործառնությոնը ևս կոչված է ապահովելու նախապես սահմանված նպատակների իրագործումը, որն ուղղված է ընդունված ռազմավարության, մշակված ծրագրի իրագործմանը և այդ ընթացքում ծագած թերությունների վերացմանը:

Նպատակ չհետապնդելով վերլուծել կառավարման յուրաքանչյուր գործառնության բովանդակությունը, սակայն հաշվի առնելով դրանց հստակ

իրականացման անհրաժեշտությունը՝ որպես արդյունավետ կառավարման հիմնական երաշխիք՝ պետք է փաստենք, որ մեր երկրի քաղաքացիական ծառայության կառավարման և ղեկավարման մարմինը, չնայած ունի որոշակի կազմակերպարարական կառուցվածք, ներդրել է քաղաքացիական ծառայողների մոտիվացիայի որոշ մեխանիզմներ և վերահսկողության համակարգ, սակայն մինչ օրս բացակայում է ազգային իրավական համակարգին համահունչ քաղաքացիական ծառայության ռազմավարական ուղղությունների և դրանց իրականացման մեթոդների ծրագիրը, որը կկանխորոշի քաղաքացիական ծառայության համակարգի իրավական ապահովման և զարգացման հիմնական ուղղությունները և առաջնահերթությունները, որպիսի պայմաններում հաճախ ՀՀ քաղաքացիական խորհրդի կազմակերպարարական ներկայացուցիչները վերաբերյալ դատողություններ անելը դառնում է անարդյունավետ, իսկ կառավարման մյուս գործառնությունների՝ մոտիվացիայի և վերահսկողության իրականացմանն ուղղված ջանքերը կարող են դառնալ ինքնանպատակ:

Հետևաբար, մեր կարծիքով, անհրաժեշտություն է քաղաքացիական ծառայության համակարգի զարգացման ու արդյունավետության բարձրացման գործում ռազմավարական պլանավորման իրականացումը, որտեղ կարևոր տեղ պետք է զբաղեցնի նաև էլեկտրոնային կառավարման ռազմավարությունը: Այս խնդրի լուծման համար իրավագիտությունից բացի մեծ անելիքներ ունեն նաև գիտության մյուս ճյուղերը՝ փիլիսոփայությունը, քաղաքագիտությունը, տնտեսագիտությունը, հոգեբանությունը, սոցիոլոգիան և այլն, որոնք պետք է մշակեն համակարգի ռազմավարական զարգացմանը, և արդյունավետ գործունեությանն ուղղված գիտականորեն հիմնավորված առաջարկություններ: Այդուհանդերձ անհրաժեշտ է՝ նախ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը ՀՀ քաղաքացիական խորհրդի համար ուղղակիորեն նախատեսի քաղաքացիական ծառայության ռազմավարության մշակման լիազորություն, այնուհետև վերջինս նշված լիազորության սահմանում պետք է իրավական ակտի ձևով սահմանի քաղաքացիական ծառայության ռազմավարությունը:

Այդուհանդերձ, չնայած քաղաքացիական ծառայության խորհրդի հարաբերական անկախությանը, քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ լինելու և քաղաքացիա-

կան ծառայության կայունության երաշխավորման նպատակով խորհրդի անդամները համարվում են ոչ թե քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք, այլ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձինք, սակայն նրանց պաշտոնավարման ժամանակաշրջանի աշխատանքային ստաժը հավասարեցվում է քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց ստաժին, իսկ ՀՀ քաղաքացիական ծառայության մասին օրենքի գործողության ոլորտը սահմանող 4-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ նույն օրենքի գործողությունը տարածվում է քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա, իսկ 2-րդ մասի համաձայն՝ քաղաքական, հայեցողական և քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք քաղաքացիական ծառայողներ չեն համարվում:

Այսպիսով, վերը շարադրվածից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական ծառայության մասին օրենքի գործողությունը չի տարածվում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի անդամների վրա: Մինչդեռ նույն օրենքի մի ամբողջ գլուխ կարգավորում է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կազմավորման կարգը, խորհրդի անդամներին պաշտոնի նշանակման և պաշտոնից ազատման կարգը, նախատեսում է գործառնություններ, այդ անդամներին տալիս է լիազորություններ՝ խորհրդին վերապահված գործառնությունների իրականացման համար և այլն: Հետևաբար, այս առումով անհրաժեշտ ենք համարում օրենքի գործողության ոլորտի հստակեցումը:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը քաղաքացիական ծառայության կառավարման իր առաքելությանը համահունչ իրականացնում է համապատասխան մարմինների կադրային գործի մեթոդական ղեկավարումը, քաղաքացիական ծառայության օրենսդրությանը հակասող ակտերը վերացնելու համար դիմում է դատարան, քննում է քաղաքացիական ծառայության վերաբերյալ ստացված դիմումները, բողոքները և առաջարկությունները, վարում է ծառայողական քննություն, համաձայնություն է տալիս խիստ նկատողություն և օրենքով սահմանված կարգով աշխատավարձի իջեցում կարգապահական տույժերից մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու և զբաղեցրած պաշտոնից ազատում կարգապահական

տույժ կիրառելու համար, հաստատում է քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրն ու պաշտոնների անվանացանկը և այլ գործառույթներ<sup>9</sup>:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդն ունի նաև աշխատակազմ, որն ապահովում է խորհրդին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին խորհրդի մասնակցությունը<sup>10</sup>: ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նպատակները, խնդիրներն ու գործառույթները սահմանվում են համապատասխան իրավական ակտերով: Այսինքն՝ քաղաքացիական ծառայության համակարգի ղեկավարման և կազմակերպման իրականացումը, խնդիրները սահմանում են նպատակին հասնելու ուղղությունները, տվյալ դեպքում՝ քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման, դրա արդյունավետ կառավարման և հետագա կատարելագործման ապահովմանը, ինչպես նաև դրա գործունեության թափանցիկության ու հրապարակայնության ապահովմանը, իսկ գործառույթները գործունեության հիմնական ուղղություններն են, տվյալ դեպքում՝ քաղաքացիական ծառայության ոլորտում պետական միասնական քաղաքականության իրականացումը, ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի մշակումը, ինչպես նաև ոլորտին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի ընդունումը:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդին իր հիմնական խնդիրներին և գործառույթներին համապատասխան տրված է սահմանված կարգով և դեպքերում ծառայողական քննություն անցկացնելու, քաղաքացիական ծառայողի նկատմամբ խիստ նկատողությունը որպես կարգապահական տույժ մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու համաձայնություն տալու, խիստ նկատողություն և աշխատավարձի իջեցում կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու, քաղաքացիական ծառայողին փորձաշրջանը չանցնելու հիմքով պաշտոնից ազատելու, ինչպես նաև զբաղեցրած պաշտոնից ազատում կարգապահական տույժը կիրառելու լիազորություններ<sup>11</sup>:

Այսպիսով, քաղաքացիական ծառայողների գործունեության կառավարումն իրականացնելու համար ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդին և աշխատակազմի ղեկավարին օրենսդիրը տվել է կազմակերպչակարգադրիչ գործառույթներ,

իշխանական լիազորություններ և իրավական գործողությունների կատարման իրավունք:

Կազմակերպչակարգադրիչ գործառույթների իրականացման առումով քաղաքացիական ծառայության կազմակերպման և ղեկավարման մարմիններն իրականացնում են քաղաքացիական ծառայողների աշխատանքների կազմակերպման, խթանման և վերահսկման աշխատանքային կարգապահության պահպանման, մասնագիտական գործունեության ֆինանսական, նյութական և տեղեկատվական ապահովման հետ կապված գործառույթներ: Քաղաքացիական ծառայողների գործունեության կառավարումը տեղի է ունենում իրավական ակտերի (որոշումներ, հրամաններ) արձակման ձևով, ինչպես նաև պարտադրման ուժ ունեցող ազդեցության այլ օրինական միջոցներով:

Փաստորեն, քաղաքացիական ծառայության՝ որպես իրավական ինստիտուտի կառավարման սուբյեկտ են հանդիսանում քաղաքացիական ծառայության վերաբերյալ օրենքներ, որոշումներ, հրամաններ, ինչպես նաև այլ նորմատիվ և անհատական բնույթի իրավական ակտեր ընդունող օրենսդիր և գործադիր մարմինները: Չնայած ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդին որպես գործադիր իշխանությունից անկախության երաշխիք տրվել է յուրահատուկ կարգավիճակ, և վերջինս չի հանդիսանում գործադիր իշխանության մարմին, սակայն հաշվի առնելով վերջինիս կողմից իրականացվող գործառույթների կազմակերպչական և կարգադրիչ բնույթը, ինչպես նաև վարչակառավարչական լիազորությունների ծավալը՝ կարելի է փաստել, որ այն ևս իրականացնում է գործադիր իշխանության մարմիններին բնորոշ գործունեություն, որի արդյունքում ընդունված իրավական ակտերը ենթակա են բողոքարկման վարչական դատավարության կարգով:

Քաղաքացիական ծառայողների գործունեության կառավարման ժամանակ առաջին պլան են մղվում կազմակերպչակարգադրիչ մեթոդները: Մասնավորապես, որպես իրավական ինստիտուտի՝ քաղաքացիական ծառայության կառավարման դեպքում առաջնային են համարվում իրավական մեթոդները, այսինքն՝ իրավական նորմերի օգնությամբ քաղաքացիական ծառայության վրա ազդելու եղանակները: Այդ մեթոդները կարող են լինել իմպերատիվ (իշխանական ազդեցություն ծառայողների վրա), դիսպոզիտիվ (իրավահավասար կողմերի հարաբերության կարգավորում), խրա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

խուսական և երաշխավորական: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ որպես իրավական ինստիտուտի քաղաքացիական ծառայության կառավարման գործընթացում կիրառվում են կազմակերպչական մեթոդներ, որոնք իրավական մեթոդներ չեն հանդիսանում:

Քաղաքացիական ծառայության կառավարումը՝ որպես սոցիալական ինստիտուտ, ենթադրում է պետական իշխանության մարմինների կողմից քաղաքացիական ծառայություն մուտքի քաղաքացիների հավասարության սկզբունքի ապահովումը, աշխատանքի բարենպաստ պայմանների ստեղծման և վարձատրության ապահովումը, կառավարչական հարաբերությունների կատարելագործումը, պետական ծառայության խնդիրների զարգացմանը և փոփոխմանը զուգահեռ քաղաքացիական ծառայողների արհեստավարժության բարձրացումը և այլն: Այս առումով քաղաքացիական ծառայության սուբյեկտ է հանդիսանում առաջին հերթին օրենսդիր մարմինը, որը օրենքների ընդունման գործընթացում (հատկապես բյուջեի մասին օրենքում) հաշվի է առնում պետական ծառայության ծախսերը, այդ թվում պետական ծառայողների սոցիալական պաշտպանության և նրանց խթանման ծախսերը, կարգավորում է ծառայողների կարգավիճակը: Իսկ գործադիր իշխանության մարմինները ապահովում են ծառայողների սոցիալական իրավունքների և երաշխիքների իրականացումը՝ կիրառելով սոցիալ-տնտեսական և վարչակարգադրական մեթոդներ: Ինչ վերաբերում է սոցիալ-հոգեբանական մեթոդների օգնությամբ քաղաքացիական ծառայության կառավարման իրականացմանը, ապա դրանք ուղղված են պետական ծառայությունում ոչ ֆորմալ կապերի զարգացմանը, ծառայողների շրջանում ծագող կոնֆլիկտների կանխարգելմանը և լուծմանը, աշխատանքի բարոյական խթանման կատարելագործմանը, էթիկական սկզբունքների ամրապնդմանը և այլն, սակայն դրանց սպառնիչ ցանկի նորմատիվ ամրագրումը գրեթե անհնարին է:

Քաղաքացիական ծառայության կառավարման կառուցակարգերը իրագործվում են բազմաթիվ տեխնոլոգիաների օգնությամբ, որոնցից առաջնակարգ նշանակություն ունեն քաղաքացիական ծառայողների ընտրության տեխնոլոգիաները, նրանց առաջխաղացումը և ռոտացիան, աշխատանքի արդյունավետության գնահատումը պետական մարմիններում, կադրերի վիճակի վերլուծու-

թյունը, պետական ծառայողների գործունեության խթանումը, պետական ծառայության բարոյահոգեբանական հիմքերի մշակումը և այլն:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդն ունի պատասխանատվությունների մեծ շրջանակ՝ ներառյալ կարգավորիչ, մոնիտորինգի և վերահսկիչ իրավասություններ, ինչպես նաև օրենքների կիրառումն ապահովող ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իրավասություն օրենքով հստակ սահմանված դեպքերում<sup>12</sup>: ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը պետք է խթանի մարդկային ռեսուրսների կառավարման պարզ և գործնական մեթոդների ինստիտուցիոնալացումը՝ նպաստելու քաղաքացիական ծառայողների կողմից իրենց պարտավորությունների կատարմանը հնարավորինս արդյունավետորեն: ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի գոյությունը հանրային կառավարումը դարձնում է ավելի թափանցիկ, իսկ նրա գործունեությունը՝ ավելի համաձայնեցված: Ինստիտուցիոնալ հստակությունն ու համաձայնեցվածությունը նպաստում են հաշվետվողականությանն ու դրական աշխատանքային միջավայրի ստեղծմանը<sup>13</sup>: Այդ իսկ պատճառով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի շրջանակում քննարկվել և լուծվել է հանրային ծառայության իրավունքի համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող բոլոր նորմերը համակարգված ու կանոնակարգված ձևով մեկ միասնական ակտով շարադրելու հարցը<sup>14</sup>:

Հետևաբար, նկատի ունենալով հանրային բոլոր ծառայողների համար միասնական իրավակարգավորման առկայությունը և հանրային ծառայության իրավունքի համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող բոլոր նորմերը համակարգված ձևով մեկ միասնական ակտով շարադրված լինելու հանգամանքը՝ անհրաժեշտություն ենք համարում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդում կառուցվածքային փոփոխությունների իրականացումը: Մասնավորապես, նախ և առաջ անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը վերանվանել ՀՀ հանրային ծառայության խորհուրդ, որի մեջ կներառվեն հանրային ծառայության բոլոր տեսակների (քաղաքացիական, հարկային, մաքսային, դատական, համայնքային ծառայողներ և այլն) կառավարման մարմինները, որոնք ՀՀ հանրային ծառայության խորհրդի կազմում կլինեն առանձին դեպարտամենտներ, որոնց ղեկավարները կնշանակվեն ՀՀ

Նախագահի կողմից և կհանդիսանան ՀՀ հանրա-  
յին ծառայության խորհրդի անդամներ:

Այսպիսով, քաղաքացիական ծառայության  
կառավարումը պետք է հանգեցնի ոչ միայն պետա-  
կան իշխանության համակարգում կադրային քա-  
ղաքականության արդյունավետ իրականացմանը,  
քաղաքական պարտավորվածության և կառավար-

չական պատասխանատվության ապահովմանը,  
այլև հանրային կառավարչության պարտականու-  
թյունների արդյունավետ կատարմանը՝ իրավունքի  
նորմերին և հանրային իրավունքի սկզբունքներին  
համապատասխան:

<sup>1</sup> Տե՛ս «Կառավարում» N 11 (88) նոյեմբեր 2007, Գայանե Գրիգորյան, Կադրային քաղաքականության  
հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգում, էջ 28:

<sup>2</sup> Տե՛ս J.D. Bailey, Thomas Jefferson and executive power, Chambridge University press, New York 2007, p. 1.

<sup>3</sup> Տե՛ս www.brainquotes.com.

<sup>4</sup> Տե՛ս “Настольная книга государственного служащего”, под ред. проф. Шкатулла В.И. М.1999. С. 346.

<sup>5</sup> Տե՛ս Ноздрачев А.Ф. Государственная служба. Учебник для подготовки государственных служащих. М.: Статут,  
1999. С. 101.

<sup>6</sup> Տե՛ս Матирко В.И. Проблемы кадровой политики в государственном аппарате. М. 1996. С. 103.

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ Քաղաքացիական ծառայության մասին օրենք, հոդված 37:

<sup>8</sup> Տե՛ս ՀՀ Քաղաքացիական ծառայության մասին օրենք, հոդված 40:

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ ՔԾ -ի 2002թ. հունվարի 29-ի «ՀՀ ՔԾ -ի կանոնադրությունը հաստատելու մասին» N3-Ն որոշում, կետ 8:

<sup>10</sup> Տե՛ս ՀՀ ՔԾ -ի 2002թ. մայիսի 8-ի «ՀՀ ՔԾ -ի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» N9-Ն  
որոշում, կետ 1:

<sup>11</sup> Տե՛ս ՀՀ ՔԾ -ի 2002թ. հունվարի 29-ի «ՀՀ ՔԾ -ի կանոնադրությունը հաստատելու մասին» N3-Ն որոշում, կետ 8:

<sup>12</sup> Տե՛ս <http://www.sigmaxweb.org/dataoecd/22/60/47601628.pdf>

<sup>13</sup> Տե՛ս <http://www.oecd.org/site/sigma/publicationsdocuments/44110948.pdf>, (կամ Պետական ծառայության  
գրավչությունը. Լավ պետական կառավարման էությունը, Ֆրանսիսկո Կարդոնա, SIGMA, էջ 10)

<sup>14</sup> Տե՛ս [http://www.parliament.am/draft\\_history.php?do=showdiveval&Div=3&ID=4897](http://www.parliament.am/draft_history.php?do=showdiveval&Div=3&ID=4897)

РЕЗЮМЕ

*Проблемы правового регулирования управления гражданской службой в РА*

Эффективное осуществление кадровой политики со стороны государства имеет важное значение в деле становления гражданской службы, успешной реализации функций правового и социального государства. Несмотря на то, что орган руководства и управления гражданской службой в РА имеет определенную организационно-правовую структуру, до сих пор не имеются программы стратегических шагов развития гражданской службы.

В научной статье рассматриваются вопросы стратегического планирования развития гражданской службы, и с этой точки зрения предлагаются соответствующие изменения в действующем законодательстве РА о Гражданской службе.

SUMMARY

*The problems of legal regulation of Civil Service government in RA*

The efficient realisation of state policy on human resources plays an important role in the establishment of civil service system and for the successful realisation of the principle of social and legal state. Although the body of control and management of the civil service in RA has a quite definite organisational and legal structure, still we do not have a strategic plan of development of the civil service system.

The scientific article discusses issues of strategic development of civil service institute and offers several changes in the relevant legal sphere of RA on this point.



### ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ դատական դեպարտամենտի կազմակերպարական վարչության մասնագետ,  
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

## ՏՈՒԺՈՂԻ ՀԵՏ ՀԱՇՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԶՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու նորմի կիրառման տեսական և գործնական հիմնախնդիրները լուծելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել քննարկվող նորմի կիրառման պայմանները և հիմքերը:

ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը («Քրեական պատասխանատվությունից ազատելու տուժողի հետ հաշտվելու դեպքում») սահմանում է, որ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը:

Օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածում սահմանել է երեք պահանջներ (հանցագործության տեսակը՝ ոչ մեծ ծանրության հանցագործություն, տուժողի հետ հաշտվելը, պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը), որոնք իրենց էության մույնաբովանդակ չեն և քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս համապատասխանաբար յուրաքանչյուրն ունի իր արժեքը:

Քրեական իրավունքի գրականությունում գոյություն չունի միատեսակ մոտեցում այն հարցի կապակցությամբ, թե որոնք են հանդիսանում տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու պայմաններ, և որոնք՝ հիմքեր: Օրինակ, ՌԴ քրեական օրենսգրքի մեկնաբանության հեղինակները կարծում են, որ նշված երեք պահանջները հանդիսանում են քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքեր<sup>1</sup>: Այլ գիտնականներ նշում են ճիշտ հակառակը՝ պնդելով, որ բոլոր պահանջները հանդիսանում են պայմաններ<sup>2</sup>:

Քննարկվող հասկացությունների տարբերակման համար անհրաժեշտ է վեր հանել նրանց իմաստային նշանակությունը, որը նպատակահարմար է քննարկել ըստ դրանց լեզվաբանական նշանակության: Այսպես՝ հայերենի բացատրական բառարանում **հիմքը** հասկացվում է որպես «պատճառ, առիթ, հանգամանք, որով արդարացվում է կամ հասկանալի է դառնում որևէ բան»<sup>3</sup>, **պայմանները**՝ «այն հանգամանքները, որոնց մեջ տեղի է ունենում՝ կատարվում է որևէ բան»: Կյանքի, աշխատանքային, կենցաղային պայմաններ: Որևէ բանի համար անհրաժեշտ հիմք, նախադրյալ: Որևէ բանի համար առկա հնարավորությունների ամբողջություն<sup>4</sup>:

Այսպիսով, քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք են հանդիսանում այն հանգամանքները, որոնք կարող են հանդես գալ որպես ազդեցիկ պատճառ ընդհանուր կանոնից շեղվելու և հանցանք կատարողի հանդեպ սույն քրեաիրավական միջոցը կիրառելու նպատակով:

Իսկ պայմաններն այնպիսի հանգամանքներ են, որոնցից կախված է հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելը միայն հիշատակված հիմքերի առկայության դեպքում:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ կարծում ենք, որ հանցագործության տեսակը (ոչ մեծ ծանրության հանցագործություն) այն հանգամանքն է, որ դատարանին պահանջում է ուսումնասիրել քրեական պատասխանատվությունից ազատելու նորմի կիրառման հնարավորությունը, և որից կախված է քրեական պատասխանատվությունից ազատելու որոշում ընդունելը:

Տուժողի հետ հաշտվելը և պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը ՀՀ քրե-

ական օրենսգրքի 73-րդ հոդվածի իմաստով քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքեր են:

Քննարկվող հոդվածի շարադասությունից ելնելով՝ հարկ ենք համարում նախ անդրադառնալ նորմի կիրառելիության պայմանին՝ **հանցագործության տեսակին**:

Մեր կարծիքով Լ.Ն. Կրիվոչենկոն հիմնավորված է նշում, որ պատասխանատվությունից ազատելու տարբեր տեսակների պայմանները և սահմանները պետք է անմիջականորեն կապված լինեն այն դասակարգման տեսակների հետ, որին վերաբերում է կատարված հանցագործությունը<sup>5</sup>:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորյալմբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ, ինչպես նաև անգաղտնյա կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երեք տարի ժամկետով ազատազրկումը:

Քրեական օրենքում հանցագործությունների տեսակների ներդրման գաղափարը առաջացել է շատ վաղուց:

Առաջարկվում էր սահմանել երեքից<sup>6</sup> մինչև հինգ<sup>7</sup> հանցագործությունների տեսակներ: Միևնույն ժամանակ, հարց էր բարձրացվել հանցագործությունների դասակարգումներից դուրս քրեական օրենսդրությունում սահմանել քրեական իրավախախտման այնպիսի տեսակ, ինչպիսին է զանցանքը:

Անհրաժեշտ է համաձայնվել Ն.Ֆ. Կուզնեցովայի հետ այն հարցի շուրջ, որ. «գիտականորեն հիմնավորված դասակարգումը գործնական և տեսական առումով արդիական է առնվազն երեք ասպեկտներով՝ օրենսդրական գործունեության, մեղավորի պատասխանատվության անհատականացման, հանցագործության կրիմինալոգիական վիճակի և կառուցվածքի ուսումնասիրության»<sup>8</sup>:

Ն.Ի. Չագորոդնիկովը կարծում է, որ. «Հանցագործությունների դասակարգման հիմքում հարկավոր է դնել սանկցիան (պատժի չափը և տեսակը, որը նախատեսված է օրենքում), այն հատկանիշը,

որը կարող է արտացոլել հանցագործության սոցիալական բովանդակությունը (հանրային վտանգավորությունը)»<sup>9</sup>: Մեր կարծիքով, Ա.Ի. Մարցևը արդարացիորեն է քննադատում վերոնշյալ մոտեցումը՝ մասնավորապես նշելով, որ պատիժը համարել հանրային վտանգավորության «չափման միավոր», այնքան էլ հիմնավորված չէ: «Հանրային վտանգավորությունը օբյեկտիվ իրականություն է, որը գոյություն ունի անկախ մեր գիտակցությունից և առաջնային է պատժի նկատմամբ: Պատիժը պետք է բխի հանրային վտանգավորությունից, այլ ոչ թե հակառակը»<sup>10</sup>:

Տ.Ա. Լեսնիսկի-Կոստարևան կողմնակից է այն դիրքորոշմանը, որ պատժի մեջ պետք է արտացոլված լինի հանցանքի հանրային վտանգավորությունը, և ենթադրվում է, որ ավելի արդյունավետ է հանցագործությունների կոնկրետ տեսակների սահմանման համար օգտագործել հետևյալ չափանիշները՝ «մեղքի ձևը» և «սանկցիան»: Այնուամենայնիվ նշում է, որ. «անարդար է հրաժարվել հանրային վտանգավորությունից, որը հանցագործության կարգավորման հիմնական հիմքն է»<sup>11</sup>:

Լ.Ն. Կրիվոչենկոն հանրային վտանգավորության բնույթը և աստիճանը կարևորում է որպես դասակարգման չափանիշներ՝ նշելով, որ «... հանրային վտանգավորությունը չի կարող անմիջականորեն ընդունվել, և, հետևաբար, որպեսզի այն ընդունվի և հասկանալի լինի միանշանակ, պետք է պարզել այդ վտանգի որոշ արտաքին ցուցիչները»<sup>12</sup>:

Այսպիսով, անհրաժեշտ է նշել, որ իրավաբանական գրականությունում գոյություն չունի միատեսակ մոտեցում հանրային վտանգավորության հարցի վերաբերյալ:

Առավել տարածված է այն տեսակետը, որ հանրային վտանգավորությունը վնաս պատճառել է կամ քրեական օրենքով պաշտպանված հասարակական հարաբերություններին վնաս պատճառելու վտանգ (կամ սպառնալիք) ստեղծելը:

Որոշ գիտականներ կարծում են, որ հանրային վտանգավորության հասկացությունը անհրաժեշտ է ընդունել ոչ միայն հանցագործության օբյեկտիվ կողմի հետ սերտ հարաբերակցության մեջ, այլ նաև սուբյեկտիվ կողմի, հանցագործության օբյեկտի և սուբյեկտի<sup>13</sup>:

Ա.Ի. Մարցևի կարծիքով հանրային վտանգավորությունը բաղկացած է ոչ միայն հանցակազ-

մի հատկանիշներից, այլ նաև իրավախախտողի<sup>14</sup> (հեղինակի կարծիքով իրավախախտողը չի մտնում հանցակազմի հատկանիշների մեջ. չհամաձայնելով նրա հետ՝ նշում ենք, որ իրավախախտողը հանցակազմի սուբյեկտն է, հետևաբար մտնում է հանցակազմի հատկանիշների մեջ):

Այսպիսով, քննարկվող հարցի վերաբերյալ ընդամենը կարող ենք նշել, որ հանրային վտանգավորությունը հիմք է հանդիսանում քրեական օրենքում հանցագործությունների խմբերը տարբերակելու համար:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ մեր կարծիքով, օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը պատրաստելու ժամանակ հիմք չի ընդունել հանցագործությունների դասակարգման վերաբերյալ գիտական մոտեցումները, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածից ենթադրվում է, որ հանրային վտանգավորությունը կախված է պատժից, որը սահմանված է այս կամ այն սանկցիայում, այլ ոչ թե հակառակը:

ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ նորմի կիրառման պայմանը հանդիսանում է միայն ոչ մեծ ծանրության հանցագործության առկայությունը: Նշվածի վերաբերյալ տեսությունում առկա են տարբեր մոտեցումներ: Այսպես՝ ինչպես նշում է Խ.Գ. Ալիկյետրովը. «... որոշ դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել տուժողի կարծիքը, մասնավորապես այլ տեսակի (միջին ծանրության և ծանր հանցագործություններ) հանցագործություններ կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծելու դեպքում: Ասվածը, մասնավորապես, վերաբերում է միջին ծանրության և ծանր հանցագործություններին, բայց որոնց դեպքում տուժողի կյանքին կամ առողջությանը ծանր հետևանքներ չեն պատճառվել: Նման դեպքերում, զոհի կամքն անտեսելով, մեղավորին քրեական պատասխանատվության ենթարկելը հանգեցնում է նրան, որ տուժողի շահերը խախտվում են երկու անգամ. առաջինը՝ հանցագործի գործողությունների, երկրորդը՝ պետական մարմինների գործողությունների հետևանքով»<sup>15</sup>:

Վ.Գ. Ուլյանովը նույնպես համաձայն է ընդլայնել տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու արարքների շրջանակը՝ դրանում ընդգրկելով նաև միջին ծանրության հանցագործությունները<sup>16</sup>:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոհիշյալը,

մեր կարծիքով, ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը պետք է տարածվի նաև միջին ծանրության հանցագործությունների վրա, ինչպես դա սահմանված է նույն օրենսգրքի 72-րդ և 74-րդ հոդվածներում:

Այսպես, անձը ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով քրեական պատասխանատվությունից ազատվելու համար պետք է կատարի առնվազն երկու գործողություն. 1) հաշտվի տուժողի հետ և 2) հատուցի կամ այլ կերպ հարթի պատճառված վնասը:

ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի վերնագրում և քննարկվող նորմի դիսպոզիցիայում նշվում է մեղադրյալի և տուժողի **հաշտության մասին**, բայց ոչ նյութական, ոչ էլ դատավարական օրենսդրությունը չի սահմանում հաշտության հասկացությունը: Իրավական գրականության մեջ սույն հասկացությանը պատշաճ ուշադրություն չի դարձվում, քանի որ գիտնականներին ավելի շատ հետաքրքրում են այն հարցերը, որոնք կապված են ազատելու գործընթացի հետ:

Հաշտությունը նշանակում է պատշաճ դատավարական ձևով ներկայացված մերժում, որտեղ տուժողը հերքում է իր կողմից ներկայացրած սկզբնական պահանջները և պնդումները, հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու խնդրանքի մերժումը (եթե քրեական գործը դեռ չի հարուցվել) կամ պահանջում է հարուցված քրեական գործը կարճել, որը հարուցվել է իր խնդրանքով<sup>17</sup>:

Հաշտությունն այն է, երբ տուժողն իր կամարտահայտությամբ հրաժարվում է դատական կարգով իր իրավունքների պաշտպանությունից<sup>18</sup>:

Հաշտությունը երկկողմանի կայացված փաստաթուղթ է, որը պահանջում է ոչ միայն տուժողի համաձայնությունը, այլ նաև մեղադրյալի<sup>19</sup>:

Հաշտությունը նշանակում է քաղաքացիների միջև օրինական հարաբերությունների վերականգնում՝ բացառելով պետության հարկադրանքի կիրառման անհրաժեշտությունը ...<sup>20</sup>:

Հաշտությունը պետք է ընդունել որպես տուժողի կողմից հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին ներկայացված դիմումից հրաժարում կամ քրեական գործի կարճման մասին ներկայացված դիմում՝ հաշտության հասնելու կապակցությամբ<sup>21</sup>:

Հաշտության հասկացության հարցի կապակցությամբ իր դիրքորոշումն է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանը՝ մասնավորապես նշելով. «... հանցանք կատարած անձի համար հաշտությունը հանցանքի կատարման մեջ իրեն մեղավոր ճանաչելն է, այդ արարքի համար գոջալը, ափսոսանք հայտնելը, իսկ տուժողի համար՝ հանցանք կատարած անձին ներելը: Բացի այդ, հաշտությունը ենթադրում է տուժողի և ենթադրյալ հանցագործի կամավոր և փոխադարձ համաձայնություն միմյանց հետ հաշտվելու վերաբերյալ: Այսինքն՝ հաշտությունը պետք է լինի ինչպես գործողություն, այնպես էլ փոխադարձ գործողությունների արդյունք:

Հաշտության կամավոր բնույթը ենթադրում է հաշտվելու վերաբերյալ կողմերի ինքնուրույն և ազատ կամահայտնություն:

Հաշտության փոխադարձ բնույթը նշանակում է, որ կողմերից երկուսն էլ պետք է հայտարարեն հաշտության մասին»<sup>22</sup>:

Մեր կարծիքով, վերոնշյալ մոտեցումները ամբողջովին չեն ներկայացնում հաշտության էությունը:

Վ.Վ. Յենյովան արդարացիորեն նշում է, որ նպատակահարմար է հաշտությունը դիտարկել երկու ասպեկտների միջոցով. մի կողմից որպես գործընթաց, որը իրականացվում է որոշակի ժամանակի ընթացքում, մյուս կողմից՝ որպես արդյունք, հետևանք, որն ի հայտ է գալիս համապատասխան գործողությունների հետևանքով<sup>23</sup>:

Հաշտեցման գործընթացին պետք է մասնակցի նվազագույնը երկու անձ՝ հանցագործություն կատարած անձը և հանագործությունից տուժած անձը: Ուստի, նպատակահարմար չէ համաձայնել Պ.Մ. Դավիդովայի և Դ.Մ. Միրսկիի, Խ.Դ. Ալիկպերովայի և այլ գիտնականների հետ, ովքեր կարծում են, որ հաշտությունը տուժողի կողմից հանցագործություն կատարած անձի դեմ ներկայացրած քրեական պատասխանատվության ենթարկելու դիմումից միակողմանի հրաժարումն է: Հաշտության գործընթացին պարտադիր պետք է մասնակցի նվազագույնը երկու անձ. հաշտությունը երկկողմանի համաձայնություն է:

Իրավաբանական գրականությունում շատ հաճախ քննարկվում է այն հարցը, թե հաշտեցման ժամանակ կողմերից որը պետք է լինի առավել ակտիվը: Կհամաձայնենք Վ.Վ. Յենյովայի այն մոտեցմանը, որ «երկկողմանի հաշտեցման ժամա-

նակ երկու կողմի ջանքերը կարող են լինել հավասար կամ անհավասար: Իհարկե, իդեալում հաշտեցման նախաձեռնողը և նրա ակտիվ մասնակիցը պետք է լինի այն անձը, որը կատարել է հանցագործությունը, քանի որ նա է կատարվածի մեղավորը և նա պետք է ուղղի կատարված արարքը: Բայց պետք չէ բացառել այն հանգամանքը, որ հաշտեցման արդյունքի հնարավոր լինի հասնել տուժողի ջանքերի և նախաձեռնության շնորհիվ»<sup>24</sup>:

Նույն կարծիքի է Ռ.Կ. Պլիսկոն. «Կարևոր չէ՝ տուժողի թե մեղավորի կողմից է նախաձեռնությունն առաջացել: Գլխավորն այն է, որ տուժողը պաշտոնապես հայտարարի անձին քրեական պատասխանատվության չենթարկելու իր ցանկության մասին»<sup>25</sup>:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ ոչ մեծ ծանրության **հանցանք կատարած անձը** կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե **նա հաշտվել է տուժողի հետ** և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը:

Պետք է նշել, որ նույն մոտեցումն է ցուցաբերել նաև Ռ-Դ օրենսդիրը. Ռ-Դ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ և միջին ծանրության **հանցանք կատարած անձը** կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե **նա հաշտվել է տուժողի հետ** և հատուցել վերջինիս պատճառված վնասը:

Վ.Վ. Յենյովան առաջարկում է Ռ-Դ քրեական օրենսգրքի վերոնշյալ նորմի մասը ձևակերպել հետևյալ տեսքով. «... **հանցանք կատարած անձը** կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա և տուժողը հաշտվել են: Նա նաև նշում է, որ խաղաղ հարաբերություններ վերականգնելու և հաշտության (որպես հետևանք) գործողությունների միջև պետք է լինի պատճառահետևանքային կապ: Այսինքն՝ հաշտությունը՝ որպես հետևանք, պետք է լինի հանցագործությունից հետո դրսևորած անձի դրական վարքագծի արդյունքը և տուժողի գործողությունը: Բնականաբար, եթե գործողություններն ուղղված են խաղաղ հարաբերությունները վերականգնելուն, բայց արդյունքում նրանք չեն հաշտվում, ապա դա տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատվելու հիմք չի կարող հանդիսանալ»<sup>26</sup>:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ մեր կարծի-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

քով, կարելի է փաստել, որ **հաշտությունը հանդիսանում է գործընթաց և արդյունք, որն իր բնույթով երկողմանի ակտ է՝ ուղղված.**

**1. հանցագործությանը կողմերի միջև ձևավորված բացասական հարաբերությունները վերացնելուն,**

**2. խաղաղ հարաբերությունները վերականգնելուն,**

**3. այդ հողի վրա առաջացած հասարակական հարաբերությունների առողջացմանը և պահպանմանը:**

Տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու, հաշտեցման հիմքի ամբողջական ուսումնասիրության համար նաև նպատակահարմար է սահմանել, թե ովքեր կարող են հանդես գալ որպես հաշտության սուբյեկտներ:

Վ.Վ. Յենյովան նշում է, որ. «նպատակահարմար է քրեական օրենքում օգտագործել «տուժած» տերմինը, որն ամբողջովին արտացոլում է հանցագործություն կատարելուց հետո անձի «իրավիճակը»: Հեղինակը, միաժամանակ, առաջարկում է քրեական օրենսդրությունում սահմանել «տուժած» հասկացությունը, որը, բնականաբար, չի համընկնի քրեական դատավարությունում սահմանված «տուժող» հասկացության հետ<sup>27</sup>:

Պ. Յանին առաջարկում է հետևյալ սահմանումը. «Տուժված է համարվում այն անձը, որի՝ քրեական օրենքով պաշտպանված կյանքի, առողջության, պատվի և արժանապատվության, ինչպես նաև քաղաքական, աշխատանքային, գույքային և այլ իրավունքների և ազատության դեմ ուղղված է քրեական հանցագործությունը: Տուժածը իր հանդեպ կատարված յուրաքանչյուր հանցավոր արարքի համար ունի փոխհատուցման իրավունք»<sup>28</sup>: Կարծում ենք, որ հեղինակը չի նշել հիմնական հատկանիշի մասին, որը բնութագրում է «տուժածի» հասկացության մասին՝ անձի «առաքյանքի» առկայության մասին, այսինքն՝ իրական վնաս պատճառելը. այդ իսկ պատճառով հեղինակի կողմից առաջարկված առաջին և երկրորդ նախադասության մեջ բացակայում է պատճառահետևանքային կապը:

Մեր կարծիքով, Ա.Վ. Մումաչյովի առաջարկված «տուժածի» հասկացության սահմանումը ավելի լայն է և ներառում է հիմնական հատկանիշները: Այսպիսով. «Քրեական իրավունքում տուժած

է համարվում այն անձը, ում քրեական օրենքով պաշտպանված իրավունքներին անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, էմոցիոնալ տառապանքներ, կամ այդ անձի հիմնարար ազատությունները և իրավունքները էականորեն նսեմացվել են քրեական օրենքով նախատեսված վնաս պատճառած արարքի կատարման արդյունքում, կամ ստեղծվել է իրական հնարավորություն նշված վնասը անձին պատճառել հանցափորձի կատարման դեպքում»<sup>29</sup>:

ՀՀ քրեական դատավարության օրենսագրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեք քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

Նույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Տուժող կարող է ճանաչվել իրավաբանական անձը, որին հանցագործությանը պատճառվել է բարոյական կամ նյութական վնաս: Տվյալ դեպքում տուժողի իրավունքները և պարտականություններն իրականացնում է իրավաբանական անձի ներկայացուցիչը»:

Այսպիսով, եթե իրավաբանական անձին ճանաչենք որպես տուժող քրեաիրավական իմաստով, ապա այն իրավաբանական անձը, որը վնաս է կրել հանցագործության արդյունքում, պետք է ճանաչվի տուժող:

Օրենսդիրը սահմանել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի խնդիրներից է նաև իրավաբանական անձանց պաշտպանությունը. մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրներն են՝ հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքները, սեփականությունը, շրջակա միջավայրը, հասարակական կարգը, խաղաղությունը և մարդկության անվտանգությունը, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Այսպիսով, օրենսդիրը հստակ սահմանում է, որ իրավաբանական անձանց իրավունքների

www.lawinstitute.am

պաշտպանությունը համարվում է ՀՀ քրեական օրենսգրքի խնդիրներից մեկը:

Այդ իսկ պատճառով հարց է առաջանում՝ արդյո՞ք հնարավոր է իրավաբանական անձին համարել հաշտության սուբյեկտ:

ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում սահմանված են հանցակազմեր, որոնք ուղղված են ոչ միայն ֆիզիկական, այլ նաև իրավաբանական անձանց. օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածը (գույքային վնաս պատճառելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով), 185-րդ հոդվածը (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը), 187-րդ հոդվածը (օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը) և այլն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը կիրառելի է նաև իրավաբանական անձանց պարագայում, այսինքն՝ տուժող կարող է լինել նաև իրավաբանական անձը: Բայց պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նման դեպքերում հաշտությունը կրում է այլ բնույթ. իրավաբանական անձը անշունչ անձ է, հետևաբար չի կարող «տառապել», այսինքն՝ չի կարող ունենալ որոշակի բացասական զգացմունքներ, որոնք ունենում է մարդը: Սակայն իրավաբանական անձն օժտված է օբյեկտիվ շահերով, որոնք կարող են խախտվել հանցագործությամբ: Այս դեպքում տուժողի անունից հաշտություն կնքելու համար օրենսդրության համաձայն կարող է հանդես գալ համապատասխան լիազորված անձը:

Հանցագործությունից հետո մեղադրյալի կողմից պետք է գրանցվի երկրորդ դրական վարքագիծը՝ **հատուցվի կամ այլ կերպ հարթվի պատճառված վնասը:**

ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածում սահմանված է, որ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և *հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը:*

ՀՀ օրենսդիրը հանցագործություն կատարած անձի համար տուժողի հետ հաշտվելու նպատակով որպես դրական վարքագիծ սահմանում է կամըտրային հնարավորություն՝ հատուցել կամ այլ կերպ հարթել պատճառված վնասը:

Լ.Ձ Թադևոսյանը նշում է, որ օրենսդիրը

սահմանում է հանրային վտանգավոր հետևանքների վերացման երկու տեսակ: Առաջին՝ «վնասի հատուցում» և երկրորդ՝ «հանցագործությամբ պատճառված վնասը այլ կերպ հարթելը», երբ հանցագործություն կատարած անձը կարող է, օրինակ, վերադարձնել հափշտակված իրը կամ ամբողջովին փոխհատուցել պատճառված վնասը գումարային տեսքով, վճարել տուժողի բուժման ողջ ծախսերը (եթե հանցագործության արդյունքում կատարվել է անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում, որի արդյունքում տուժողը կորցրել է լսողությունը կամ տեսողությունը, ապա նրան պատճառված վնասը հնարավոր չէ հատուցել, հնարավոր է միայն «հարթել») և այլն<sup>30</sup>:

Այսպիսով, նպատակահարամար է ուսումնասիրել վերոնշյալ երկու հասկացությունների դերը և տարբերակումը:

«Վնաս հատուցելը» քաղաքացիական օրենսդրության հասկացություն է, որն իր էության մոտ է «վնասը հարթելու» հասկացությանը:

Իրավաբանական գրականության մեջ սույն հասկացությունների փոխհարաբերակցությունների շուրջ առկա չէ միասնական մոտեցում:

Պ.Գ. Մարֆիցինը կարծում է, որ «վնասը հարթել» հասկացությունն ավելի լայն է իր նշանակությամբ քան «վնաս հատուցելը»: Հեղինակի կարծիքով «պատճառված վնասը հարթելը կարող է կայանալ հափշտակված գումարի կամ գույքի վերադարձմամբ, տուժողին հափշտակվածի փոխարեն այլ առարկաներ տրամադրելով կամ այլ ձևով փոխհատուցելով: Միաժամանակ կարևոր չէ հատուցման ձևը: Հափշտակված առարկաները և արժեքները կարող են վերադարձվել քննիչի կողմից այն ժամանակ, երբ նրանք առգրավված կլինեն մեղադրյալից, գումարային փոխհատուցումը կարող է փոխանցվել առձեռն տուժողին կամ փոխանցվել, օրինակ, նրա բանկային հաշվին և այլն: Բացի այդ՝ վնասի հարթման այլ տեսակներ են տուժողից ներողություն խնդրելը (այդ թվում հրապարակայնորեն), որևէ օգնություն ցուցաբերելը (նյութական, ֆիզիկական), պատճառված վնասը վերացնելը և այլն»<sup>31</sup>:

Վ.Վ. Սվերչկովը նշում է, որ «վնասը հարթել» և «վնասը հատուցել» հասկացությունների տարբերությունը կայանում է իրավական գործողության բնույթի մեջ՝ համապատասխան տեսակի վնասներ «հաղթահարելով»: Եթե գույքային վնասը

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«հատուցվում» է, ապա ֆիզիկական և բարոյական վնասը «հարթվում է այլ եղանակով»<sup>32</sup> :

Լ.Վ. Գոլովկոն կարծիք է արտահայտել այն մասին, որ օրենսդրությամբ կիրառվող «վնասը հարթել» հասկացությունը Ռ-Դ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածում (քրեական պատասխանատվությունից ազատելու տուժողի հետ հաշտվելու դեպքում) և Ռ-Դ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածում (քրեական գործի կարճումը տուժողի հետ հաշտվելու դեպքում) համարժեք է իր իրավական բնույթով իրավունքում տարածված «վնասը հատուցել» հասկացությանը, որը, որպես կանոն, ունի «քաղաքացիաիրավական» բնույթ<sup>33</sup> : Հեղինակը նաև նշում է, որ Ռ-Դ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի կիրառման դեպքում վերոնշյալ երկու հասկացությունները՝ որպես հոմանիշներ, բացատրվում են միայն տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի առանձնահատկությունից ելնելով, որտեղ վնասը հարթելը մշտապես կամ գրեթե մշտապես առաջանում է քաղաքացիաիրավական փոխհատուցման ձևով<sup>34</sup> :

Համաձայնելով Ե.Ա. Ռուբինշտեյնի հետ՝ Լ.Վ. Գոլովկոն նշում է, որ «վնասը հարթել» և «վնասը հատուցել» հասկացությունները տարբեր են և ունեն տարբեր բովանդակություններ: Այնուամենայնիվ, նա նշում է, որ հարկավոր է հստակեցնել երկու հասկացությունների փոխհարաբերակցությունը: Այսպիսով, հարթելը հնարավոր է ոչ միայն երբ պատճառվում է ֆիզիկական կամ բարոյական վնաս, այլ նաև գույքային վնասի ժամանակ, որտեղ, օրինակ, մեղադրյալը (կասկածյալը) իր գործողություններով վերականգնել է վնասված առարկան կամ կատարել է նույնանման այլ տեսակի գործողություններ: Հեղինակը, քննադատելով Պ.Գ. Մարֆիցինին, նշում է, որ վերջինիս ներկայացրած իրավիճակն ընդհանրապես հնարավոր չէ դիտել որպես վնասի հարթում: Եթե համաշխարհային իրավաբանական արժեքները քննիչի կողմից առգրավված են մեղադրյալից և վերադարձված են տուժողին գործի քննության ընթացքում, ապա այդ գործողությունները չեն վկայում հաշտության մասին, հետևաբար չեն դիտվում որպես մեղադրյալի (կասկածյալի) կողմից վնասը հարթելուն ուղղված գործողություններ<sup>35</sup> : Հեղինակը նաև նշում է, որ վերականգնողական արդարադատության տեսանկյունից վնասը հարթելը հանդիսանում է կողմերի հաշտեցման

դրսևորումներից մեկը: Ասվածը հնարավորություն է ընձեռում վնաս հարթելը համարել քրեական պատասխանատվությունից ազատելու քրեաիրավական պայման: Վերոնշյալը հիմք է հանդիսանում եզրահանգել, որ վնասը հարթելու ժամանակ առաջանում են տարբեր բնույթի հարաբերություններ՝ քրեաիրավական, քաղաքացիաիրավական, քրեադատավարական: Հետևաբար վնասը հարթել հասկացությունն իր բովանդակությամբ ունի քրեաիրավական, քաղաքացիաիրավական, քրեադատավարական ասպեկտներ<sup>36</sup> :

Նպատակահարմար է ուսումնասիրել, թե ինչպիսի ճանապարհներով պետք է հարթել պատճառված վնասը:

Գույքային վնասը հստակ է, այսինքն՝ վնասը որոշվում է իրական կատարված ծախսերով, որը կրել է տուժողը: Ծախսերը պետք է հաստատված լինեն փաստաթղթերով<sup>37</sup> :

Պատճառված գույքային վնասը հնարավոր է հարթել տարբեր միջոցներով: Գույքային վնասի չափը որոշելու համար անհրաժեշտ է հիմք ընդունել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված դրույթը, համաձայն որի՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

Նախկինում արդեն նշել էինք, որ հնարավոր է վնասը հարթել ինչպես փաստացի, այնպես էլ կողմերի պայմանավորվածության դեպքում՝ հետագայում: ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածում «հատուցել կամ այլ կերպ հարթել նրան պատճառված վնասը» արտահայտությունն օգտագործվում է ձևաբանության տեսանկյունից. քննարկվող բայերը պատկանում են սահմանական եղանակի ներկա վաղակատար ժամանակին, որը ցույց է տալիս ներկա ժամանակակետի համեմատությամբ կատարված, ավարտված գործողություն<sup>38</sup> :

Լ.Վ. Գոլովկոն քննարկվող հարցի շուրջ նշում է, որ արտահայտության նման մեղ մեկնաբանումը սխալ է: «Տուժողը՝ որպես փոխատու, ձեռք է բերել իրավականորեն ամրագրված և ձևական

www.lawinstitute.am

սահմանված իրավունքներ՝ հանցագործություն կատարած անձին պահանջներ նեկայացնելու, այլ կերպ՝ գույքային իրավունք, որը հնարավոր է համարել որպես վնասը հատուցելու միջոց, իհարկե, այն պայմանի դեպքում, երբ տուժողը համաձայն է ընդունել նման հատուցման միջոց՝ համարելով այն բավարար»<sup>39</sup> :

Նյութական և դատավարական իրավունքերը իրավակիրառ մարմինների վրա պարտականություն չեն դնում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ որոշում կայացնելիս ստուգել պարտավորության փաստացի կատարումը:

Տուժողը կարող է ներել մեղադրյալին՝ «չստանալով» պատճառված վնասի հարթումը: Խ. Ալիկալերովը նշում է, որ այս դեպքում արձանագրության մեջ պետք է կատարել պարտադիր նշում

պայմանավորվածության պայմանի մասին՝ բացատրելով տուժողին նման մերժման հետևանքը<sup>40</sup> : Նման մոտեցումը տուժողի իրավունքների պահպանման նպատակ է հետապնդում:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոհիշյալը, կարծում ենք, որ տուժողը և հանցագործություն կատարած անձը (մեղադրյալը, կասկածյալը) պետք է ոչ միայն հաշտվեն, այլ վերջինս նաև պետք է պարտադիր հարթի հանցագործությամբ պատճառված վնասը: Այլ կերպ ասած՝ չչ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված հանցագործությամբ պատճառված վնասի փոխհատուցման իրականացումը պետք է փաստացի առկա լինի:

<sup>1</sup> St'u Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Отв. ред. А. В. Наумов. 2-е изд., перераб. и доп. М.: Юристъ, 1999. С. 206.

<sup>2</sup> St'u Уголовное право России: Учебник для вузов: В 2-х т. /Отв. ред. проф. А.Н. Игнатов, проф. Ю.А. Красиков. М.: НОРМА ИНФРА, 1999, Т. 1. Общая часть. С. 464; Уголовное право России. Общая часть: Учебник / Под ред. проф. А.И. Рарога. М.: Институт международного права и экономики. Изд-во Триада ЛТДЦ, 1997. С. 264; Добровольская С. Чтобы примирение состоялось...// Домашний адвокат. 1999, N 3-4, С. 16-17; Матвеева Ю.В. Освобождение от уголовной ответственности в связи с деятельным раскаянием: Автореф... канд. юрид. наук М., 2001, С. 27.

<sup>3</sup> St'u Աղայան Է.Գ. Արդի հայերենի բացատրական բառարան «Հայաստան» Հրատ., Երևան, 1976, էջ 871:

<sup>4</sup> St'u Աղայան Է.Գ. Արդի հայերենի բացատրական բառարան «Հայաստան» Հրատ., Երևան, 1976, էջ 1176:

<sup>5</sup> St'u Кривоченко Л.Н. Классификация преступлений. Харьков. Изд-во при Харьковском ун-те издательского объединения «Вицашкола», 1983. С. 118-119.

<sup>6</sup> St'u Кузнецова Н.Ф. Классификация преступлений // Сов. гос-во и право.1967. N 6. С. 46.

<sup>7</sup> St'u Хан-Магомедов Д.О. Классификация преступлений и некоторые вопросы освобождения от уголовной ответственности и наказания // Труды Высшей школы МООП, 1964. N 12. С. 87; Сахаров А.Б. О классификации преступлений // Вопросы борьбы с преступностью. М., 1972, Вып. 17. С. 47: Четыре категории преступлений выделяли: Н.И. Загородников, П.В. Коробов, А.И. Марцев, А.М. Царегородцев (См.: Загородников Н.И. Проблемы классификации преступлений в свете дальнейшего совершенствования уголовного закона. М., 1984. С. 47; Коробов П.В. Тяжкие преступления как самостоятельная классификационная категория // Уголовная ответственность: основания и порядок реализации. Самара: Изд-во Самарского университета, 1991. С. 20; Марцев А.И. Вопросы совершенствования норм о преступлении // Сов.гос. и право. 1988. N 11. С. 17.

<sup>8</sup> St'u Кузнецова Н.Ф. Классификация преступлений // Сов. гос-во и право.1967. N 6. С. 43.

<sup>9</sup> St'u Загородников Н.И. Проблемы классификации преступлений в свете дальнейшего совершенствования уголовного закона. М., 1984. С. 47.

<sup>10</sup> St'u Марцев А.И. Вопросы совершенствования норм о преступлении // Сов. гос. и право. 1988, N 11, С. 87.

<sup>11</sup> St'u Лесниевски-Костарева Т.А. Дифференциация уголовной ответственности: Теория и законодательство. М.: Норма, 1998. С. 159 -161.

<sup>12</sup> St'u Кривоченко Л.Н. Классификация преступлений. Харьков. Изд-во при Харьковском ун-те издательского объединения «Вицашкола», 1983, С. 49.

<sup>13</sup> St'u Фефелов П.А. Общественная опасность преступного деяния // Сов. гос-во и право. 1977, N 5, С. 135 - 138; Тоболкин П.С. Социальная обусловленность уголовно-правовых норм. Свердловск: Серд.-Урал. Кн. Изд-во, 1983, С. 196; Пермяков Ю.Е. Категория «Общественная опасность» в советском уголовном праве: Автореф... канд. юрид.



наук. М., 1989. С. 24.

<sup>14</sup> Տե՛ս Մարշև Ա.Ի. Общие вопросы о преступлении. Омск: Юридический институт МВД России, 2000. С. 136.

<sup>15</sup> Տե՛ս Аликперов Х.Д. Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // Законность, 1999. N 6. С. 13.

<sup>16</sup> Տե՛ս Ульянов В.Г. Реализация прав потерпевших в российском уголовном процессе: Автореф. канд. юрид. наук. Краснодар, 1998. С. 13 – 14.

<sup>17</sup> Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации: Общая часть / Под общ. ред. Ю.И. Скуратова, В.М. Лебедева. М.: ИНФРА-НОРМА-М, 1996. С. 213.

<sup>18</sup> Տե՛ս Давыдов П.М. Прекращение уголовных дел / П.М.Давыдов, Д.Я. Мирский. М.: Юрид. лит., 1963. С. 60.

<sup>19</sup> Տե՛ս Катькало С.И. Судопроизводство по делам частного обвинения. Ленинград / С.И. Катькало, В.З. Лукашевич. Л.: Изд-во Ленинградского ун-та, 1972. С. 123.

<sup>20</sup> Տե՛ս Гальперин И.М. Об уголовном преследовании, осуществляемом потерпевшим в советском уголовном процессе // Сов. гос-во и право. 1957. N 10. С. 52.

<sup>21</sup> Տե՛ս Аликперов Х. Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // Законность. 1999. N 6. С. 12.

<sup>22</sup> Տե՛ս ՀՀ վճարելի դատարանի 2011թ. հուլիսի 13-ի թիվ ԵԱԶԳ/0157/01/10 քրեական գործով որոշումը:

<sup>23</sup> Տե՛ս Ценева В.В. Освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим. Дис. канд. юрид. наук. Кемерово, 2002. С. 153.

<sup>24</sup> Տե՛ս Ценева В.В. Освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим. Дис. канд. юрид. наук. Кемерово, 2002. С. 156.

<sup>25</sup> Տե՛ս Плиско Р.К. Освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим. Дис. канд. юрид. наук. Владивосток, 2009. С. 147:

<sup>26</sup> Տե՛ս Ценева В.В. Освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим. Дис. канд. юрид. наук. Кемерово, 2002. С. 156.

<sup>27</sup> Տե՛ս Ценева В.В. Освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим. Дис. канд. юрид. наук. Кемерово, 2002. С. 134.

<sup>28</sup> Տե՛ս Яни П. Законодательное определение потерпевшего от преступления // Рос. юстиция. 1995. N 4. С. 41.

<sup>29</sup> Տե՛ս Сумачев А.В. Пострадавший как субъект уголовного правоотношения: Автореф... канд. юрид. наук. Рязань, 1997. С. 25.

<sup>30</sup> Տե՛ս Тадевосян Л. 3. Проблемы ответственности за неоконченную преступную деятельность по уголовному законодательству Республики Армения. Дисс. докт. юрид. наук. Москва, 2009.

<sup>31</sup> Տե՛ս Марфицин П.Г. Прекращение уголовного дела в связи с примирением с потерпевшим. //Законодательство и практика. 1999. N 2 (3). С. 37.

<sup>32</sup> Տե՛ս Сверчков В.В. Актуальные вопросы освобождения от уголовной ответственности в связи с деятельным раскаянием // Государство и право. 1999. N 12. С. 58.

<sup>33</sup> Տե՛ս Головки Л.В. Альтернативы уголовному преследованию как форма процессуальной дифференциации (современные тенденции развития). Дисс. док. юрид. наук. Москва, 2003. С. 393-394.

<sup>34</sup> Տե՛ս նույն տեղում՝ էջ 394: Սակայն հեղինակը ուշադրություն է հրավիրում այն փաստին, որ. «... այլ իրավական դեպքերում, օրինակ՝ ՌԴ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի (քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն գոյալու դեպքում) կիրառման դեպքում, «վնասը հարթել» և «վնասը հատուցել» հասկացությունները տարբեր են կամ առնվազն նույնական իրավական երևույթներ չեն»:

<sup>1</sup> Տե՛ս Рубинштейн Е.А. Нормативное регулирование института прекращения уголовных дел в связи с примирением сторон. Дис. канд. юрид. наук. Ставрополь, 2004. С. 110.

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում՝ Рубинштейн Е. А. էջ 111: Հեղինակը նաև սահմանում է, որ վնասը հարթելու շրջանակներում նպատակի իրականացումը կայանում է տուժողի խախտված իրավիճակի վերականգնման և մեղավորի կողմից իր կատարած արարքի գիտակցման մեջ (մեղքի քավում):

<sup>1</sup> Տե՛ս Добровольская С. Чтобы примирение состоялось... // Домашний адвокат. 1999. N 3 – 4. С. 16-17.

<sup>1</sup> Տե՛ս Եզեկյան Լ. Հայոց լեզու, երկրորդ վերանշակված հրատարակություն. ԵՊՀ հրատարակչություն. Երևան, 2007, էջ 293:

<sup>1</sup> Տե՛ս Головки Л.В. Прощение долга – одно из оснований прекращения уголовного дела // Рос. юстиция. 1998. N 4. С. 45.

<sup>1</sup> Տե՛ս Аликперов Х. Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // Законность, 1999. N 6, С.13.

**РЕЗЮМЕ**

***Основания и условия освобождения от уголовной ответственности  
в связи с примирением с потерпевшим***

В данной статье автор исследовал основания и условия освобождения от уголовной ответственности в связи с примирением сторон и особенности их разграничения. Для эффективного исследования автор сослался на проблемы основания и условия освобождения от уголовной ответственности. Данная работа примечательна тем, что автор изучил множество мнений теоретиков, что и послужило основанием новых законодательных предложений со стороны автора.

Ключевые слова: освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим, основания и условия освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим.

**SUMMARY**

***Grounds and conditions of exemption from criminal liability in case  
of reconciliation with the aggrieved***

Author has explored the grounds and conditions of exemption from criminal liability in case of reconciliation with the aggrieved and peculiarities of their separation in this article.

For productive study author has examined numerous researchers' reviews, in base of which has referred to the problems of application of mentioned institutions grounds and conditions and as a result suggested his approaches to the mentioned issue.

Key words: exemption from criminal liability in case of reconciliation with the aggrieved, grounds and conditions of exemption from criminal liability in case of reconciliation with the aggrieved.

**ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

**ԽԱՐԵՈՒԹՅԱՆ ԿԱՄՎԱՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ  
ՉԱՐԱՇԱՀԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՈՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ  
ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ  
ԼՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ**

Սեփականության իրավունքը յուրաքանչյուր հասարակության տնտեսության կայունության հիմնաքարն է: Սեփականության իրավունքի պաշտպանությունը յուրաքանչյուր հասարակության առաջնային հիմնախնդիրներից է: Դա է պատճառը, որ յուրաքանչյուր պետության իրավական համակարգում սեփականության շուրջ ձևավորվող հարաբերությունները կարգավորվում են իրավունքի հիմնական ճյուղերի կողմից: Համաձայն ՀՀ Սահմանդրության՝ «Յուրաքանչյուր որ իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: ... Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով, նախատեսված դեպքերի»<sup>1</sup>: Այսինքն, սեփականությունից անձը կարող է զրկվել միայն օրենքով նախատեսված դեպքում և կարգով: Այլ կերպ անձին սեփականությունից զրկելը հանդիսանում է իրավախախտում, և կախված արարքի բնույթից՝ գտնվում է քրեական, քաղաքացիական, վարչական և այլ իրավունքի ճյուղերի պաշտպանության ներքո:

Սեփականության դեմ ուղղված առավել վտանգավոր ոտնձգությունները պաշտպանվում են ՀՀ քրեական օրենքով:

Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ են համարվում հանրորեն վտանգավոր արարքները, որոնք խախտում են սեփականատիրոջ կողմից գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավունքները կամ այլ կերպ սեփականատիրոջը պատճառում են (կամ սպառնում են պատճառել) գույքային վնաս<sup>2</sup>:

ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ գլուխը ամբողջությամբ նվիրված է սեփականության դեմ ուղղված հանցագործություններին<sup>3</sup>: Իրավաբանական գրականության մեջ սեփականության դեմ ուղղված հանցագործությունները երբեմն բաժանում են 2

խմբի՝ հափշտակություններ և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ<sup>4</sup>: Ա.Ի. Բոյցովը և Վ.Պ. Ռեվինը սեփականության դեմ ուղղված հանցագործությունները բաժանում են 3 խմբի՝

1. հափշտակություններ,
2. սեփականության դեմ ուղղված այլ շահադիտական հանցագործություններ, որոնք չեն պարունակում հափշտակության հատկանիշներ,
3. սեփականության դեմ ուղղված հանցագործություններ, որոնք կապված չեն գույքային օգուտ ստանալու հետ<sup>5</sup>:

Առաջին խմբի մեջ անհրաժեշտ է ներառել ավազակությունը (հոդված 175-րդ), կողոպուտը (հոդված 176-րդ), գողությունը (հոդված 177-րդ), խարդախությունը (հոդված 178-րդ), յուրացնելը կամ վատնելը (հոդված 179-րդ), առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելը (հոդված 180-րդ), հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ (հոդված 181-րդ), երկրորդ խմբի մեջ՝ շորթումը (հոդված 182-րդ), ավտոմեքենային կամ տրանսպորտային միջոցին ապօրինաբար տիրանալն առանց հափշտակելու նպատակի (հոդված 183-րդ) և գույքային վնաս պատճառելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով (հոդված 184-րդ), իսկ երրորդ խմբի մեջ՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը (հոդված 185-րդ), գույքն անգողությամբ ոչնչացնելը կամ վնասելը (հոդված 186-րդ) և գույքի պահպանության պարտականություններն անփույթ կամ անբարեխիղճ կատարելը (հոդված 186<sup>1</sup>):

Պետք է համաձայնել Ա.Ի. Բոյցովի և Վ.Պ. Ռեվինի կողմից սեփականության դեմ ուղղված հանցագործությունների նշված դասակարգմանը, և ցանկալի է ՀՀ քրեական օրենսդրության մեջ սեփականության դեմ ուղղված հանցագործություններ-

www.lawinstitute.am

րը առանձին գլուխներով բաժանել երեք խմբի՝ վերը նշված դասակարգմանը համապատասխան: Այս բաժանումը ավելի համակարգված կդարձնի ՀՀ քրեական օրենսդրությունը և կհստակեցնի սեփականության դեմ ուղղված հանցագործությունների խմբերի տարանջատումը:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում գույքային վնաս պատճառելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով: ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու համար: Համաձայն այդ հոդվածի՝ քրեորեն պատժելի արարք է համարվում «խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով սեփականատիրոջը կամ գույքի այլ տիրապետողին խոշոր չափերի վնաս պատճառելը, եթե բացակայում են հափշտակության հատկանիշները»:

Տվյալ հանցակազմի ձևակերպումը թերի է և ունի լրացման կարիք: Նախ, քննարկվող հանցակազմում խոսքը գնում է գույքային վնասի մասին, սակայն անհայտ պատճառներով օրենսդիրը հոդվածի դիսպոզիցիայում նշել է «խոշոր չափերի վնաս», մինչդեռ «վնաս» բառից առաջ պետք է լինեն «գույքային» բառը<sup>6</sup>: Հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով: Խաբեությունը դիտարկության մեջ իրականությունը խեղաթյուրելու, կեղծ փաստեր հաղորդելու, իրական փաստերը չհայտնելու ձևով: Վստահության չարաշահումը դրսևորվում է այնպիսի վարքագծով, որով հանցավորը մոլորության մեջ է գցում գույքի սեփականատիրոջը կամ գույքի այլ տիրապետողին իր իրական մտադրությունների կապակցությամբ, վստահություն է առաջացնում նրանց մեջ իր ապագա վարքագծի վերաբերյալ, սակայն նրա դիտարկությունը ուղղված է հակաօրինական արարք կատարելուն<sup>7</sup>: Փաստորեն, որպես նշված հանցագործության հատկանիշ նշվում են խաբեությունը և վստահության չարաշահումը:

Հարկ է նշել նաև, որ օբյեկտիվ կողմի այս հատկանիշներով տվյալ հանցակազմը նմանվում է խարդախությանը: Սակայն, եթե խարդախության դեպքում հանցավորի գործողությունների արդյունքում գույքը դուրս է գալիս սեփականատիրոջ ֆոնդից, ապա գույքային վնաս պատճառելու դեպքում

սեփականատիրոջ գույքային ֆոնդը չի պակասում. ուղղակի գույքը, որը պետք է ստանար սեփականատերը, հանցավորի գործողությունների պատճառով մուտք չի գործում նրա ֆոնդ, կամ նրան գույքային վնաս է հասցվում բաց թողնված օգուտի ձևով<sup>8</sup>:

Քննարկվող հանցագործության առավել տարածված օրինակներ են մատուցված կոմունալ ծառայությունների դիմաց վճարելուց խուսափելը, անօրինական, առանց վճարելու էլեկտրաէներգիայից և այլ ջերմային էներգիայից օգտվելը, պետական կամ արտաբյուջետային վճարումներից խուսափելը (բացառությամբ հարկային և մաքսային վճարներից խուսափելու, որոնց համար սահմանված է առանձին քրեական պատասխանատվություն), բնակչությանը մասնավոր կամ այլ հանրային ծառայությունների մատուցման դիմաց, ինչպես նաև տրանսպորտով երթևեկելու դիմաց վճարելուց խուսափելը, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց պատկանող տրանսպորտային կամ այլ միջոցների ինքնակամ օգտագործումը առանց դրանց օգտագործման դիմաց վճարելու և այլն<sup>9</sup>:

Քանի որ քննարկվող հանցագործության հիմնական հատկանիշ են համարվում խաբեությունը և վստահության չարաշահումը, հարկ ենք համարում անդրադառնալ հանցավորի կողմից էլեկտրաէներգիայի ընդհանուր գծից «ձախ» գիծ միացնելով դրանից օգտվելուն, ինչը որակվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմով: Այս դեպքում հանցավորի գործողությունների արդյունքում էլեկտրաէներգիա մատակարարող ընկերությանը կամ պետությանը հասցվում է գույքային վնաս: Այսպիսի հակաօրինական գործողությունները լայն տարածում էին գտել ՀՀ-ում 20-րդ դարի 90-ական թվականներին և մինչ օրս էլ ունեն իրենց տեղը մեր հասարակության մեջ:

Դիտարկենք հետևյալ օրինակը. քաղաքացի Ա.-ն ավելին քան երկու տարի օգտվել է էլեկտրաէներգիայից առանց դրա դիմաց վճարելու այն բանից հետո, երբ նրա էներգամատակարարումը անջատվել է՝ երկար ժամանակ դրա դիմաց չվճարելու պատճառով: Իր էլեկտրամատակարարման անջատումից հետո Ա.-ն ինքնակամ միացում է կատարել իր տան հարևանությամբ անցնող ընդհանուր էլեկտրական հաղորդալարից՝ էլեկտրականության դիմաց պարտադիր վճարումներից խուսափելու նպատակով: Նշված ժամանակահատ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վածում Ա.-ն էլեկտրաէներգիայի մատակարարին պատճառել է գույքային վնաս 800.000 ՀՀ դրամի չափով: Այս դեպքում, ինչպես տեսնում ենք, հանցագործության դիսպոզիցիայում նշված պարտադիր հատկանիշներից ոչ խաբեություն, ոչ էլ վատահույության չարաշահում տեղի չի ունենում, այլ հանցավորը գործում է գաղտնի: Այսինքն, հանցավորի կողմից իրականության խեղաթյուրում, կեղծ փաստերի հաղորդում, իրականությունը թաքցնել տեղի չի ունենում: Ինչ վերաբերում է վատահույությունը չարաշահելուն, ապա հանցավորի և տուժողի միջև եղած վատահույության հարաբերությունները արդեն իսկ դադարել էին այն բանից հետո, երբ տուժողը հրաժարվել էր հանցավորին էլեկտրաէներգիա մատակարարելուց և անջատել էր վերջինիս էլեկտրամատակարարումը: Ուստի, այստեղ վատահույությունը չարաշահելու մասին խոսք լինել չի կարող: Այս դեպքում հանցավորը գաղտնի է գույքային վնաս պատճառում էլեկտրաէներգիա մատակարարողին:

Բերված օրինակում խոսք չի կարող լինել հափշտակության մասին, քանի որ հանցավորը ձեռք չի բերում գույք, այլ իր գործողություններով փորձում է խնայել իր միջոցները և չվճարել օգտագործված էներգիայի դիմաց՝ դրանով իսկ պատճառելով սեփականտիրոջը գույքային վնաս բաց թողնված օգուտի տեսքով:

Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի դիսպոզիցիայում ավելացնել հանցագործության կատարման գաղտնի եղանակը ևս և շարադրել դիսպոզիցիան հետևյալ կերպ. «*Խաբեության, վատահույությունը չարաշահելու եղանակով կամ գաղտնի կերպով սեփականատիրոջը կամ գույքի այլ տիրապետողին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը, եթե բացակայում են հափշտակության հատկանիշները, պատժվում է ...*»:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գլխում սահմանված են չափեր, որոնք ընդհանուր են թե՛ ֆիզիկական և թե՛ իրավաբանական անձանց ու պետությանը վնաս պատճառելու համար: Սակայն, պետք է նշել, որ թե՛ հափշտակության դեպքում, թե՛ սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքում հասցված միևնույն չափի գույքային վնասը, կախված տուժողի գույքային դրությունից, կարող է ունենալ վտանգավորության տարբեր աստիճան: Օրինակ, 50.000 ՀՀ դրամին համարժեք գույքի հափշտակու-

թյունը կամ այլ գույքային վնաս պատճառելը ֆիզիկական անձի համար կունենա ավելի ծանր հետևանքներ, քան իրավաբանական անձի կամ պետության համար: Ուստի, այս հարցը ևս պետք է ենթարկել օրենսդրական կարգավորման:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների սոցիալական վիճակը՝ առաջարկվում է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գլխին վերաբերող չափերի ծանոթագրությունները<sup>10</sup> փոփոխել և շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Սույն գլխում զգալի չափ է համարվում ֆիզիկական անձանց գույքային վնաս պատճառելու դեպքում՝ հանցագործության պահին, Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեքհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), իսկ իրավաբանական անձանց կամ պետությանը գույքային վնաս պատճառելու դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ութհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը):

Սույն գլխում խոշոր չափ է համարվում ֆիզիկական անձանց գույքային վնաս պատճառելու դեպքում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), իսկ իրավաբանական անձանց կամ պետությանը գույքային վնաս պատճառելու դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից երեքհազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը):

Սույն գլխում առանձնապես խոշոր չափ է համարվում ֆիզիկական անձանց գույքային վնաս պատճառելու դեպքում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը), իսկ իրավաբանական անձանց կամ պետությանը գույքային վնաս պատճառելու դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)<sup>11</sup>»:

(Քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի մասով առանձին ծանոթագրություն ավելացնել հենց այդ հոդվածում):

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրություն, ընդ.՝ 1995թ. հուլիսի 5, փոփ.՝ 2005թ. դեկտեմբերի 5, ՀՀՊՏ 2005.12.05, հոդված 31:

<sup>2</sup> Տե՛ս Уголовное право России, под ред. В.П. Ревина, 2010г., С. 85.

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ. 407, ՀՕ-528-Ն, 01.08.2003թ., հոդվ. 175-1861:

<sup>4</sup> Տե՛ս Քրեական իրավունք, Հատուկ մաս, խմբ. Գ. Ղազինյան, Երևան-2006, էջ 348:

<sup>5</sup> Տե՛ս Бойцов А.И. “Преступления против собственности”, Санкт-Петербург, 2002г, էз 99, Уголовное право России, под ред. В.П. Ревина, 2010г., С. 85.

<sup>6</sup> Տե՛ս Քրեական իրավունք, Հատուկ մաս, խմբ. Գ. Ղազինյան, Երևան-2006, էջ 411:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 392:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 411:

<sup>9</sup> Տե՛ս Уголовное право. Особенная часть, под. ред. Козаченко И.Я. 2008г., С. 289.

<sup>10</sup> Տե՛ս Ֆանկալի է, որ ՀՀ քրեական օրենսգրքում ծանոթագրությունները առանձին պարբերությամբ հենց այդպես էլ նշվեն՝ «Ծանոթագրություն»:

<sup>11</sup> Տե՛ս Չափեր հանդիսանում են միայն օրինակներ, և դրանք որոշելիս օրենսդիրը պետք է հաշվի առնի ներպետական տնտեսական զարգացումները, համախառն ներքին արդյունքը, քաղաքացիների սոցիալական վիճակը և այլ հանգամանքներ:

## РЕЗЮМЕ

### *К вопросу о дополнении и улучшении состава преступления по причинению имущественного ущерба путем обмана или злоупотребления доверием*

В статье рассматриваются преступления против собственности, охраняемой Уголовным кодексом Республики Армения и, в частности, состав преступления по причинению имущественного ущерба путем обмана или злоупотребления доверием. Предлагается внести некоторые структурные изменения в главе о преступлениях против собственности с целью дифференциации преступлений. Рассматривая состав преступления по причинению имущественного ущерба путем обмана или злоупотребления доверием, автор предлагает некоторые изменения в соответствующей статье, относящиеся к восполнению существующих пробелов, уточняя тем самым сферу отношений, регулируемых данной статьей.

## SUMMARY

### *About the amendments and improvements in the composition of the article of infliction of damage to property by fraud or abuse of trust.*

The article deals with crimes against property, protected by the Criminal Code of the Republic of Armenia and, in particular, it deals with the infliction of damage to property by fraud or abuse of trust. It is proposed to make some structural changes in the chapter on crimes against property with a view to make it more accessible and differentiated by the groups of crimes against property. Taking into consideration the offence on infliction of damage to property by fraud or abuse of trust, the author proposes some changes to the relevant article related to the existing gaps, thereby clarifying the scope of relations covered by the article.

### ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

## ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ծագման համար անհրաժեշտ են օբյեկտիվ, սուբյեկտիվ և ձևական մի շարք նախադրյալներ: Իրավաբանական գրականության մեջ, բողոքարկման իրավունքի իրականացման սուբյեկտիվ նախադրյալներ ասելով, ավանդաբար, հասկացվում է այն սուբյեկտների շրջանակը, ովքեր ունեն բողոք ներկայացնելու իրավունք:

Նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների սահմանմանը օրենսդիրը նվիրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի<sup>1</sup> (այսուհետ՝ ՔԴՕ) 204.31-րդ հոդվածը, որի 1-ին կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք և նրանց իրավահաջորդները:

Գործին մասնակցող անձինք քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունների հիմնական մասնակիցներն են, որոնց շարքին են դասվում կողմերը, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող և չներկայացնող երրորդ անձինք, ինչպես նաև հատուկ հայցային և հատուկ վարույթներով դիմողները: Նշված սուբյեկտներին մեկ խմբում ընդգրկելը պայմանավորված է նրանով, որ դրանք բոլորն էլ գործի ելքում ունեն իրավաբանական շահագրգռվածություն<sup>2</sup>: Իսկ այդ հանգամանքի ուժով դատավարական օրենսդրությունը արդարացիորեն գործին մասնակցող անձանց օժտել է վարույթի շարժման վրա ազդելու հնարավորությամբ, այդ թվում՝ դատական ակտերի բողոքարկման իրավունքով (ՔԴՕ 28-րդ հոդվ., 1-ին մաս, 7-րդ կետ):

Սակայն, պետք է նկատի ունենալ, որ ոչ միշտ է հնարավոր լինում գործին մասնակցող անձանց կողմից դատական ակտերի բողոքարկման

իրավունքը իրականացնել, քանի որ հաճախ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի հանգամանքների բերմամբ (քաղաքացու մահ, իրավաբանական անձի վերակազմակերպում, պահանջի զիջում, պարտքի փոխանցում և այլն) նրանք կարող են դուրս գալ նյութական իրավահարաբերություններից և դրանով իսկ կորցնել գործի ելքով իրավաբանական շահագրգռվածությունը: Նման դեպքերում առաջանում է դատավարական իրավահաջորդություն կատարելու անհրաժեշտություն, որը, ՔԴՕ 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում: Ընդ որում, դատավարական իրավահաջորդությունը կարող է կատարվել ոչ միայն վիճելի, այլև վճռով սահմանված իրավահարաբերությունից անձի դուրս գալու դեպքում<sup>3</sup>:

Ինչպես հետևում է շարադրվածից, դատավարական իրավահաջորդության հիմքը նյութական իրավահաջորդությունն է, որը կարող է լինել ինչպես ընդհանուր (ունիվերսալ), երբ իրավահաջորդին են անցնում իրավանախորդի բոլոր իրավունքները և պարտականությունները, այնպես էլ մասնակի (սինգուլյար), երբ իրավահաջորդին են փոխանցվում նյութական իրավահարաբերության առանձին սուբյեկտիվ իրավունքներ կամ պարտականություններ: Այդուհանդերձ, գոյություն ունեն իրավունքների և պարտականությունների առանձին տեսակներ, օրինակ՝ ալիմենտային պարտավորություններով իրավունքները և պարտականությունները, որոնք չեն կարող հանդիսանալ նյութական իրավահաջորդության օբյեկտ<sup>4</sup>:

Հետևաբար, նույնիսկ այն դեպքում, երբ քաղաքացու մահվան հետևանքով տեղի է ունեցել ընդհանուր իրավահաջորդություն, սակայն կոնկրետ գործով վիճելի հարաբերության դեպքում դա չի թույլատրվում, այսինքն՝ համապատասխան

իրավունքները և պարտականությունները ենթակա չեն փոխանցման, ապա այդ դեպքերում դատավարական իրավահաջորդությունը պետք է բացառել, իսկ որպես դրա դատավարական հետևանք՝ քաղաքացիական գործի վարույթը կարճել (ՔԴՕ 109-րդ հոդվ., 4-րդ կետ):

Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո առանձնակի կարևորություն է ստանում այն հարցադրումը, թե ինչպիսի բովանդակությամբ է օրենսդիրը ՔԴՕ 204.31-րդ հոդվածում օգտագործել «նրանց իրավահաջորդները» արտահայտությունը:

Դատավարագիտության մեջ անվիճելի է այն մոտեցումը, ըստ որի՝ անկախ այն հանգամանքից, թե նյութական իրավունքում իրավահաջորդությունը ընդհանուր է, թե մասնակի, դատավարական իրավահաջորդությունը միշտ էլ ընդհանուր է, քանի որ դատարանի կողմից իրավանախորդին իրավահաջորդով փոխարինելու պահից նրան են անցնում իրավանախորդի դատավարական իրավունքների և պարտականությունների համալիրը, իսկ իրավանախորդը դուրս է գալիս դատավարությունից<sup>5</sup>: Այսինքն՝ իրավահաջորդը, մտնելով վարույթ, ձեռք է բերում այն նույն դատավարական կարգավիճակը, ինչ նրա կողմից փոխարինված իրավանախորդը:

Այս տեսանկյունից հարցը դիտարկելիս ակնհայտ է, որ քննարկվող դրույթում խոսքը վերաբերում է գործին մասնակցող անձանց իրավահաջորդներին ոչ թե դատավարական, այլ նյութաիրավական իմաստով: Հակառակ դեպքում գործին մասնակցող անձանցից առանձին դրանց մասին խոսելը կիմաստագրկվեր և չէր ունենա որևէ իրավական նշանակություն այն առումով, որ իրավահաջորդության թույլատրված անձն արդեն իսկ ունի գործին մասնակցող անձի դատավարական կարգավիճակ:

Նման պայմաններում ստացվում է, որ գործին մասնակցող անձի ցանկացած իրավահաջորդ իրավասու է ներկայացնել դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով՝ վերանայման բողոք նույնիսկ այն դեպքում, երբ վիճելի կամ դատական ակտով հաստատված իրավահարաբերությունները թույլ չեն տալիս իրավահաջորդություն: Իսկ այդ հանգամանքը, փաստորեն, հակասության մեջ է գտնվում դատավարական իրավահաջորդության իմաստիտուտի էության հետ: Ուստի, վիճելի կամ դատական ակտով հաստատված իրավահարաբերություններում իրավահաջորդության թույլ

լատրելիության պայմանը պետք է պարտադիր կերպով ամրագրվի ՔԴՕ 204.31-րդ հոդվածում, իսկ դրա չպահպանումը հանգեցնի համապատասխան բողոքի վերադարձմանը:

Որոշակի տեսական և գործնական հետաքրքրություն է ներկայացնում դատախազի կողմից նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք բերելու հնարավորության հարցի պարզումը, քանի որ այդ մասին ՔԴՕ-ն որևէ ուղղակի կարգավորում չի նախատեսել:

Գործող դատավարական օրենսդրությունը դատախազի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը ամենից առաջ պայմանավորել է պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման հանգամանքով (ՀՀ Սահմանադրության<sup>6</sup> 103-րդ հոդվ., 4-րդ մաս, 4-րդ կետ): Հարկ է նշել, որ քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության մեջ չկա միասնական մոտեցում պետական շահերի պաշտպանության հայց հարուցած դատախազի դատավարական կարգավիճակի վերաբերյալ:

Այսպես, որոշ հեղինակների կարծիքով՝ դատախազը քաղաքացիական դատավարությունում հանդես է գալիս պետության ներկայացուցչի կարգավիճակում, ով իրականացնում է օրինականության նկատմամբ հսկողություն<sup>7</sup>: Ըստ հեղինակների մյուս մասի՝ դատախազը քաղաքացիական դատավարությունում ունի կողմի կարգավիճակ և հանդիսանում է դատավարության կողմ, եթե հարուցել է հայց<sup>8</sup>: Իսկ դատավարագետների երրորդ խումբը (Վ.Ն. Արզունովը, Ա.Ա. Վլասովը և այլք) հայց հարուցած դատախազին հայցվոր է համարում միայն դատավարական իմաստով<sup>9</sup>:

Կարծում ենք, որ առավել հիմնավորված է թվում հենց վերջին տեսակետը, քանի որ պետական շահերի պաշտպանության հայց հարուցած դատախազը չի հանդիսանում վիճելի իրավահարաբերության սուբյեկտ, նրա դեմ չի կարող ներկայացվել հակընդդեմ հայց, նա չի կրում պետական տուրքի վճարման պարտավորություն, և նրա վրա չեն տարածվում կայացված վճռի օրինական ուժի նյութաիրավական հետևանքները:

Դրա հետ մեկտեղ օրենսդիրը պետական շահերի պաշտպանությամբ դատարանում հանդես եկած դատախազին վերապահել է այն բոլոր իրավունքները և պարտականությունները, որոնք դատավարական օրենքով սահմանված են հայցվորի



համար («Դատախազության մասին» ՀՀ օրենքի<sup>10</sup> 27-րդ հոդվ., 5-րդ մաս): Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ հայցվոր դատախազը՝ որպես գործին մասնակցող անձ, ունի նաև նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերելու իրավունք:

Բացի պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումից, քաղաքացիական դատավարությանը դատախազի մասնակցությունը կարող է դրսևորվել նաև այլ ձևով: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը սահմանում է, որ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատախազությունը բողոքարկում է դատարանի վճիռները և որոշումները: Ընդ որում, ինչպես, արդարացիորեն, նշում է Ռ.Գ. Պետրոսյանը, դատախազությունն իրավունք ունի օգտվելու իր այս լիազորությունից նույնիսկ այն դեպքերում, երբ համապատասխան դատական ակտերը կայացվել են առանց նրա մասնակցության<sup>11</sup>: Այլապես սահմանադրական նման դրույթը չէր ունենա նորմատիվային արժեք, քանի որ պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումից հետո դատախազը, դառնալով գործին մասնակցող անձ, այսպես, թե այնպես, ի թիվս այլ դատավարական իրավունքների, ունի նաև դատական ակտերի բողոքարկման իրավունք:

Հատկանշական է, որ հենց այս տրամաբանությունն է դրված դատախազության՝ դատական ակտերի բողոքարկման լիազորության իրականացումը կոնկրետացնող «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքում, որի համաձայն. «Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող են բերել միայն գլխավոր դատախազն ու նրա տեղակալները: Ընդ որում, քաղաքացիական կամ վարչական գործով պետական շահերին վերաբերող օրինական ուժի մեջ մտած դատական ակտը գլխավոր դատախազն ու նրա տեղակալները կարող են բողոքարկել անկախ տվյալ գործի քննությանը դատախազության մասնակցությունից»:

Այսպիսով, նույնիսկ գործի քննությանը մասնակցած չլինելու դեպքում դատախազությունը՝ ի դեմս գլխավոր դատախազի և նրա տեղակալների, իրավասու է պետական շահերին վերաբերող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը նոր երևան եկած հանգամանքներով վերանայման բողոք ներկայացնել վճռաբեկ դատարան: Հետևաբար, արդարացված կլինի ԲԴՕ նախա-

տեսված նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք բերելու իրավունք ունեցող անձանց ցանկում առանձին խոսել նաև գլխավոր դատախազի և նրա տեղակալների մասին: Իսկ դրանով կվերանա «Դատախազության մասին» ՀՀ օրենքի և ԲԴՕ միջև հնարավոր աններդաշնակություն առաջանալու հավանականությունը այն դեպքերի համար, երբ գործի քննությանը դատախազությունը մասնակցած չի լինի, այսինքն՝ չի ունենա գործին մասնակցող անձի կարգավիճակ:

Միևնույն ժամանակ, տարակուսանքի տեղիք է տալիս այն հանգամանքը, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքը որևէ կարգավորում չի պարունակում այն հարցի վերաբերյալ, թե ովքեր են իրավասու բողոքարկել պետական շահերին վերաբերող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերաքննիչ դատարանում: Մինչդեռ ակնհայտ է, որ պետական շահերի պաշտպանության նպատակով կարող է անհրաժեշտ լինել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը բողոքարկել ոչ միայն վճռաբեկ, այլև վերաքննիչ դատարան:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը՝ կարծում ենք, որ հիմնավոր կլինի նախատեսել պետական շահերին վերաբերող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը նաև վերաքննիչ դատարանում բողոքարկելու հնարավորություն և այն նույնպես վերապահել գլխավոր դատախազին և նրա տեղակալներին:

ԲԴՕ 204.31-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք բերելու իրավունք ունեն այն անձինք, ովքեր օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա դրությամբ ունեցել են այդ իրավունքը «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն կամ նույն օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կամ 5-րդ կետերի ուժով զրկված են եղել սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից»: Իսկ նույն հոդվածի 3-րդ կետը այդպիսի իրավունք է վերապահում նաև այն անձանց, ովքեր Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող մի-

ջազգային դատարանի կողմից համապատասխան դատական ակտի կայացման պահին ունեցել են միջազգային պայմանագրի պահանջներին (ժամկետներին) համապատասխան միջազգային դատարան դիմելու իրավունք:

Թեև նշված դրույթների ձևակերպումները կրում են ընդհանրական բնույթ, այսինքն՝ առաջին տպավորությամբ հավասարապես կիրառելի են և՛ նոր երևան եկած, և՛ նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելիս, այնուամենայնիվ, հիմք ընդունելով այդ նորմերի բովանդակությունը, գտնում ենք, որ տվյալ դեպքում խոսքը կարող է վերաբերել բացառապես նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայմանը: Այլ կերպ ասած՝ նույնիսկ ՔԴՕ 204.31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի պահանջներին անձի համապատասխանության դեպքում վերջինս իրավասու չէ ներկայացնելու դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու բողոք:

Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում նկատել, որ քննարկվող դրույթներում առկա իրավակարգավորումները այնքան էլ հաջողված չեն թվում: Մասնավորապես, դրանցում օգտագործված «այն անձինք» արտահայտության տառացի մեկնաբանության դեպքում ստացվում է, որ անձը ՔԴՕ 204.31-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ կետերի պայմանները բավարարելու դեպքում, անկախ նրանից՝ հանդիսանում է տվյալ գործին մասնակցող անձ, թե՞ ոչ, իրավունք ունի ներկայացնելու դատական ակտը նոր հանգամանքներով վերանայելու բողոք:

Այս իրավիճակը, ըստ էության, հետևանք է այն բանի, որ օրենսդիրը, առանց խորամուխ լինելու հարցի էության մեջ, տառացիորեն վերաբարձրել է ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից նոր հանգամանքների վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները, որոնց նպատակը ոչ թե նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայում պահանջելու իրավունքի ընձեռումն է անսահմանափակ թվով անձանց, այլ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի արդյունավետության բարձրացումը<sup>12</sup>: Ուստի, հնարավոր խառնաշփոթներից խուսափելու համար արդարացված կլինեի ՔԴՕ 204.31-րդ հոդվածից հանել նշված դրույթները և դրանք համապատասխան փոփոխություններով ամրագրել նոր հանգամանքներն ամրագրող ՔԴՕ 204.33-րդ հոդվածում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ երկրներ նոր երևան եկած հանգամանքներով բողոք ներկայացնելու իրավունք են վերապահել նաև այլ սուբյեկտների: Ասվածի օրինակ է հանդիսանում Լիտվայի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, որը վարույթի նորոգում պահանջելու իրավունք է նախատեսել ոչ միայն գործին մասնակցող անձանց, այլև այն անձանց համար, որոնք մասնակից չեն դարձվել գործին, և նրանց իրավունքները խախտվել են օրինական ուժի մեջ մտած դատական ակտով<sup>13</sup>:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ ևս հաճախ կարծիքներ են արտահայտվում այն մասին, որ անհրաժեշտ է ընդլայնել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը՝ դրանում ներառելով նաև գործին մասնակից չդարձած այն անձանց, ում իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Այսպես, ռուս դատավարագետ Ս.Ս. Չավրիևը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այդպիսի իրավունքով նշված անձինք օժտված են հսկողական վարույթում, առաջարկում է դատական պրակտիկայում խնդիրներից խուսափելու համար օրենքում կատարել համապատասխան լրացում<sup>14</sup>: Իսկ, օրինակ, Ս.Մ. Ախմեդովը իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ գործին մասնակից չդարձված անձանց նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման համար դատարան դիմելու իրավունքի չտրամադրումը չի համապատասխանում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի այնպիսի հիմնարար սկզբունքին, ինչպիսին է արդար դատաքննության իրավունքը<sup>15</sup>:

Իհարկե, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի՝ որպես մարդու խախտված իրավունքները ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին համապատասխան արդար և արդյունավետ դատաքննությամբ վերականգնելու կարևոր երաշխիքի նշանակությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, թե որքան լայն է դրանից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Այդուհանդերձ, ասվածն ինքնին չի կարող հիմք ծառայել՝ գործին մասնակից չդարձած անձանց դրանց շարքում ներառելու համար, և այդ հարցը անհրաժեշտ ենք հա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մարում դիտարկել ամենից առաջ նոր երևան եկած հանգամանքների էության լույսի ներքո:

Կարծում ենք, որ հանգամանքների նոր երևան եկած լինելու հնարավորությունը ուղղակի կախվածության մեջ է գտնվում անձի՝ գործի քննությանը մասնակցությունից, քանի որ հանգամանքները այդպիսին կհամարվեն միայն այն դեպքում, երբ դատական ակտի հիմքում չեն դրվի գործի քննության ժամանակ գործին մասնակցող անձանց և դատարանին անհայտ լինելու ուժով: Նման եզրահանգումը բխում է նաև ՔԴ-Օ 204.32-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից, ըստ որի՝ օրենսդիրը նոր երևան եկած է համարում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց կամ հայտնի են եղել, սակայն նրանց կամքից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան:

Հետևաբար, գործին մասնակցից չդարձվելու պայմաններում անձին նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք բերելու իրավունքի վերապահումը ընդունելի չի թվում: Այս առումով հատկանշական է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը տարբեր գործերով բազմիցս դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ գործին մասնակցից չդարձված անձանց հայտնի փաստերը որևէ կերպ չեն կարող համարվել նոր երևան եկած հանգամանքներ, իսկ նրանք չունեն այդ հանգամանքների հիմքով բողոք բերելու իրավունք<sup>16</sup>:

Բացի այդ, բոլոր այն դեպքերում, երբ դատարանը գործը քննում և լուծում է առանց այն անձանց գործի քննությանը մասնակցից դարձնելու, ում իրավունքներին և պարտականություններին վերաբերելու է կայացվելիք դատական ակտը, ապա կարելի է խոսել դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի խախտման մասին: Իսկ, ինչպես գիտենք, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայումը չի կարող ծառայել դատական սխալի վերացմանը: Այդ պատճառով էլ գործող դատավարական օրենսդրությունը, ի ապահովումն յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքի, գործին մասնակցից չդարձած անձանց, ում իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատարանը կայացրել է գործն, ըստ էության, լուծող դատական ակտ, վերապահել է նման դատական ակտերի դեմ ոչ թե նոր երևան եկած հանգամանքներով, այլ վերաքն-

նիչ և վճռաբեկ բողոք բերելու իրավունքով (ՔԴ-Օ 205-րդ և 229-րդ հոդվ.):

Հարկ է նշել, որ նախկին որոշ խորհրդային հանրապետությունների (Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, Վրաստանի ՍՍՀ և այլն) քաղաքացիական դատավարության օրենսգրքերը նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք էին նախատեսում նաև խորհրդային հանրապետության գերագույն դատարանի նախագահի, նրա տեղակալի, ինչպես նաև ինքնավար մարզի դատարանի նախագահի համար: Ընդ որում, նշված սուբյեկտների համար բողոքարկման ժամկետներ սահմանված չէին<sup>17</sup>:

Բնական է, որ ներկայումս այդպիսի կարգավորումներ չեն կարող նախատեսվել ՔԴ-Օ-ում, քանի որ դրանք, մեղմ ասած, համատեղելի չեն լինի քաղաքացիական դատավարությունում հիմնարար նշանակություն ունեցող տնօրինչականության, կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքների հետ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը նախաձեռնելու իրավունքով օժտված են գործին մասնակցող անձինք, նրանց իրավահաջորդները, եթե վիճելի կամ դատական ակտով հաստատված իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն, ինչպես նաև գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՔԴ-Օ 204.31-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեն՝

1) գործին մասնակցող անձինք և նրանց իրավահաջորդները, եթե վիճելի կամ դատական ակտով հաստատված իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն,

2) գլխավոր դատախազը և նրա տեղակալը՝ օրենքով նախատեսված դեպքերում»:

- <sup>1</sup> Ընդունվել է 17.06.1998թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53):
- <sup>2</sup> Տե՛ս Гражданский процесс: Учебник. 3-е изд., перераб. и доп. / Под ред. М. . Треушников. М.: Издательский Дом «Городец», 2010, С. 91:
- <sup>3</sup> Տե՛ս Исаенкова О.В., Демичев А.А. Гражданское процессуальное право России: учебник /Под. ред. О.В. Исаенковой. – М.: Норма, 2009, С. 93.
- <sup>4</sup> Տե՛ս Авдюков М.Г. и др. Советский гражданский процесс – М., Изд-во Московского университета, 1964, С. 49-50.
- <sup>5</sup> Տե՛ս Караваева Е.В. Вопросы апелляционного производства в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Саратов, 2005, С. 110.
- <sup>6</sup> Ընդունվել է 05.07.1995թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2005.12.05/Հատուկ թղթարկում ՀՊ. 1426:
- <sup>7</sup> Տե՛ս Новик-Качан М.Ю. Надзорное производство в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2005, С. 73.
- <sup>8</sup> Տե՛ս Гражданский процесс. Учебник /Под. ред. В.А. Мусина, Н.А. Чечиной, Д.М. Чечота. – М.: «ПРОСПЕ Т», 1997, С. 92.
- <sup>9</sup> Տե՛ս Советский гражданский процесс: Учебник / Под ред. М. . Треушников. – М.: Изд-во МГУ, 1989, С. 85, տե՛ս Власов А.А. Гражданский процесс: учебник для бакалавров /А.А. Власов. – 4-е изд., перераб. и доп. – М.: Изд-во «Юрайт», 2012, С. 122.
- <sup>10</sup> Ընդունվել է 22.02.2007թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2007.04.11/19(543) ՀՊ. 455:
- <sup>11</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն (իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գ.Հ. Գևորգյանի խմբագրությամբ): - Երրորդ հրատարակություն - Եր.: Երևանի համալսարանի հրատ., 2007, էջ 229:
- <sup>12</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի ապրիլի 15-ի թիվ ՍԳՈ-751 որոշումը (ՀՀՊՏ 2008.04.30/25(615) ՀՊ. 401) և 2009 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ ՍԳՈ-833 որոշումը (ՀՀՊՏ 2009.10.21/53(719) ՀՊ. 1168):
- <sup>13</sup> Տե՛ս Борисова Е.А. Теоретические проблемы проверки судебных актов в российском гражданском, арбитражном процессах. Дис. ... док. юрид. наук - Москва, 2005, С. 81-82.
- <sup>14</sup> Տե՛ս Завриев С.С. Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, С. 89-90.
- <sup>15</sup> Տե՛ս Ахмедов С.М. Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис. ... канд. юрид. наук – Москва, 2008, С. 166.
- <sup>16</sup> Տե՛ս, օրինակ, ՀՀ վճարել դատարանի թիվ 3-1206 (ՎԴ) քաղաքացիական գործով 2007 թվականի օգոստոսի 1-ի և թիվ 3-1293 քաղաքացիական գործով 2007 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումները:
- <sup>17</sup> Տե՛ս Воложанин В.П. и др. Советский гражданский процесс. - М., Изд-во «Юрид. С 56 лит.», 1978, С. 341.

## РЕЗЮМЕ

### ***Субъекты имеющие право на подачу жалобы о пересмотре судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском процессе***

Данная работа посвящена исследованию и анализу проблем, касающихся субъектов, имеющих право подать жалобу на пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам.

Основываясь на действующем законодательстве РА, правоприменительной практике и международном опыте, в работе конкретизирован круг лиц, которые имеют право подать жалобу на пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам. В частности, в работе обосновано, что лица не привлеченные к делу, не должны иметь право предъявить жалобу на пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам, потому что это противоречит сущности обсуждаемого производства.

В результате автор пришел к выводу, что правом инициировать производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам наделены лица, участвующие в деле, их правопреемники, если спорное или установленное решением правоотношение позволяет правопреемство, а также в установленных законом случаях генеральный прокурор и его заместители.

## SUMMARY

### ***The subjects for appealing judicial acts on the ground of newly emerged circumstances in Civil Procedure***

The following research is dedicated to the examination and analysis of the core matters concerning the subjects for appealing judicial acts on the ground of newly emerged circumstances in Civil Procedure.

According to the analysis of current Procedural legislation of RA, international legal practice the subjects who have the right to bring appeals on the ground of newly emerged circumstances have been clarified. Particularly, it was substantiated that a person not involved in the case should not have the right for appealing on the ground of newly emerged circumstance as it will contradict to the essence of the above discussed procedure.

As a result, the author came to a conclusion that subjects who are authorized to bring appeals on the ground of newly emerged circumstances are persons involved in the case, their successors if by the disputable or judicial act the succession is permitted, as well as the General Prosecutor and his deputies in the cases substituted by the law.

ԱՇԽԵՆ ՂԱՐՍԼՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական դատավարության  
ամբիոնի հայցորդ

**ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԸ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ  
ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է ոչ միայն խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնման պահանջով դատարան դիմելու, այլև դատական ակտերը բողոքարկելու օրենսդրորեն երաշխավորված հնարավորությունը: Եթե խախտված իրավունքի պաշտպանության պահանջով յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի դիմելու դատարան, ապա քաղաքացիական շրջանառության մասնակիցները առաջին ատյանի դատարան են դիմում՝ հայցադիմում (դիմում) ներկայացնելու, իսկ վերադաս դատական ատյաններ՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու միջոցով: Հետևաբար, դատական ակտերը բողոքարկելու իրավունքն ուղղակիորեն բխում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից, որն ապահովելու պարտականությունն ընկնում է պետության վրա: Այսպես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանվում է, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները (այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքը) բարձրագույն արժեքներ են, և պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Հետևաբար, ՀՀ իրավական համակարգը պետք է դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգեր պարունակի, որոնցից է վերաքննության կարգով դատական ակտերի վերանայումը (վերաքննիչ վարույթը):

Վերաքննիչ վարույթը, հանդիսանալով քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլ, իր հերթին բաղկացած է միմյանց տրամաբանական շարունակությունը հանդիսացող որոշակի մասերից, որոնք առանձնանում են միևնույն նպատա-

կին հասնելուն ուղղված դատավարական գործողությունների և դատավարական իրավահարաբերությունների համակցությամբ<sup>1</sup>: Արդարադատության արդյունավետության սկզբունքը, որը ենթադրում է անձանց դատական պաշտպանության իրավունքի լիարժեք ապահովումը, քաղաքացիական գործերի ճիշտ և ժամանակին քննությունն ու լուծումը, հավասարապես կիրառելի է քաղաքացիական դատավարության բոլոր, այդ թվում՝ նաև վերաքննության պարագայում: Դատավարության այս փուլում բողոքի ճիշտ և ժամանակին քննությունը կամ դատական ակտի արդյունավետ վերանայումն անհնար է առանց նախապատրաստական որոշ գործողությունների պատշաճ իրականացման: Ուստի, վերաքննիչ վարույթը պայմանականորեն մասերի բաժանելիս անպայմանորեն պետք է առանձնացնել **նախապատրաստական մասը**՝ որպես այս վարույթի կարևոր բաղկացուցիչ տարր, որը միաժամանակ հանդիսանում է վերաքննության փուլում անձի՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի և արդարադատության արդյունավետության ապահովման իրավական երաշխիք:

Վերաքննիչ վարույթի նախապատրաստական մասի նպատակը բողոքի ժամանակին և ճիշտ քննության ու լուծման ապահովումն է առաջին իսկ դատական միտում: Նշված նպատակն իր հերթին պայմանավորում է վերաքննության նախապատրաստական մասի խնդիրները և այդ խնդիրների լուծմանն ուղղված դատավարական գործողությունների համակցությունը:

Հարկ է նշել, սակայն, որ վերաքննիչ վարույթի նախապատրաստական մասի խնդիրների շրջանակը և դրանց լուծմանն ուղղված գործողությունների ծավալն անմիջականորեն պայմանավորված են վերաքննության տեսակով (լրիվ և ոչ լրիվ վերաքննություններ): Մասնավորապես, լրիվ

www.lawinstitute.am

վերաքննության նպատակն առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերացումն է, գործին մասնակցող անձանց բացթողումները շտկելը, ինչպես նաև գործն ըստ էության լուծող օրինական և հիմնավորված դատական ակտի կայացումը<sup>2</sup>, իսկ ոչ լրիվ վերաքննության նպատակը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգումն է: Լրիվ վերաքննության դեպքում վերաքննության նախապատրաստվում է ատյանի դատարանում քննված գործը, հետևաբար լրիվ վերաքննության տեսակի նկատմամբ կիրառելի են առաջին ատյանի դատարանում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործողությունները՝ օրենքով նախատեսված որոշակի սահմանափակումներով (վեճերը միջնորդ դատարանի լուծմանը հանձնելու, անպատշաճ կողմը փոխարինելու, հայցի հիմքը կամ առարկան փոխելու, հայցաչին պահանջների չափը փոփոխելու, հայցից հրաժարվելու, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող կամ չներկայացնող երրորդ անձանց՝ գործի մեջ մտնելու, հակընդդեմ հայց հարուցելու սահմանափակումներ): Լրիվ վերաքննության պարագայում բողոքը վերաքննության նախապատրաստելուն միտված գործողություններն ուղղակիորեն նախատեսված չեն դատավարական օրենքով: Մինչդեռ ոչ լրիվ վերաքննության դեպքում վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննության օբյեկտով, քանի որ պարտավոր է դատական ակտը վերանայել միայն վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, ինչն էլ իր հերթին, պայմանավորում է վերաքննության այս տեսակի նախապատրաստական մասի հատուկ խնդիրների առաջադրումը և դրանց լուծմանն ուղղված դատավարական գործողությունների օրենսդրական առանձին կարգավորումը:

2007թ. ՀՀ դատական օրենսգրքի<sup>3</sup> և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված լրացումներն ու փոփոխությունները<sup>4</sup> ՀՀ քաղաքացիական դատավարությունում հիմք դրեցին ոչ լրիվ վերաքննության ինստիտուտի գործողությանը, ամրագրվեցին նաև դատական ակտը վերաքննության նախապատրաստելու մի շարք կանոններ:

Ոչ լրիվ վերաքննության հիմնական խնդիրն առաջին ատյանի դատարանի դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումն է: Նշված խնդիրը պայմանավորում է վերաքննության նախապատրաստական մասի հատուկ խնդիրների շրջանակը՝

- վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները, ինչպես նաև՝ բողոքի պատասխան ներկայացվելու դեպքում՝ պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումն ու հիմնավորումները պարզելը,
- վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը որոշելը,
- նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը որոշելու համար անհրաժեշտ իրավական նորմերի շրջանակը որոշելը,
- առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերի շրջանակը պարզելը,
- նոր ապացույց ներկայացվելու դեպքում այն ընդունելու հիմքերի առկայությունը պարզելը,
- ինչպես նաև բողոքի արդյունավետ քննության համար անհրաժեշտ այլ խնդիրներ:

Ընդ որում, ՔԴՕ 220-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ վերոնշյալ հանգամանքներն իրենց վերջնական արտացոլումը պետք է գտնեն վերաքննիչ դատարանի համապատասխան որոշման մեջ:

Վերաքննության նախապատրաստական փուլի խնդիրների լուծման նկատառումով օրենսդիրը որոշակիորեն կարգավորել է վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՔԴՕ) 217-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանում գործի քննությունն իրականացվում է վճռաբեկ դատարանում գործի քննության կանոններով, եթե վերաքննության բաժնով այլ կանոններ նախատեսված չեն: Նշված իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանում գործերի քննության, այդ թվում՝ դատական ակտը վերաքննության նախապատրաստելու, բուն վերաքննության, այսինքն՝ բողոքը դատական միստում քննելու և որոշում կայացնելու նկատմամբ կիրառվում են վճռաբեկության կանոնները, սակայն այն բացառություններով, որոնք նախատեսված են վերաքննության հատուկ նորմերով:

ՔԴՕ 237-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է վարույթ ընդունված վճռաբեկ բողոքը գործի քննությանը նախապատրաստելու կանոնը, որը կի-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րառելի է նաև վերաքննության վարույթի պարագայում, ինչի հիման վրա էլ վերաքննիչ դատարանի նախագահը հանձնարարում է վերաքննիչ դատարանի կազմ ընդգրկված դատավորներից մեկին ուսումնասիրել վերաքննիչ բողոքը, գործի նյութերը և զեկուցել դատական նիստում: Վերաքննիչ դատարանի նախագահի մոտ նման իրավասության առկայությունը պայմանավորված է ՀՀ դատական օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից բխող լիազորություններով: ՔԴՕ 217-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո վերաքննիչ դատարանի դատական կազմի դատավորները ծանոթանում են վերաքննիչ բողոքին և գործի նյութերին: Մեր կարծիքով, հոդվածի նման շարադրանքը թերի է, քանի որ դատական կազմի դատավորների համար օրենքով պետք է սահմանել ինչպես վերաքննիչ բողոքին, այնպես էլ բողոքի պատասխանին ծանոթանալու պարտականություն, եթե, իհարկե, պատասխան ներկայացվել է:

Առաջարկում ենք ՔԴՕ 217-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո վերաքննիչ դատարանի դատական կազմի դատավորները ծանոթանում են վերաքննիչ բողոքին, բողոքի պատասխան ներկայացվելու դեպքում՝ պատասխանին, ինչպես նաև գործի նյութերին»: Միայն նման իրավակարգավորման պայմաններում է հնարավոր ապահովել դատական ակտի բազմակողմանի և լիարժեք վերաքննությունը և հստակ պատկերացում կազմել բողոքի հիմքերի և հիմնավորումների, ինչպես նաև բողոքի պատասխանի հիմքերի և գործին մասնակցող անձանց դիրքորոշումների վերաբերյալ: Կարծում ենք, որ առաջարկվող փոփոխությունը բխում է նաև ՔԴՕ-ի 217-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումից: Այսպես, ՔԴՕ-ի 217-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում զեկուցող դատավորը շարադրում է վերաքննիչ բողոքի և **վերաքննիչ բողոքի դեմ ներկայացված պատասխանի** փաստարկները: Հետևում է, որ վերաքննության նախապատրաստական մասում զեկուցող դատավորը պետք է ուսումնասիրի նաև վերաքննիչ բողոքի պատասխանը, եթե, իհարկե, պատասխան ներկայացվել է, հակառակ պարագայում հարց է ծագում՝ ինչպես պետք է գործի քննության ընթացքում ներկայացնի վերաքննիչ բողոքի դեմ ներկայացված պատասխանի փաս-

տարկները:

Մեր կարծիքով, ՔԴՕ 217-րդ հոդվածով սահմանված պարտականությունը որոշ չափով բխում է գործերի քննության անմիջականության սկզբունքից, քանի որ վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին, բողոքի պատասխանի հիմնավորումներին և գործի նյութերին անմիջականորեն ծանոթանալն անհրաժեշտ է բողոքի քննության արդյունքներով վերջնական որոշման կայացման համար: Օրենսդրորեն բացառված է դատական կազմի մեջ մտնող դատավորի կողմից առանց գործի նյութերին անմիջականորեն ծանոթանալու վերջնական որոշում կայացնելու հնարավորությունը: Ընդ որում, վերաքննության նախապատրաստական մասում ընդամենը սահմանվել է վերաքննիչ բողոքին (բողոքի պատասխանին) ծանոթանալու, այլ ոչ թե ապացույցները հետազոտելու՝ վերաքննիչ դատարանի պարտականությունը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերաքննության փուլում անմիջականության սկզբունքն իր դասական իմաստով չի գործում: Մասնավորապես, ի տարբերություն առաջին ատյանի դատարանի, վերաքննիչ դատարանն ապացույցներն անմիջականորեն չի հետազոտում, այլ ստուգում է ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում առաջին ատյանի դատարանի կողմից արված եզրահանգումների ճշտությունը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև ստորադաս ատյանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա հաստատում է նոր փաստեր կամ հաստատված չի համարում փաստը (ՔԴՕ հոդվ. 219, մաս 3,4):

ՔԴՕ 217-րդ հոդվածով սահմանված պարտականությունը ոչ միայն հնարավորություն է տալիս վերաքննիչ դատարանի դատական կազմի դատավորներին մինչև բուն վերաքննությունը հստակ պատկերացում կազմել բողոքի հիմքերի և հիմնավորումների, ինչպես նաև բողոքի պատասխանի հիմքերի և գործին մասնակցող անձանց դիրքորոշումների վերաբերյալ, այլև պարզել ինքնաբացարկի հիմքերի առկայությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման հիմքի առկայության պարագայում դատավորն ուղղակիորեն կրում է ինքնաբացարկ հայտնելու պարտականություն (ՔԴՕ 22 հոդվ. 1-ին մաս), միևնույն ժամանակ նկատի ունենալով, որ դատավորի ինքնաբացարկի դեպքում դատավորը փոխարինվում է նույն դատարանի մեկ այլ դատավորով (ՔԴՕ-ի 24-րդ հոդվ. 1-

ին մաս), իսկ դատավորի փոխարինման դեպքում գործի քննությունը սկսվում է սկզբից, գտնում ենք, որ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն ապահովելու նկատառումով դատական կազմի դատավորը ՔԴՕ-ի 21-րդ և ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածներով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պարտավոր է իր նախաձեռնությամբ ինքնաբացարկ հայտնել **վերաքննության նախապատրաստական մասում:**

Բողոքը վերաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունները կոչված են ապահովել ոչ միայն բողոքի ճիշտ և արդյունավետ քննությունը, այլև գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքների իրականացումը: Մասնավորապես, ՔԴՕ-ի 218-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բողոք բերած անձն իրավունք ունի ներկա գտնվելու վերաքննիչ դատարանի նիստին, ուստի դատական նիստի մասին վերջինիս ծանուցելը կրում է պարտադիր բնույթ: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում վերաքննիչ դատարանի նիստին կարող են կանչվել բողոք բերած անձը, ինչպես նաև գործին մասնակցող անձինք, որոնց չներկայանալն արգելք չէ գործի քննության համար: Ստացվում է, որ օրենսդիրը դատական նիստին ներկա գտնվելու իրավունքն անվերապահորեն ճանաչել է միայն բողոք բերող անձի վերաբերյալ: Բացի այդ, բողոք բերողին և գործին մասնակցող անձանց դատական նիստին կանչելը վերապահվել է վերաքննիչ դատարանի հայեցողությանը, քանի որ հոդվածի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ վերաքննիչ դատարանը այդ գործողությունը կատարում է բացատրություններ տալու «անհրաժեշտության» դեպքում:

Կարծում ենք, որ ՔԴՕ-ի 218-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը ճիշտ չէ և հակասում է մրցակցության և կողմերի իրավահավասարության քաղաքացիադատավարական սկզբունքներին: Սեփական դիրքորոշումը ներկայացնելու, իրավունքների պաշտպանության դատավարական միջոցներն օգտագործելու իրավունքը հավասարապես պետք է ճանաչվի թե՛ վերաքննիչ բողոք բերողի, թե՛ գործին մասնակցող մյուս անձանց նկատմամբ: Ընդ որում, վերաքննիչ դատարանը բոլոր դեպքերում կրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով ծանուցելու պարտականություն, առանց որի չի կարող դատական նիստում

իրականացնել բողոքի քննությունը:

Հետևաբար առաջարկում ենք ՔԴՕ 218-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ներկա գտնվելու վերաքննիչ դատարանի նիստին: Բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում գործին մասնակցող անձինք կարող են կանչվել վերաքննիչ դատարանի նիստին:

Գործին մասնակցող անձինք պատշաճ ձևով ծանուցվում են դատական նիստի վայրի և ժամանակի մասին, սակայն նրանց չներկայանալն արգելք չէ գործի քննության համար»:

Այսպիսով, ՔԴՕ-ի իրավակարգավորումը թույլ է տալիս առանձնացնել դատական ակտը վերաքննության նախապատրաստելուն և դատական նիստի պատշաճ իրականացմանն ուղղված հետևյալ նախապատրաստական գործողությունները, որոնք պարտադիր են վերաքննիչ ատյանում գործի քննությունն իրականացնելու համար՝

- զեկուցող դատավորի նշանակումը,
- վերաքննիչ դատարանի դատական կազմի դատավորների կողմից վերաքննիչ բողոքին, բողոքի պատասխանին (եթե այդպիսին ներկայացվել է), գործի նյութերին ծանոթանալը,
- վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները, ինչպես նաև բողոքի պատասխան ներկայացվելու դեպքում պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումն ու հիմնավորումները պարզելը,
- վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելը,
- նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը որոշելու համար անհրաժեշտ իրավական նորմերի շրջանակը պարզելը,
- ինքնաբացարկի հիմքերի ստուգումը,
- գործին մասնակցող անձանց դատական նիստի վայրի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցելը:

Վերաքննության նախապատրաստական մասի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն ընդգրկում է բացառապես դատարանի՝ բողոքը վերաքննության նախապատրաստելուն միտված գործողությունները, ինչը պայմանա-



## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վորված է վերաքննության փուլում քաղաքացիական դատավարության այնպիսի սկզբունքների սահմանափակ գործողությամբ, ինչպիսին են տնօրինչականության, մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքները: Այսպես, գործին մասնակցող անձինք վերաքննության փուլում սահմանափակված են ինչպես նոր ապացույցներ ներկայացնելու, այնպես էլ վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները, բողոքի պահանջը փոփոխելու հարցում: Հարկ է նշել, որ իրավաբանական գրականությունում, վերը շարադրվածով պայմանավորված, երբեմն քննարկվում է վերաքննության փուլում մրցակցության սկզբունքի սահմանափակման անհրաժեշտությունը<sup>5</sup>: Քաղաքացիական դատավարությունում, սակայն, անթույլատրելի է մրցակցության սկզբունքի ցանկացած սահմանափակում: Պետք է նկատի ունենալ, որ վերաքննության փուլում մրցակցության սկզբունքն ունի սահմանափակ գործողություն, այլ ոչ թե այստեղ մենք գործ ունենք մրցակցային դատավարության սահմանափակումների հետ:

Միևնույն ժամանակ, ՔԴ-Օ-ի իրավակարգավորման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ որոշ գործողություններ, որոնք նախապատրաստական ուղղվածություն ունեն և առաջին ատյանի դատարանում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի բովանդակությունն են կազմում, վերաքննիչ վարույթում դուրս են նախապատրաստական մասի շրջանակներից և իրականացվում են մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը, այսինքն՝ մինչև վերաքննության վարույթի հարուցումը: Այլ կերպ ասած՝ վերաքննության վարույթի հարուցումը որոշակիորեն ուղղված է վերաքննիչ վարույթի նախապատրաստմանը, ինչից կարելի է ենթադրել, որ մենք գործ ունենք վերաքննության, այսպես կոչված, «ոչ լեգիտիմ փուլի հետ»: Մասնավորապես, ՔԴ-Օ-ի 209-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը պատշաճ ձևով ուղարկվում է վերաքննիչ դատարան և գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարան: Օրենքով վերաքննիչ բողոքը գործին մասնակցող անձանց և դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարան ուղարկելու պարտականությունը դրվել է վերաքննիչ բողոք բերողի վրա: Եթե առաջին ատյանի դատարանում հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի պատ-

ճենները պատասխանողին ուղարկելը մտնում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլի շրջանակներում իրականացվող դատավարական գործողությունների շրջանակի մեջ և կանխորոշում է գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված դատարանի պարտականությունները, ապա վերաքննիչ վարույթի պարագայում վիճակն այլ է: Վերաքննիչ դատարանը բողոքի օրինակները գործին մասնակցող անձանց ուղարկելու պարտականություն չի կրում, այդ գործողությունն իրականացնում է վերաքննիչ բողոք բերողը, ընդ որում, մինչև վերաքննիչ վարույթի հարուցումը: ՔԴ-Օ 93-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը պատասխանողին պատշաճ ձևով ուղարկում է հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև նախազգուշացնում է հայցադիմումին պատասխան ներկայացնելու անհրաժեշտության և պատասխան չներկայացնելու՝ օրենքով նախատեսված իրավական հետևանքների մասին: Հետևում է, որ հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին ուղարկելը գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված դատավարական գործողություն է, քանի որ նախապատրաստական փուլը սկսվում է հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո, երբ գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով դատարանը ձեռնամուխ է լինում գործը դատաքննության նախապատրաստելուն (ՔԴ-Օ հոդվ.149<sup>5</sup>):

Հարուցված վերաքննության շրջանակներից դուրս է իրականացվում նաև գործին մասնակցող անձի կողմից վերաքննիչ բողոքի պատասխան ուղարկելը: Այսպես, ՔԴ-Օ 214-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը պետք է կայացվի վերաքննիչ բողոք բերելու վերջնաժամկետը լրանալուց հետո ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում: Գործին մասնակցող անձը վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունք ունի բողոքի պատճեն ստանալու օրվանից՝ երկշաբաթյա ժամկետում: Ստացվում է, որ այս դատավարական գործողությունը ևս կատարվում է մինչև վերաքննիչ վարույթի հարուցումը: Ընդ որում, վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի իրականացումը տարբերվում է թե՛ առաջին ատյանի դատարանում իրականացվող վարույթի շրջանակներում հայցադիմումի պատասխան ներկայացնելու պարտականության, թե՛ վճռաբեկ ատյանում

բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի իրականացումից: Այսպես, ՔԴ-Օ 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատարան ուղարկել հայցադիմումի պատասխան: Հայցադիմումի պատասխան ներկայացնելը միանշանակ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի շրջանակներում գործի քննության արդյունավետության բարձրացմանն ուղղված դատավարական գործողություն է: Ի տարբերություն հայցադիմումի պատասխանի՝ վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելը.

- իրականացվում է մինչև բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումը,

- վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելը գործին մասնակցող անձի իրավունքն է, այլ ոչ պարտականությունը,

- օրենքը վերաքննիչ բողոքի պատասխան չներկայացնելու համար բացասական դատավարական հետևանքների առաջացման հնարավորություն չի նախատեսում:

ՔԴ-Օ 235-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, ստանալով վճռաբեկ բողոքի պատճենը, մինչև գործի քննությունն իրավունք ունի իր պատասխանն ուղարկելու վճռաբեկ դատարան և գործին մասնակցող այլ անձանց: Ստացվում է, որ գործին մասնակցող անձը կարող է վճռաբեկ բողոքի պատասխան ներկայացնել մինչև դատարանի կողմից գործի քննությունն սկսելը՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո կամ մինչև նման որոշման կայացումը:

Այսպիսով, ընդունելով այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոքի պատճենը գործին մասնակցող անձանց և դատական ակտը կայացրած դատարանին ուղարկելը, ինչպես նաև վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելը կատարվում են մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը, կարող ենք արձանագրել, որ դրանք որոշակիորեն ուղղված են նաև վերաքննիչ վարույթի նախապատրաստմանը: Այսպես, մինչև դատական ակտի բուն վերաքննությունը վերաքննիչ դատարանը լիարժեք հնարավորություն է ունենում հստակ որոշել դատական ակտի վերանայման սահմանները, բողոքի և պատասխանի հիմքերն ու հիմնավորումները, գործով պարզման ենթակա և բողոքի քննության

համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը, նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները գնահատելու համար անհրաժեշտ իրավական ակտերի շրջանակը, ինչն աներկբայորեն վկայում է դատական վերանայումն արդյունավետ իրականացնելու և բողոքարկված դատական ակտը վերաքննության նախապատրաստելու շրջանակներում կատարվող գործողությունների մասին:

Ի տարբերություն առաջին ատյանի դատարանի՝ վերաքննիչ դատարանն օժտված չէ նախնական դատական նիստ հրավիրելու իրավասությամբ: Իրավաբանական գրականությունում, սակայն, վերաքննության փուլում նախնական դատական նիստ հրավիրելու հարցը բանավիճային է: Այսպես, օրինակ, մի շարք հեղինակների կարծիքով վերաքննիչ վարույթում նախնական դատական նիստ հրավիրվել չի կարող, քանի որ նախնական դատական նիստի ինստիտուտը չի հարաբերակցվում վերաքննության փուլի խնդիրների հետ<sup>6</sup>: Որոշ հեղինակներ էլ կարծում են, որ վերաքննության փուլում ոչ միայն կարող է նախնական դատական նիստ հրավիրվել, այլև անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել այդ հնարավորությունը<sup>7</sup>: Մեր կարծիքով, վերաքննության փուլում նախնական դատական նիստ հրավիրելու հնարավորությունը ևս պետք է դիտարկել՝ հաշվի առնելով վերաքննության տեսակը: Այսպես, լրիվ վերաքննության դեպքում, երբ վերաքննիչ դատարանը գործի հանգամանքները հետազոտում է լրիվ ծավալով, իրականացնում է գործի նոր՝ կրկնակի, դատական քննություն, նախնական դատական նիստ հրավիրելն ուղղակի անհրաժեշտություն է: Մինչդեռ ոչ լրիվ վերաքննության դեպքում, երբ վերաքննիչ ատյանը դատական ակտը վերանայում է առաջին ատյանի դատարանում հետազոտված գործի փաստական հանգամանքների հիման վրա, դատավարությունը հիմնականում ընթանում է գրավոր, նոր փաստեր և ապացույցներ չեն ընդունվում, նախնական դատական նիստ հրավիրելու անհրաժեշտությունը բացակայում է:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում քննարկել վերաքննության նախապատրաստական մասում գործի վարույթն ավարտելու հնարավորությունը: Այսպես, ՔԴ-Օ-ի 215-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերած անձն իրավունք ունի հետ վերցնելու բողոքը, մինչև վերաքննիչ դատարանը սկսի գործի քննությունը:

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վերաքննիչ բողոքն ընդունված է վարույթ, ապա բողոքը հետ վերցնելու դեպքում դատարանը կայացնում է որոշում վերաքննիչ վարույթը կարճելու մասին, եթե վճիռը չեն բողոքարկել այլ անձինք: Եթե վճիռը բողոքարկել են այլ անձինք, ապա վերաքննիչ վարույթը կարճվում է միայն տվյալ բողոքի մասով: Նշված հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ օրենսդիրը վերաքննության նախապատրաստական մասում առանց բողոքն, ըստ էության, քննելու գործի վարույթն ավարտելու հնարավորություն նախատեսել է միայն վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո այն հետ վերցնելու դեպքում: Մեր կարծիքով, օրենսդրական այս կարգավորումը վերաքննիչ ատյանում դատավարությունն անհարկի չծանրաբեռնելու նպատակ է հետապնդում և բխում է դատավարական խնայողության սկզբունքի բովանդակությունից, արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ նշված հիմքի առկայություն պարագայում բուն վերաքննության փուլին անցնելը դառնում է իմաստագուրկ: Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ հոդվածի շարադրանքը թերի է այն առումով, որ չի կարգավորել նման հիմքի ի հայտ գալու դեպքում վերաքննիչ վարույթը կարճելու ընթացակարգը: Կարծում ենք, որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո բողոքը հետ վերցնելու մասին դիմում ստացվելու դեպքում դատական կազմում ընդգրկված դատավորները, առանց դատական նիստ հրավիրելու, պետք է ծանոթանան դիմումին (նշված պահանջը բխում է գործերի քննության անմիջականության սկզբունքից), և դիմումը ստացվելու օրվանից ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում վերաքննիչ դատարանը պետք է կայացնի վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում:

Ուստի, առաջարկում ենք ՔԳՕ-ի 215-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Եթե վերաքննիչ բողոքն ընդունված է վարույթ, ապա բողոքը հետ վերցնելու մասին դիմում ներկայացվելու դեպքում դատական կազմում ընդգրկված դատավորները ծանոթանում են դիմումին, և ոչ ուշ, քան դիմումը ստացվելու պահից եռօրյա ժամկետում վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում: Եթե վճիռը բողոքարկել են այլ անձինք, ապա վերաքննիչ վարույթը կարճվում է միայն տվյալ բողոքի մասով»:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք

ասել, որ բողոքը վերաքննության նախապատրաստելուն միտված դատավարական գործողությունների կատարումն ուղղակիորեն նախատեսված է դատավարության օրենքով, բխում է դրա բովանդակությունից, ուղղված է բողոքի ճիշտ և արդյունավետ քննությանը, ինչպես նաև գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքների ապահովմանը: Միևնույն ժամանակ, ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի, անմիջականության սկզբունքի ապահովման, արդարադատության արդյունավետության բարձրացման նկատառումներով առաջարկում ենք հետևյալ օրենսդրական փոփոխությունները.

- ՔԳՕ 215-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ. «Եթե վերաքննիչ բողոքն ընդունված է վարույթ, ապա բողոքը հետ վերցնելու մասին դիմում ներկայացվելու դեպքում դատական կազմում ընդգրկված դատավորները ծանոթանում են դիմումին, և ոչ ուշ, քան դիմումը ստացվելու պահից եռօրյա ժամկետում վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում: Եթե վճիռը բողոքարկել են այլ անձինք, ապա վերաքննիչ վարույթը կարճվում է միայն տվյալ բողոքի մասով»:

- ՔԳՕ 217-րդ հոդվածի 3-րդ մասն անհրաժեշտ է վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո վերաքննիչ դատարանի դատական կազմի դատավորները ծանոթանում են վերաքննիչ բողոքին, բողոքի պատասխան ներկայացվելու դեպքում՝ պատասխանին, ինչպես նաև գործի նյութերին»:

- ՔԳՕ 218-րդ հոդվածը պետք ունենա հետևյալ բովանդակությունը. «Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ներկա գտնվելու վերաքննիչ դատարանի նիստին: Բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում գործին մասնակցող անձինք կարող են կանչվել վերաքննիչ դատարանի նիստին: Գործին մասնակցող անձինք պատշաճ ձևով ծանուցվում են դատական նիստի վայրի և ժամանակի մասին, սակայն նրանց չներկայանալն արգելք չէ գործի քննության համար»:

<sup>1</sup> Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ. Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում (ի.գ.թ., դոցենտ Ս.Գ. Մեղրյանի խմբագրությամբ): Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 183:

<sup>2</sup> Տե՛ս Կարասա Վ.В. Вопросы апелляции производства в гражданском процессе. Дисс. к.ю.н., Саратов, 2005, 23-24:

<sup>3</sup> Տե՛ս ՀՕ-135-Ն, ՀՀՊՏ 2007.04.18/20(544), 21.02.2007:

<sup>4</sup> Տե՛ս ՀՕ-179-Ն, ՀՀՊՏ N27(551), 30.05.07: ՀՕ-204-Ն, ՀՀՊՏ N 53(577), 31.10.07: ՀՕ-269-Ն, ՀՀՊՏ N64 (588), 19.12.07: ՀՕ-277-Ն, ՀՀՊՏ N66(590), 26.12.07:

<sup>5</sup> Տե՛ս Բазаров Б. При апелляции производстве возможно нарушение принципа состязательности // Российская юстиция. 2002. N 3. С. 42.

<sup>6</sup> Տե՛ս Закирова Д.И. Подготовка гражданских дел к судебному разбирательству. Диссертация канд. юрид. наук, Москва, 2009, С. 157: Шакирьянов Р.В. Проверка решений мировых судей по гражданским делам в апелляционном порядке. Казань, 2007, С. 41, 44.

<sup>7</sup> Տե՛ս Алискеров М.А. Предварительное судебное заседание в апелляционном производстве // Современное право. 2009. N 2 /СПС Гарант.

#### РЕЗЮМЕ

##### ***Основные задачи рассмотрения апелляционным порядком судебного акта в гражданском процессе в РА***

Право судебной защиты предполагает не только возможность обращения в суд с требованием защиты и восстановления нарушенных или оспариваемых прав, но и законом гарантированную возможность апелляции судебных актов. Следовательно, правовая система РА для осуществления права апелляции судебных актов должна содержать соответствующие правила, из коих пересмотр судебных актов апелляционным путем (апелляционный процесс).

Полноценное осуществление апелляционного процесса и продуктивный пересмотр судебных актов апелляционным порядком- невозможно провести без определенных подготовительных действий, следовательно, апелляционный процесс, условно распределив на части, обязательно необходимо отделить подготовительную часть как важнейший элемент апелляционного процесса, который одновременно является юридической гарантией для личности в разумных сроках рассмотрения дела и обеспечения эффективности правосудия.

В статье автором подробно рассмотрены цель, задачи подготовительной части апелляционного процесса, их рамки по типу апелляции, процедурные действия, направленные на решения задач возможность в процессе апелляции проведения предварительного заседания и завершения апелляционного процесса. В результате рассмотрения были представлены предложения об изменениях в законодательстве.

#### SUMMARY

##### ***The problems of the preparation of appeal procedure review of judicial acts in the civil procedure of RA***

Judicial protection rights are presumed not only the right to present the claim to the Court of violated or challenged law protection and restoration, but also an opportunity guaranteed access to appeal court acts. Therefore, the legal system of republic of Armenia must be contained the necessary mechanisms of implementation of the right to judicial appeal, one of that ways is the review of the judicial appeal procedure.

The full implementation of the protest of appeal and the effective judicial review of an appeal procedure is impossible, consequently the Appeal proceedings conditionally parcel in to the parts, necessarily need to separate part of the preparations` as an integral element of this proceeding, which simultaneously is a review of the person's right to trial within a reasonable time and the right to effective legal guarantees of justice.

Article were examined in detail by the author in the preparation of the appeal proceedings, problems, the definition by type of appeal, issues of procedural steps, review the preliminary stage of the proceedings the court session and complete the feature. During the survey were submitted the recommendations of legislative changes.

**ԽԱՉԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
իրավագիտության ֆակուլտետի հայցորդ



**ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ  
ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ**

Անվիճելի է, որ ներում շնորհելն իր ծագմանը օժտված է միապետական բնույթով և ունի իրավական զարգացման առանձնահատուկ պատմություն: Որպես կանոն ներման ինստիտուտը ճիշտ ըմբռնելու, այն օբյեկտիվորեն գնահատելու, տեսականորեն հիմնավորված հայեցակարգեր մշակելու և, ընդհանրապես, հասարակական կյանքում այդ երևույթը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է այն դիտարկել պատմական զարգացման գործընթացում:

Այսպես, այդ ինստիտուտի իրավական զարգացման պատմությունն ուսումնասիրելիս կարելի է հասկանալ, որ այն առաջացել է դեռևս վաղ ժամանակներում: Նախ անհրաժեշտ է նշել, որ պետականության զարգացմանը զուգընթաց ներման իրավունքի մասին հարցը մասնավոր իրավունքի տիրույթից տեղափոխվեց հանրային իրավական ոլորտ: Ընդ որում, դատարանի և ներման իրավունքի սահմանման մեջ գերակշռողը այն կարծիքն էր, որ հանցագործությունը դիտվում էր որպես առանձին անձի մասնավոր շահերի խախտում:

Ներողամտության դրսևորման օրինակ կարելի է հանդիպել դեռևս Հռոմեական կայսրության դարաշրջանում<sup>1</sup>, որտեղ մեղավորին ներում շնորհելն ընկալվեց օրենքի ուժից ավելի բարձր ուժով օժտված ակտ: Ներման ինստիտուտի զարգացման պատմությունը եվրոպական իրավունքի մեջ կարելի է սկսել այն փուլից, որում հանցագործությունը հրապարակային ոտնձգության բնույթ էր ձեռք բերում և առաջ էր բերում պետական իշխանության անմիջական արձագանքը:

Ֆրանսիական միապետության ժամանակաշրջանում հանցագործությունների մեծ մասը դիտվում էր որպես մասնավոր շահերի խախտում, և միայն պետական դավաճանությունը, միապետին վիրավորելը, թագավորի դեմ ուղղված խռովու-

թյունը բերում էին հրապարակային պատժի<sup>2</sup>: Թագավորը կարող էր ներել, սակայն այդ ողորմածությունը մասնավոր անձանց իրավունքներում ուներ իր սահմանները: Ֆրանկյան արքաները քաղաքական հանցագործությունների համար նույնիսկ ներում էին շնորհում: Սակայն, IX դարի վերջից մինչև XIV դարը թագավորական իշխանությունը սկսեց կորցնել իր արտոնությունները՝ զիջելով դրանք ֆեոդալական իշխանավորներին: Ընդ որում, ներման իրավունքն արդեն իսկ իրականացվում էր գրեթե ցանկացած սենյորի կողմից<sup>3</sup>: Եվ միայն Ֆիլիպ Գ-եղեցիկի կողմից հրատարակված 1308 թվականի արտիայով ներման իրավունքը ձևականորեն վերապահվեց բացառապես թագավորին<sup>4</sup>: Այնուհետև՝ Կարլ V-ի օրոք, այդ իրավունքը արդեն ճանաչվեց որպես թագավորական իշխանության բացառիկ լիազորություն:

Հարկ է նշել, որ ներման ակտի իրավական ուժի մեջ մտնելու էական պայման էր հանդիսանում նրա ձևի պահպանումը, այդ թվում՝ թագավորական խորհրդում դրա քննարկումն ու հաստատումը: Այսպես, 1359 թվականի թագավորական օրենքով (Օրդոնանս) նախատեսված էր, որ ներման մասին ակտի բովանդակությունը պետք է ներառի իր մեջ հետևյալ մասերը. 1) արքայի կամ նրա հպատակների դեմ կատարած հանցագործությունների ցանկը, 2) դրդապատճառները, որոնք արքային դրդեցնում են «գթասրտությունը գերադասել արդարադատության դաժանությունից», 3) գթասրտության դրսևորման ձևը, 4) վերապահությունը, որը պահպանում է տուժողի վնասի տույժը, 5) հանցագործների ցանկը, որոնք ենթակա չեն ներման, 6) թագավորական պետական պաշտոնյաներին ուղղված որոշման հրապարակման հրամանը, 7) տարեթիվը, կնիքը և խորհրդատուների ցուցակը<sup>5</sup>: Դրանով իսկ նախատեսվում էր թագավորի՝ իր հայեցողությամբ

www.lawinstitute.am

ներում իրականացնելու իշխանության սահմանափակումը: Որոշման ընդունումը պահանջում էր դրդապատճառների պարտադիր հիմնավորում, տուժողի շահերի հաշվառում և կրում էր հրապարակային բնույթ:

Դա սահմանափակում էր թագավորի՝ իր հայեցողությամբ ներում իրականացնելու իշխանությունը: «Թագավորությունում դատարանի և կարգի պահպանման մասին» 1498 թվականի օրենքով ամփոփվում և ամրագրվում էր թագավորական դատարանների փորձը թափառականների, չքավորների, ավազակների և նման այլ տարրերի, ինչպես նաև անհնազանդ ֆեոդալների դեմ մղված պայքարում<sup>6</sup>: Ներման իրավունքը վերապահված էր բացառապես Ֆրանսիայի թագավորին և նրա հետևորդին՝ ի նշան նրա գերագույն իշխանության:

Ֆրանսիական 1670 թվականի թագավորական օրենքը հիշատակում էր ներման ակտերի տեսակները և ընթացակարգային բնույթը<sup>7</sup>: Այսպես, այդ ակտով սահմանվում էին հետևյալ ութ տեսակի ներումները. ա) պատժի զիջումը, բ) ներողության հայցումը, գ) աքսորից և տաժանակիր աշխատանքներից ազատումը, դ) ազնիվ անվան և համբավի վերականգնումը, ե) պատժի մեղմացումը, զ) դատարան կրկին ներկայանալը և է) համաներումը: Ներողամտությունների այսպիսի լայն ցանկը, փաստորեն, իր մեջ ներառում էր հանցագործի նկատմամբ գթասրտության դրսևորման բոլոր տեսակները: XVIII դարից սկսած՝ պատկերացումներն այն մասին, որ ներումը միապետի և վարչական իշխանության օրենքի ուժը թուլացնելու հնարավորությունն է, արդեն որոշիչ էր այն դառնում օրենսդրական իշխանության ամրապնդման հիմնավորման գործում, ինչն էլ հանգեցրեց ներման ողջ ինստիտուտի ժխտմանը<sup>8</sup>:

Ներման ինստիտուտի մշակման ինքնուրույն պատմական ուղի է անցել Անգլիան: Այս երկրում հրապարակային արդարադատության համակարգը բավականին դանդաղ էր զարգանում, այդ պատճառով էլ մինչև X դարը իշխում էին մասնավոր վրեժի սկզբունքները<sup>9</sup>: Արքայական հաշտությանը աջակցելու իրավունք ստացած փոխարքաները ամենավաղ ժամանակներից իշխանների հետ մեկտեղ օգտվում և իրականացնում էին ներման իրավունքը: Եվ միայն 1535 թվականին թագավորն իրեն վերապահեց միայն դավաճանության, սպանության և արտաքսվածներին վերադարձնելու

հարցերով ներման իրավունքի իրականացման լիազորությունը: Մինչև 1817 թվականը մյուս հանցագործությունների մասով միայն տուժողը կամ մեղադրողը կարող էին ներել մեղավորին<sup>10</sup>: Ընդ որում, ներումը կարող էր կիրառվել քրեական հետապնդման ողջ գործընթացի ընթացքում: Այն ներառում էր նաև «աբոլիցիան»՝ որպես համաներման մասնավոր դրսևորման տեսակ, որը ենթադրում էր քրեական գործընթացի դադարեցում, պատժի մեղմացում կամ դրա կիրառման արգելում<sup>11</sup>:

Ինչ վերաբերում է գերմանական իրավունքին, ապա մինչև XIII դարը այն չէր ճանաչում հրապարակային պատիժները, իսկ հանցագործություն կատարած անձը տուժողին վճարում էր փոխհատուցում<sup>12</sup>: Միայն XIII դարից Գերմանիայի քրեական իրավունքը հրապարակային բնույթ ձեռք բերեց. թագավորը կարող էր ներում շնորհել տուժողի և դատավորի համաձայնությամբ, իսկ երբեմն էլ համայնքի համաձայնությամբ: Իսկ XVI դարի նախաշեմին պատժի հրապարակային բնույթն ամրապնդվեց, և առանձին թագավորներ սկսեցին ինքնուրույն կիրառել ներումը, ընդ որում՝ զգուշությամբ՝ վախճանալով թուլացնել պատժելիության ուժը, որի վրա էր հենվում պետական կարգի պահպանումը: Հետագայում աստիճանաբար ներման իրավունքը տրվեց անմիջականորեն գերագույն իշխանությանը և կախված չէր հանցագործի նկատմամբ տուժողի վերաբերմունքից: Մինչև XVIII դարի վերջն արքայական իշխանությունը ներման իրավունքն իրականացնում էր առավել ծանր հանցագործությունների դեպքում, մնացած դեպքերում դատավորն ինքնուրույն էր կիրառում պատժից ազատելը՝ դրամական փոխհատուցում վճարելու պայմանով:

Միաժամանակ Գերմանիայում երկար ժամանակ քննարկվում էին գթասրտության դրսևորման ձևերի և մեթոդների սահմանման հարցերը: Առաջարկվում էր ներումն առանձնացնել որպես ինքնուրույն ինստիտուտ, իսկ դատապարտյալների «աբոլիցիայի» և ներման առանձին ակտերի միասնությունը դիտարկել որպես համաներում: Հարկ է նշել, որ պետական ներումը, որպես կանոն, օրենսդրական ամրագրում չուներ և կամավոր բնույթ ուներ: Թագավորները ներման մասին միանվազ ակտեր էին հրատարակում: Ներումը կարող էր կիրառվել դատաքննության ցանկացած

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

փուլում և չունեն իր դրսևորման սահմանները, քանի որ այդ փուլում այն տարբերակված չէր համասերումից և սերտ կապված էր նրա հետ:

Միջազգային իրավական փաստաթղթերում ներման մասին առաջին հիշատակումն ամրագրվել է Գրամանշանների կեղծման դեմ պայքարի 1929 թվականի ապրիլի 20-ի Միջազգային կոնվենցիայում<sup>13</sup>, որտեղ նշվում է, որ կոնվենցիան չի խոչընդոտում պայմանավորվող բարձր կողմերին՝ իրենց ներքին օրենսդրությամբ կարգավորելու պատժի մեղմացման ռեժիմը և ներման իրավունքը՝ դրանով իսկ ներման իրավունքի իրականացումը ճանաչելով ինքնավար ինստիտուտ:

Այնուհետև՝ XX-XXI դարերի սահմանագծում, իրավական համակարգերի փոխազդեցության համաշխարհային գործընթացի համատեքստում առաջնային է դառնում մարդասիրական բաղադրիչը, այդ թվում՝ ներման գաղափարը, որն արդիական է ու պահանջարկված իր բովանդակությամբ ու նշանակությամբ<sup>14</sup>: Ընդհանուրի և առանձնահատուկի այդ փոխազդեցությունը բնորոշ է պետությունների ազգային իրավական համակարգերի կայացման համար, այդ թվում՝ նաև ներման մասին օրենսդրության մշակման և զարգացման համար: Գրանով իսկ ներման ոլորտում միջազգային իրավունքի ընդհանուր նորմերի ընդունումը ժամանակակից երկրների կողմից հանգեցրեց ազգային օրենսդրության հետ դրանց ներդաշնակեցմանը:

Ներման իրավունքը համարժեքորեն բխում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածի բովանդակությունից, ըստ որի. «Յուրաքանչյուր մարդ ունի կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք»: Այդ իրավունքը հանդես է գալիս որպես կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության մեխանիզմներից մեկը և իրականացվում է համընդհանուր ճանաչման և իրականացման ճանապարհով ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակներում:

Կյանքի իրավունքի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման մասին նշված է ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետում, համաձայն որի. «Կյանքի իրավունքը հանդիսանում է յուրաքանչյուր մարդու անկապտելի իրավունքը: Այդ իրավունքը պահպանվում է

օրենքով: Ոչ ոք չի կարող կամայականորեն գրկվել կյանքից»<sup>15</sup>: Իսկ նույն հոդվածի 4-րդ կետը հռչակում է, որ. «Յուրաքանչյուր ոք, ով դատապարտված է մահվան, իրավունք ունի ներում կամ դատավճռի մեղմացում խնդրել: Համաներումը, ներումը կամ մահապատժի փոխարինումը ամեն դեպքում կարող են ընձայվել»: Այս նորմի բովանդակությունից հետևում է, որ միջազգային իրավական համակարգում ստեղծված են մահվան դատապարտվածների նկատմամբ ներման իրավունքի կիրառման ընդհանուր հիմքերը, ընդ որում, դաշնագրում մահապատիժը օրենքից դուրս չէ, սակայն նրա վերացման ցանկալիությունը և ներում խնդրելու տրամադրումը սահմանափակում է նրա կիրառումը:

Ներման իրավունքի մասին հիշատակվում են նաև ՄԱԿ-ի մի շարք համաձայնագրերում: Այսպես, օրինակ, 1978 թվականի մայիսի 19-ի՝ Հանձնման մասին կոնվենցիայի 13-րդ հոդվածը սահմանում է, որ ազատագրված դատապարտված անձինք պատիժը կրում են այն պետությունում, որի քաղաքացիներն են հանդիսանում, հետևաբար, դատապարտյալի ներումն իրականացվում է այն պետության կողմից, որին նա հանձնված է պատիժը կրելու համար:

Եվրախորհրդի՝ 1950 թվականի Մարդու իրավունքների պաշտպանության և հիմնական ազատությունների մասին կոնվենցիայում ներման իրավունքի մասին որևէ խոսք ուղղակիորեն չի գնում: Սակայն, հիշատակված կոնվենցիայի մի շարք դրույթների և դրա զարգացման նպատակով ընդունված արձանագրությունների համակարգային վերլուծության հիման վրա կարելի է հետևություն անել հենց ներման իրավունքի ճանաչման մասին: Այսպես, Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 3-րդ հոդվածով ամրագրված «եթե որևէ անձ վերջնական որոշման հիման վրա քրեական հանցագործություն կատարելու համար դատապարտված է, և եթե հետագայում ... նրան ներում է շնորհվել ...» դրույթից կարելի է ենթադրել, որ առկա է քրեական հանցագործության համար դատապարտված անձի ներման հնարավորություն:

Այնուհետև, Եվրոպական երկրների համագործակցության շրջանակում բավականին լուրջ ուշադրություն է դարձվում դատապարտյալների սոցիալական վերականգնմանը: Այսպես, «Պայմանական դատապարտված կամ պայմանական

ազատված իրավախախտների հսկման մասին» եվրոպական համաձայնագրի 7-րդ հոդվածը սահմանում է, որ, եթե իրավախախտը ընկնում է ներման տակ կամ կարգադրող պետության կողմից, կամ այն պետության, որին ուղղվում է կարգադրությունը, ապա հսկելը կամ դատական որոշում իրականացնելը կմերժվի: Ներման մասին տվյալ դրույթը հսկման դադարեցման կամ դատական որոշման կայացման հիմք է հանդիսանում:

Կամ 1985 թվականի հունիսի 23-ի «Մշակութային սեփականության հետ կապված իրավախախտումների մասին» Եվրոպական կոնվենցիայում քրեական իրավունքի և մշակույթի ոլորտում պայմանավորվող կողմերի գործողությունները ուղղված են եվրոպական մշակութային ժառանգության պահպանմանը: Կոնվենցիայի 4-րդ բաժնում ընդգծվում է *Ne bis in idem* սկզբունքի նշանակությունը, որը հաստատում է, որ անձը, որի նկատմամբ կայացած է դատարանի վերջնական որոշումը, չի կարող միևնույն գործողության համար ո՛չ հետապնդվել, ո՛չ դատապարտվել, ո՛չ էլ ենթարկվել պատժամիջոցների ուրիշ կողմում, եթե նրան սահմանված պատժամիջոցը քրեական իրավունքի և մշակույթի ոլորտում ներման նկատառումով ամբողջապես կամ մասնակի իրականացված չէ (Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 1-ին կետ):

Բերված ամփոփումը ցույց է տալիս, որ եվրոպական համագործակցության շրջանակում ճանաչվում է ներման իրավունքը, և դրա կիրառումը համապատասխանում է պայմանավորվող կողմերի համաձայնեցված կամքին և վճռականության դրսևորում է ծառայում՝ բոլոր մեթոդներով և միջոցներով նպաստելու իրավախախտումների դեմ պայքարում անձնական անձեռնմխելիության, ազատության, կյանքի իրավունքի իրականացման գործում փոխշահավետ համագործակցության ամրապնդմանը:

Նախկին ԽՍՀՄ-ի պետություններում մարդու իրավունքների ոլորտում միջազգային չափորոշիչների ճանաչումն ու պահպանումը, կապված խորացող ժողովրդավարական վերափոխումների հետ, Անկախ Պետությունների Համագործակցության կազմավորման նախադրյալներից մեկն է հանդիսացել: Դրանցում ներման իրավունքը նույնպես իր արտացոլումն է գտնում:

1995 թվականի մայիսի 26-ի «Անկախ Պետությունների համագործակցության մարդու իրա-

վունքների և հիմնական ազատությունների մասին» համաձայնագրի 7-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր դատապարտյալ իրավունք ունի համաձայն օրենքի ... խնդրել ներման մասին ...»:

ԱՊՀ-ի՝ 1998 թվականի «Հետագա պատիժը կրելու համար ազատազրկման դատապարտվածների փոխանցման մասին» Կոնվենցիայի 15-րդ հոդվածով նախատեսվում է. «Ինչպես դատավճիռ կայացնող պետությունը, այնպես էլ դատավճիռ իրականացնող պետությունը իրավունք ունի կիրառել ներման ակտ ..., եթե դա նախատեսված է դատավճիռն իրականացնող պետության օրենսդրությամբ»:

Կամ ԱՊՀ-ի 2002 թվականի «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Կոնվենցիայի 114-րդ հոդվածով հռչակվում է, որ. «Անձի ներումը, որի նկատմամբ կայացվել է դատավճռի ճանաչման և կատարման մասին որոշում, իրականացվում է ինչպես հարցում կատարող, այնպես էլ հարցման ենթարկվող պայմանավորվող կողմերի կողմից՝ իրենց ներքին օրենսդրությանը համապատասխան»<sup>16</sup>: Դրանով իսկ ճանաչվում է ԱՊՀ՝ կողմերի ներում իրականացնելու իրավունքը՝ ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է վերը թվարկված միջազգային իրավական փաստաթղթերի մասնակիցը: Տարբեր երկրների հետ բարեկամական հարաբերություններ հաստատելով՝ Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է ինչպես բազմակողմանի համաձայնագրերում, այնպես էլ սահմանափակ քանակով մասնակիցների հարաբերություններում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածի չորրորդ մասով սահմանված՝ դատապարտյալի ներման խնդրանքի իրավունքի իրականացման երաշխիք է կոնվենցիայի 15-րդ հոդվածի երկրորդ մասը, որին համապատասխան՝ պատիժը կրելու համար հանձնված դատապարտյալների նկատմամբ ներման և համաներման ակտեր կարող են կիրառվել ինչպես դատավճռի կայացման, այնպես էլ դատավճռի կատարման պետությունները:

Ներում շնորհելու մասին ՀՀ Նախագահի լիազորությունը սահմանված է ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 17-րդ կետով: Սա ՀՀ Նախա-



**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

գահի այն լիազորություններից մեկն է, որը չի պահանջում որևէ օրենքի կամ այլ իրավական ակտի գոյություն և գոյության դեպքում էլ Նախագահը չի կարող սահմանափակված լինել դրանցով: Այս առումով ՀՀ Նախագահի՝ 2003թ. նոյեմբերի 19-ի «Դատապարտյալների ներման խնդրագրերը քննարկելու կարգը հաստատելու մասին» հրամանագիրը չի կարող որևէ սահմանափակում նախատեսել Նախագահի կողմից իր այս լիազորությունն իրականացնելու համար, ինչպես, օրինակ, որևէ հանձնաժողովի դրական եզրակացությունը, պատգամավորների որևէ խմբի նախաձեռնությունը կամ հենց դատապարտյալի նախաձեռնությունը կամ համաձայնությունը<sup>17</sup>:

Տարբեր պետությունների տարածքներում ներման իրավունքի միանման կիրառում նախատեսող օրենսդրության գործելն ապահովում է իրավական օգնության մասին միջազգային պայմանագրերի նորմերի արդյունավետ իրականացումը, քանի որ հանցագործի հանձնման կամ քրեական հետապնդման վերաբերյալ հարցման ենթարկված պետության համաձայնության պայմաններից մեկը այդ պետությունում արարքի հանցավոր լինելը ճանաչելն է: Ներման կիրառման դեպքում այն պետք է ապահովի երկու կողմերի համաձայնությունը: Այդ կապակցությամբ պետությունների օրենսդրություններում ներման մասին նորմերը պետք է ունենան միանման ամրագրում և ընկալում՝ դրանով իսկ հռչակելով, որ մարդը չի կարող միևնույն հանցագործության համար կրել կրկնակի պատիժ (ne bis in idem):

Միասնական իրավական նորմերի հաստատումը նպաստում է միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը և համապատասխանաբար ներման իրավունքի իրականացմանը: Վերլուծելով արտասահմանյան օրենսդրությունը՝ պրոֆեսոր Ա. Գրիշկոն նշում է, որ այդ խնդիրը ավելի հեշտ լուծվող էր ԽՍՀՄ նախկին հանրապետությունների համար, քանի որ դրա համար օբյեկտիվ նախադրյալներ կային: Դրանց թվին են պատկանում երկրների բազմամյա միասնական սոցիալտնտեսական հարաբերությունները, ոչ վաղ անցյալում ընդհանուր իրավական համակարգի առկայությունը և սուբյեկտիվ հիմքերը (իրավապահ մարմիններում աշխատողների հոգեբանական համատեղելիությունը և այլն)<sup>18</sup>:

Փամանակակից միջազգային իրավունքում

համընդհանուր ճանաչում ունի այն դրույթը, որ պետությունները ընդունվող ներպետական օրենքները, ինչպես նաև նրանց կողմից նախաձեռնվող իրավակիրառական միջոցները պետք է համաձայնեցնեն իրենց միջազգային պարտավորությունների հետ: Միջազգային իրավունքի այդ դիրքորոշումն իր ամրագրումն ստացավ ՄԱԿ-ի Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիայում, որի 27-րդ հոդվածը սահմանում է, որ որևէ պայմանագրի մասնակից պետություն չի կարող հիմնվել իր ներքին իրավունքի դրույթների վրա՝ որպես արդարացում իր կողմից չկատարած պայմանագրի համար<sup>19</sup>: Այդ պատճառով միջազգային իրավունքի նորմերի իմպլեմենտացիան միջպետական հարաբերությունների կարգավորման հարցերում հանդիսանում է ազգային օրենսդրության վերջնական նպատակը:

Այսպիսով, միջազգային իրավական նորմերի համադրված ու համակարգային վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ ներման ինստիտուտի իրավական կարգավորման հիմքերը բխում են մարդու իրավունքների համընդհանուր ճանաչում ստացած միջազգային իրավական չափորոշիչներից: Դրանք են՝

**Առաջին.** միջազգային օրենսդրության մեջ ամրագրված են նորմեր, որոնք նախատեսում են մահապատժի տեսքով պատժի դատապարտվածների ներում խնդրելու մասին իրավունքը այն պետություններում, որտեղ այն վերացված է:

**Երկրորդ.** միջազգային իրավունքի նորմերը նախատեսում են մահապատժի հետ կապ չունեցող դատապարտվածներին ներում շնորհելու իրավունքի իրացման հնարավորությունը:

**Երրորդ.** միջազգային իրավունքի նորմերն արտացոլում են ներման ակտի կիրառման որոշ ընթացակարգային հարցեր, օրինակ՝ դատական գործունեության անկախությանը և դատարանի դատավճռի կատարման կամ դադարեցման հիմքերին վերաբերող հարցերը:

**Չորրորդ.** ներման մասին նորմերը արտացոլում են գտնում միջազգային իրավական ակտերում, որոնք կարգավորում են մարդու կենսագործունեության տարբեր ոլորտներում (մշակույթ, տրանսպորտ և այլն):

**Հինգերորդ.** միջազգային իրավունքը ներման կարգավորման հարցերը դիտում է ներպետական մակարդակում, որպես յուրաքանչյուր ինքնիշ-

խան պետության իրավունք՝ ազգային իրավական ավանդույթներին համապատասխան:

**Վեցերորդ.** միջազգային իրավական նորմերը նպաստում են ազգային օրենսդրությունների ընդլայնմանը, ներման միատեսակ ընկալմանը և միջազգային իրավական ակտերի ու պայմանագրերի մասնակից պետությունների իրավական համակարգերի մերձեցմանը:

Այսպիսով, միջազգային իրավունքի նորմերը ներպետական մակարդակում էական ազդեցություն են ունենում ներման սահմանադրական իրավական կարգավորման վրա, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ ներման հարցերով հարաբերությունները կարգավորող միջազգային իրավական նորմերի իմպլեմենտացիան տեղի է ունենում պետությունների սահմանադրությունների մակարդակում, ընդ որում, պետությունների, այդ

թվում նաև Հայաստանի Հանրապետության կողմից ներման ոլորտում միջազգային իրավունքի նորմերի ճանաչման հետ փոփոխվում է ազգային օրենսդրությունը:

Ժամանակակից հասարակության մեջ ներման ինստիտուտի զարգացումը տեղի է ունենում յուրաքանչյուր դատապարտյալի ներում խնդրելու մասին իրավունքի իրականացման երաշխիքների ապահովման ուղղությամբ: Այդ դեպքում միջազգային մակարդակով ճանաչվում է ներում իրականացնելու եղանակի, ներման իրավունքի իրականացման, նրա հիմքերի և կիրառման սահմանների ընտրության մեջ յուրաքանչյուր ինքնիշխան պետության իրավունքը:

<sup>1</sup> Պատմությունից հայտնի է հանրահայտ գորավար, դիկտատոր Պապիրիուսի կողմից զինվորական կարգապահությունը խախտելու համար դատապարտված հռոմեական բանակի հեծելազորի քաջարի հրամանատար Ֆաբիուսի ներման հայտնի դեպքը: Երիտասարդ գորավարի դատապարտումը առաջ բերեց փոխադարձ գժտություն, և դատարանի գործերին միջամտեցին սենատը և ժողովուրդը: Ֆաբիուսը մեղավոր ճանաչվեց և ընդունեց իր մեղքը, իսկ դիկտատոր Պապիրիուսը չազատեց պատանուն պատժից, սակայն, ի հեճուկս օրենքի իշխանությանը, մեղավորին հանձնեց սենատի և ժողովրդի ողորմածության: Sca` Ливий Тит. Римская история от основания города. Т.2. 1901, С. 149-159.

<sup>2</sup> Sca` Люблинский П.И. Право амнистии. Историко-догматическое и политическое исследование. «Сенатская типография». 1907, С. 22:

<sup>3</sup> Sca` նույն տեղում, էջ 22:

<sup>4</sup> Sca` նույն տեղում, էջ 23:

<sup>5</sup> Sca` Люблинский П.И. նույն աշխ., էջ 23-24:

<sup>6</sup> Sca` Ордонанс 1498 года «О суде и охране порядка в королевстве» //http://www.vostlit.info/Text/Dokumenty/Franse/Ordonans 1498/text.htm

<sup>7</sup> Sca` Люблинский П.И. նույն աշխ., էջ 26:

<sup>8</sup> Sca` նույն տեղում, էջ 28-29:

<sup>9</sup> Sca` նույն տեղում, էջ 76:

<sup>10</sup> Sca` նույն տեղում, էջ 77:

<sup>11</sup> Sca` նույն տեղում, էջ 11, 13:

<sup>12</sup> Sca` նույն տեղում, էջ 91:

<sup>13</sup> Международная конвенция по борьбе с подделкой денежных знаков от 20 апреля 1929 года// Собрание законодательства Союза ССР 1990г., отд. II, N 6. М., 1990 г., вып. VII.

<sup>14</sup> Sca` Гришко А.Я. Амнистия и помилование: Монография. - Рязань: Академия права и управления Федеральной службы исполнения наказаний, 2006. - 199. С. 136.

<sup>15</sup> Международный пакт о гражданских и политических правах от 16 декабря 1966 года // Действующее международное право. В 3-х томах. Составители Колосов Ю.М. и Кривчиков Э.С. Том 2. - М.: Издательство Московского независимого института международного права, 1997. С. 21-39.

<sup>16</sup> Конвенция о правовой помощи и правовых отношениях по гражданским, семейным и уголовным делам от 7 октября 2002 года // ИПС Кодекс. Документ опубликован не был.

<sup>17</sup> ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ , Գ.Հարությունյանի և Ա.Վաղարշյանի խմբ., Իրավունք 2010, էջ 648:

<sup>18</sup> Մեջբերումը՝ Гришко А.Я. Амнистия и помилование: Монография. - Рязань: Академия права и управления Федеральной службы исполнения наказаний, 2006. С. 137-138.

<sup>19</sup> 1969 թ. Վիեննայի Կոնվենցիան Սիջազգային պայմանագրերի իրավունքի մասին:

#### РЕЗЮМЕ

##### *Некоторые вопросы историко-правового анализа и международного правового регулирования помилования*

В статье автор анализирует историко-правовые вопросы помилования, а также проблемы международного правового его регулирования в отдельных зарубежных странах и в Республике Армения. В частности, рассмотрены модели помилования как одного из древнейших институтов права в Древнем Риме, Германии, Англии, Франции и других странах, появившегося одновременно с государственной властью и системой правосудия.

В статье проблема обсуждается в контексте сопоставления международно-правовых норм и законодательства Республики Армения.

*Ключевые слова:* помилование, право на помилование, помиловать, международно-правовое и внутригосударственное регулирование института помилования.

#### SUMMARY

##### *Some questions of historical and legal analysis of the international legal and regulatory pardon*

The author analyzes the historical and legal issues pardons and the problems of its international legal regulation in selected foreign countries in the Republic of Armenia. In particular, we consider the model of pardon as one of the oldest institutions of law in ancient Rome, Germany, Britain, France and other countries, which appeared simultaneously with the government and the justice system.

In this paper the problem is discussed in the context of international management and government regulation of the institute of pardon.

*Key words:* pardon, the right of pardon, pardon, the international legal regulation of the institution and domestic regulation of the institution of pardon.

**ԱՐՏԱԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

ՀՀ ոստիկանության շտաբի ավագ տեսուչ,  
ՀՀ ոստիկանության ավագ լեյտենանտ  
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի  
և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական  
դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՉԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ  
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Չինժառայողների կողմից կատարվող հանցագործությունները դասվում են առավել վտանգավոր հանցագործությունների շարքին, քանի որ ոտնձգություն են թույլ տալիս պետության անվտանգության, տարածքային ամբողջականության, ՀՀ զինված ուժերի հեղինակության և միանձնյա ղեկավարության սկզբունքի դեմ: Չինժառայողների կողմից կատարվող հանցագործությունների քրեաիրավական հիմնախնդիրները վեր հանելու, այդ հանցագործությունների պատճառներն ու պայմանները բացահայտելու նպատակով անհրաժեշտ է կատարել կրիմինալոգիական խորը ուսումնասիրություններ:

Աշխատության նպատակն է ներկայացնել զինվորական հանցավորության ընդհանուր կրիմինալոգիական բնութագիրը:

Այս առումով անհրաժեշտ է առավելագույնս ուսումնասիրել հանցագործի անձը: Գ. Մ. Ռեզնիկը գտնում է. «Հանցագործի անձի մասին կարելի է խոսել միայն անձանց շատ նեղ կոնտինգենտի հետ կապված, որոնց համար հանցագործությունը դարձել է հիմնական, առաջնային գործունեություն<sup>1</sup>»: Ա. Ի. Դոլգովան նշում է, որ իմաստ չկա խոսելու հանցագործի անձի մասին որպես գիտական պրոբլեմի, եթե նրան բնորոշ չեն այնպիսի հատկանիշներ, որով նա տարբերվում է այն անձանցից, որոնք չեն կատարում հանցագործություն<sup>2</sup>:

Հանցագործի անձն իրենից ներկայացնում է սոցիալապես նշանակալից նեգատիվ հատկանիշների ամբողջություն, որը ձևավորվել է նրա մոտ այլ անձանց հետ բազմաբնույթ և սիստեմատիկ փոխգործողությունների գործընթացում<sup>3</sup>: Հանցագործի անձի կրիմինալոգիական հետազոտումը

հիմնականում իրականացվում է նրա այն հատկանիշների բացահայտման և գնահատման համար, որոնք ծնում են հանցավոր վարքագիծը: Հենց սրանից է հիմնականում կախված այնպիսի պրոբլեմի լուծումը, ինչպիսին է հանցավոր վարքագծի պատճառների և մեխանիզմի բացահայտումը և հանցավորության կանխման արդյունավետությունը:

Խոսելով հանցագործություն կատարող անձի հոգեբանական հատկանիշներից՝ չենք կարող չանդրադառնալ նրա խառնվածքի հետ կապված հարցերին: Այստեղ որոշիչ են հանդիսանում մարդկային խառնվածքի հանրահայտ չորս տիպերը, որոնք ժամանակին առաջ էին քաշվել Հիպոկրատի և զարգացվել Պավլովի կողմից.

1. Սանգվինիկներ (հիմնականում հանգիստ, կենսուրախ մարդիկ են)
2. Ֆլեգմատիկներ (հիմնականում հանգիստ, դանդաղկոտ մարդիկ են)
3. Խոլերիկներ (հիմնականում բռնկվող, բայց դանդաղկոտ մարդիկ են)
4. Մելանխոլիկներ (թախծոտ, մռայլ մարդիկ են)

Չինժառայող սանգվինիկներին բնորոշ է արագությունն ու խիզախությունը: Չինժառայող խոլերիկները դրսևորում են նախանձելի, բայց չհիմնավորված վճռականություն ու խիզախություն: Դրա հետ մեկտեղ նրանք կարող են զգալ ուժեղ վախ: Չինժառայող ֆլեգմատիկներին բնութագրական է գիտակցված վճռականությունն ու խիզախությունը, սակայն այդ հատկանիշները նրանց մոտ ուժեղ են միայն այն խնդիրներն իրականացնելիս, որոնց նրանք հատուկ պատրաստվել են: Առավել քիչ են բանակային կյանքին պատրաստված չինժառայող մելանխոլիկները, քանի որ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նրանց վճռականությունն ու խիզախությունը կարճաժամկետ են և դրսևորվում են միայն նրանց առջև ծագած չնչին արգելքները հաղթահարելիս<sup>4</sup> :

Պարտադիր ծառայության զինծառայող հանցագործի վարքագծի համար բնութագրական է կյանքի ռեգրեսի զգացողությունը, ինչպես նաև ամբողջի մեջ միայնակ զգալու ֆենոմենը<sup>5</sup> : Սոցիալական մեկուսացումը, հոգևոր արժեքների բացակայությունը, տեղաշարժման սահմանափակումը, մշտապես միասեռ կոլեկտիվի հետ շփումը, միմյանց նկատմամբ փոխադարձ ազդեցությունը, հրամանատարական կազմի նկատմամբ անտագոնիստական վերաբերմունքը, անբավարար նյութական ապահովվածությունը և բազմաթիվ այլ ֆակտորներ զինծառայող հանցագործին դրդում են վերադառնալու վարքագծի պարզագույն ձևերին: Հոգեբանները նշում են, որ տեղի է ունենում կյանքի ռեգրեսի՝ վերադարձ վարքագծի պարզագույն ձևերին: Նրանց հետաքրքրությունները դուրս չեն գալիս այնպիսի պրիմիտիվ հարցերի շրջանակներից, ինչպիսիք են ավելի շատ սնունդ հայթայթելը, ավելի հեշտ աշխատանք կատարելը և այլն:

Չինծառայող հանցագործի բնավորությունը բնութագրվում է այնպիսի գծով, ինչպիսին է ֆատալիզմը: Դա բացատրվում է նրանց՝ իրենց կամքից անկախ դրության մեջ հայտնվելու, հետագայի նկատմամբ բացարձակ անորոշության և որևէ ձևով դրա վրա ազդելու անկարողությամբ և այլ հանգամանքներով: Պարտադիր ծառայության զինծառայող հանցագործների շահադիտական տիպին բնորոշ են ձգտումը դեպի նյութական արժեքները, դրամը: Դրանն ու գույքը հանդիսանում են նրանց հիմնական սոցիալական արժեքը: Այս տիպի հանցագործների հիմնական առանձնահատկությունը կայանում է իրենց նյութական պահանջմունքները կատարված աշխատանքի հետ համապատասխանեցնելու անընդունակության կամ ցանկության բացակայության մեջ: Սա բնութագրական է այն անձանց, ովքեր կատարում են հավիշտակություններ, զբաղվում են կաշառակերությամբ: Այս խմբին են դասվում նաև զինվորական պաշտոնեական հանցագործությունների մեծ մասը: Այս տիպին են մոտենում նաև այն անձիք, ովքեր կատարում են նույն շահադիտական արարքները, սակայն հանցագործության փոխված դրդապատճառով, որը շատ դեպքերում կապված է լինում ակոհոլի, աղավաղված սեռական պահանջմունքների և այլնի հետ:

Այս սուբյեկտների ուշադրությունը կենտրոնացված է ոչ այնքան նյութական արժեքների, որքան հարբեցողության, ցոփ ու շվայտ կյանքի վրա, և որոնց ֆինանսական հնարավորությունները ակնհայտորեն քիչ են այդ պահանջմունքները բավարարելու համար: Այս մոտիվացիան բնորոշ է ցածր կուլտուրա, սահմանափակ հետաքրքրություններ ունեցող զինծառայողների համար:

Չինծառայող հանցագործների ագրեսիվ տիպին բնորոշ է ինքնահաստատման աղավաղված ձգտումը, իր «ես»-ի հաստատումը, էգոիստական, արհամարհական վերաբերմունքն այլ զինծառայողների նկատմամբ, սեփական անձի գերագնահատումը, զարգացածության ցածր մակարդակը, հետաքրքրությունների բացարձակ պարզունակությունը, ակոհոլի նկատմամբ ակնհայտ ձգտումը (ինչպես նաև թմրանյութերի), ֆիզիկական ուժ գործադրելու ցանկությունը, ագրեսիվ վարքագիծ դրսևորելու բացահայտ կամ թաքնված պատրաստակամությունը, թույլ արտահայտված ներքին վերահսկողությունը և անհավասարակշռությունը: Նման ուղղվածությունը կարող է բերել անձի դեմ ուղղված տարբեր հանցագործությունների (սպանություն, ծանր մարմնական վնասվածքներ հասցնելը և այլն), խուլիգանության, ենթակայության և զինվորական պատվի, կանոնադրային հարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների և այլն:

Պարտադիր ծառայության գորակոչված զինծառայող հանցագործների անարխիստական ուղղվածության տիպի համար բնորոշ է նեգատիվ վերաբերմունքը զինվորական պաշտոնեական և պրոֆեսիոնալ պարտականությունների կատարման սահմանված կարգի նկատմամբ: Այստեղ ոտնձգության օբյեկտ կարող է դառնալ ցանկացած լայն իմաստով արգելք, որը խանգարում է հանցավորի անձնական կամ կեղծ հասկացված ծառայողական հետաքրքրություններին՝ զինվորական ծառայություն կրելու համար սահմանված կարգը, մարտական հերթապահության, սահմանապահ, պահակային և ներքին ծառայությունների կրելու կարգը և այլն: Այս հանցագործությունների դեպքում բացակայում է կոնկրետ տուժողը, չեն լինում ուղղակի նյութական վնասներ: Կատարելով այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են ինքնակամ բացակայությունը, զինծառայության վայրը ինքնագլուխ թողնելը կամ, ասենք, պահակային

Ծառայության կանոնները խախտելը, հանցավորը ենթադրում է, որ ինքը ոչ մեկին վնաս չի պատճառում: Վնասը, որը զինծառայողը հասցնում է զինվորական իրավակարգին, նա կամ չի տեսնում, կամ չի ուզում տեսնել: Քրեաիրավական և այլ արգելքները այս դեպքում նրա կողմից գնահատվում են իբրև ձևականություն: Հանցավորի հենց այս անարխիստական վերաբերմունքն էլ այդ ձևական (ինչպես իրեն է թվում) պարտականությունների նկատմամբ կազմում է քննարկվող հակասոցիալական ուղղվածության էությունը:

**Զինծառայող հանցագործներին բնորոշ են հետևյալ հատկանիշները.**

1. Հոգևոր պահանջմունքների և հետաքրքրությունների սղությունը:
2. Զինվորական ծառայության նկատմամբ արհամարհական վերաբերմունքը:
3. Իրավագիտակցության ոչ ամբողջական, թերի և աղավաղված լինելը:
4. Էմոցիոնալ անկայունությունը:
5. Իր կողմից կատարվող արարքի հետևանքների թույլ կանխատեսումը:
6. Աղավաղված, պրիմիտիվ կենցաղային շարժառիթների գերակայությունը:
7. Մոտիվացիայի պարզունակությունն ու թեթևամիտ վերաբերմունքը այն կենսական իրավիճակին, որում կատարվում է հանցագործությունը:

Այսպիսով, կարող ենք ասել, որ պարտադիր ծառայության զինծառայող հանցագործին բնորոշ են՝

- ա. Երիտասարդ, առավել կրիմինոգեն ակտիվ տարիքը (18-20 տարեկան) և անարխիստական, ագրեսիվ վարքագիծը, որը բնորոշ է այդ տարիքին<sup>6</sup>:
- բ. Չձևավորված, անկայուն հոգեբանությունը. հոգեբանները պնդում են, որ անձը վերջնականապես ձևավորվում է 21-22 տարեկան հասակում (ինչպես հայտնի է, ՀՀ-ում գորակոչային տարիք է սահմանված 18 տարեկանը):

գ. Չձևավորված հոգեբանության կախվածությունը բազմաթիվ սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոններից: Օրինակ՝ սպաների, ավելի երկար ծառայած զինծառայողների վերաբերմունքը նրա նկատմամբ, գորքերի տեսակը, որտեղ նա ծառայում է և այլն: Բոլորին է հայտնի, թե ինչ է այսօր կատարվում մեր բանակում, երբ հատկապես սպաների կողմից զինծառայողների նկատմամբ կիրառ-

վող ֆիզիկական ուժը, արժանապատվության պարբերաբար նվաստացումը, ծաղրուծանակի ենթարկելը, նրանց ստորացնելը դարձել է օրինաչափ երևույթ, երբ նրանք զինվորին դիտում են ոչ թե որպես մարդ, ազգի պաշտպան, այլ մի ֆիզիոլոգիական էակի, որը պարտավոր է ծառայել իրենց, այլ ոչ թե հայրենիքին:

դ. Գեղոնիստական ռիսկը, երբ անձը բավականություն է ստանում վտանգից, ռիսկից:

ե. Հակաիրավական, անարխիստական մինչգորակոչային վարքագիծը: Համաձայն կատարված հարցումների՝ զինծառայողների 15%-ից ավելիի նկատմամբ հիմքեր են եղել քրեական պատասխանատվության ենթարկելու, սակայն նրանց նկատմամբ տարբեր պատճառներով մեղադրանք չի առաջադրվել: Այս իրադրությունում նրանց մոտ ձևավորվում է անպատժելիության և անպատասխանատվության մթնոլորտ, որն, անշուշտ, իր բացասական կնիքն ունի մեր բանակի և պետականության կերտման վրա, և այս բացասական երևույթի դեմ պայքարը պետք է լինի ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ պետության և ողջ իրավապահ համակարգի խնդիրը:

զ. Ալկոհոլային խմիչքների և թմրանյութերի օգտագործման փորձի առկայությունը: Ընդհանուր տվյալների համաձայն՝ կատարված հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկված զինծառայողների 50%-ը խոստովանել է, որ մինչև բանակ գորակոչվելն օգտագործել է ալկոհոլային խմիչքներ, որոնցից 11%-ը՝ ամեն օր, 16%-ը՝ ամեն ամիս, 23%-ը՝ ամսական մեկ անգամից պակաս: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ հանցագործությունների մեծամասնությունը կատարվում է ալկոհոլային հարբածության վիճակում: Ակնհայտ է ալկոհոլի կրիմինոգեն ազդեցությունը: Ալկոհոլիզմը միշտ ուղեկցվում է բազմաբնույթ սոցիալական հետևանքներով՝ աննպաստ ինչպես անձի, այնպես էլ հասարակության համար:

Ալկոհոլի կրիմինոգեն նշանակությունը արտահայտվում է նրանում, որ այն նպաստում է հոգեկան անոմալիաների զարգացմանը: Մերտ կապը հարբեցողության և հանցավորության միջև առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ նրանք դետերմինացված են շատ ընդհանուր պատճառներով, օրինակ՝ ցածր մշակութային մակարդակով և այլն: Բացի այդ՝ ալկոհոլիզմն ու հանցավորությու-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նր փոխադարձ ազդում են միմյանց վրա. ինչպես ալկոհոլիզմն է կարևոր պայման հանցագործության կատարման համար, այնպես էլ հանցավոր վարքագիծը նպաստում է ալկոհոլիզմին<sup>7</sup>: Անձինք, որոնք երկար ժամանակ վարում են հակահասարակական կենսակերպ և կատարում են հանցագործություններ, հիմնականում հանդիսանում են հարբեցողներ: Ահռելի են նաև թմրանյութերի տարածվածության մասշտաբները զինծառայողների շրջանում: Ինչպես գիտենք, ալկոհոլ և թմրանյութեր օգտագործելիս բթանում է անձի գիտակցությունը, կորչում է կամ համենայն դեպս խիստ թուլանում է օբյեկտիվ իրականությունը ճիշտ ընկալելու և համապատասխան գնահատական տալու ունակությունը, որն անհարկի է բանակի առջև դրված խնդիրների և նպատակների հետ, և որի նկատմամբ հսկողությունը մշտապես պետք է գտնվի հրամանատարական կազմի ուշադրության կենտրոնում և անհրաժեշտության դեպքում հանգեցնի խիստ սանկցիաների: Մինչդեռ մեր ունեցած տվյալներով՝ բանակի սպայական կազմի մեծամասնությունն ինքն էլ դեռ չէ ալկոհոլի և թմրանյութերի օգտագործմանը:

Է. Ջինծառայողների նեգատիվ սոցիալական վիճակը: Ըստ ընդհանուր տվյալների՝ զինծառայողների 40%-ը ապրել է ընտանիքներում, որոնց եկամուտներն ավելի քիչ են եղել ապրուստի նվազագույն կենսամակարդակն ապահովելու համար անհրաժեշտ միջոցներից, 15%-ը եղել է միակողմանի ծնողազուրկ (հիմնականում հորից զուրկ) և դաստիարակվել է մոր կողմից, 2%-ը եղել է որբ, իսկ մեզ հայտնի է, թե նորմալ դաստիարակությունը որքան կարևոր է անձի աշխարհայացքի, բարոյական արժեքների ձևավորման համար:

ը. Ցածր կրթական մակարդակը: Ջինծառայողների մոտավորապես 45%-ը խոստովանել է, որ չի կարդում թերթեր, ամսագրեր և այլ ինֆորմացիայի աղբյուրներ, ավելի քան 1/3-ը՝ նաև գրքեր: Որքան շատ է կրթված անձը, այնքան ավելի լայն է նրա հետաքրքրությունների շրջանակը, իրավագիտակցության աստիճանը, մտահորիզոնը, և այնքան ավելի քիչ է նրա կողմից հանցանք կատարելու հավանականությունը:

թ. Ոչ ֆորմալ երիտասարդական խմբերի հետ շփման փորձը: Պետք է նշել, որ այդ ոչ ֆորմալ երիտասարդական խմբավորումների մեծամասնությունը կապված է հանցավոր աշխարհի հետ: Յու-

րաքանչյուր խմբավորման մեջ գոյություն ունի այսպես կոչված հեղինակություն՝ քրեական անցյալով, որը սովորեցնում է երիտասարդներին հանցավոր աշխարհի օրենքները և դրան հատկանշական վարքագծի նորմերը: Այս խմբերի ազդեցությունը կարող է ավելի ուժեղ լինել, քան ընտանիքի, կրթական միջավայրի ազդեցությունը:

ժ. Վարքագծի շարժառիթի դերի և իրավախախտման օբյեկտիվ հասարակական վտանգավորության թերագնահատումը, ինչպես նաև կոնկրետ իր արարքներին ճիշտ գնահատական տալու անկարողությունը:

ժա. Իր վարքագիծը օրենքի հետ չհամապատասխանեցնելու սովորությունը, օրենքի չիմացությունը կամ լավագույն դեպքում մակերեսային իմացությունը, իրավագիտակցության կախվածությունը իրեն անմիջականորեն շրջապատողների կարծիքից: Իհարկե, բանակում տիրող համատարած անգրագիտության պայմաններում դժվար է ակնկալել օրենքների և այլ իրավական ակտերի լիակատար իմացություն, սակայն դրանց էությունը կազմող հիմնական դրույթների ու սկզբունքների իմացությունը պետք է լինի պարտադիր պայման և առավել մատչելիորեն հրամանատարական կազմի կողմից ներկայացվի զինծառայողներին: Ինչպես վերը նշեցինք, զինծառայողների մեծամասնության մոտ առկա է թույլ զարգացած իրավագիտակցություն, որը շատ հեշտորեն կարող է փոփոխվել զինծառայողին շրջապատող ոչ ֆորմալ ռեֆերենտալ խմբերի ազդեցության ներքո: Ջինծառայող իրավախախտը սկսում է կողմնորոշվել խմբի հայացքներով, խմբի վերաբերմունքը դառնում է նրա համար ամենակարևորը, խմբի գնահատականները դառնում են նրա վարքագծի հիմնական կողմնորոշիչները:

ժբ. Մասնակցությունը ոչ ֆորմալ բանակային կյանքին և նրանում գլխավորող կարգավիճակի ձեռքբերումը: Ակնհայտ է, որ շատ դժվար է նորմալ կյանքին սովոր երիտասարդների համար հայտնվել մի միջավայրում, որտեղ ամեն ինչ խստորեն կանոնակարգված է, որտեղ ակնհայտորեն սահմանափակված են նրանց իրավունքներն ու ազատությունները (ելնելով զինված ուժերի առջև դրված խնդիրների ու նպատակների խիստ առանձնահատուկ ու կարևոր լինելու հանգամանքից), որտեղ, ինչպես արդեն վերը նշեցինք, ֆիզիկական, ինչպես նաև հոգեկան հարկադրանքի գործադրումը դար-

ձեղ է օրինաչափ երևույթ, որտեղ անձի կամքը լիովին կամ մասնակիորեն կախվածության մեջ է հրամանատարների և ավելի երկար ծառայած զինծառայողների կամքից և շատ ու շատ այլ բացասական հանգամանքներից, որոնք այսօր առկա են մեր բանակում: Մասնակցությունը ոչ ֆորմալ բանակային կյանքին զինծառայողներից շատերի մոտ առաջ է բերում այդ միջավայրում ղեկավար դիրք գրավելու, իր կամքը ուրիշների թելադրելու, կեղծ հեղինակություն ձեռք բերելու ահռելի ձգտում, որը կայուն նախադրյալ է հանդիսանում մեր բանակում կատարվող հանցագործությունների մեծամասնության համար:

Ժգ. Լավ ֆիզիկական պատրաստվածությունը և ձգտումը մարդկային հետադիմական (ռեգրեսիվ) արժեքներին: Այսպիսի հատկանիշներով օժտված զինծառայողի համար շատ հեշտ է մերվել մեր այսօրվա բանակային կյանքին և իր դոմինանտ դիրքը հաստատել ավելի թուլակազմ և հոգեպես անկայուն զինծառայողների նկատմամբ: Այս ամենի հետևանքով ստեղծվում է անպատժելիության մթնոլորտ, որը նպաստում է անարխիստական, իսկ երբեմն էլ խուլիգանական մոտիվացիայի ձևավորմանը:

Ժդ. Համոզմունքը այն բանում, որ իրենք միշտ ճիշտ են, և ատելությունն այն անձանց նկատմամբ, որոնք ինչ որ ձևով կարողացել են խուսափել ծառայությունից: Իրենց ճշմարտացիության մեջ համոզմունքը նրանց մոտ առաջ է բերում արհամարհական, ժխտողական վերաբերմունք մնացածի կարծիքի, մտածելակերպի, անհատականության նկատմամբ, իսկ ատելությունը ծառայությունից ինչ-որ ձևով խուսափած անձանց նկատմամբ առավել սուր բնույթ է ստանում այն դեպքում, երբ այդ անձինք ինչ-ինչ պատճառներով հայտնվում են բանակում:

Ժե. Գրգռվածությունը, խիստ բռնկուն լինելը և ոչնչով չպայմանավորված ագրեսիվ վարքագիծը: Սա հիմնականում բնորոշ է հոգեբանական խառնվածքի խոլերիկ տիպին պատկանող զինծառայողներին:

Այժմ անդրադառնանք այն զինծառայող հանցագործների ուսումնասիրությանը, ովքեր հանցանքը կատարել են անզգուշությամբ (ռազմական գույքը անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, զենքի հետ, ինչպես նաև շրջապատի համար մեծ վտանգ ներկայացնող նյութերի և առարկանե-

րի հետ վարվելու կանոնների խախտումը, մեքենաները վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, թռիչքների կամ դրանց նախապատրաստման կանոնները խախտելը և այլն):

Այս կատեգորիայի հանցագործների համար բնութագրական են հետևյալ հատկանիշները՝

1. Էգոիզմը և զուտ անձնական նպատակների հասնելու ձգտումը: Նրանք իրենց շահերը վեր են դասում շրջապատողների շահերից և վերջնական նպատակին հասնելու անհազ ձգտման ազդեցության տակ չեն նկատում, թե ինչպես են խախտում այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը և բանակում գործող կանոնները:

2. Իր կողմից անվտուրբեն թույլ տրված իրավախախտումների քողարկման ձգտումը:

3. Սխալ հասկացված ծառայության նպատակները:

4. Իրավական նիհիլիզմը:

5. Վարքագծի կոմունիկատիվությունն այն դեպքերում, երբ իրավախախտումը թույլ է տրվում իր զինակիցների կամքին հակառակ չզնայալու համար:

6. Տագնապայնությունը և իր սեփական ուժերի նկատմամբ անվստահության զգացումը:

7. Թույլ ֆիզիկական (նաև հոգեբանական) պատրաստվածությունը էքստրեմալ իրավիճակներում բարդ տեխնիկայի հետ աշխատելու համար՝

Անզգուշությամբ կատարվող հանցագործությունների մեծամասնությանը բնորոշ է թեթևամիտ-անպատասխանատու մոտիվացիան՝ Հետազոտությունները ցույց են տվել, որ անզգուշ հանցագործությունների արդյունքում հասցված ֆիզիկական և նյութական վնասը գերազանցում է դիտավորյալ հանցագործությունների կատարմամբ պատճառված վնասին:

Չինծառայող հանցագործի կողմից հանցանքների կատարման պատճառների ու պայմանների վերհանման, դրա նկատմամբ կանխարգելման արդյունավետ միջոցների իրականացման համար անհրաժեշտ է բացահայտել մի շարք առանձնահատկություններ, որոնք անմիջական և ուղղակի ազդեցություն ունեն զինծառայողների կողմից հակաիրավական վարքագիծ դրսևորելու մեխանիզմում: Հանցանք կատարած անձի հիմնական, համակարգային հատկությունը, որը բնորոշում է նրա՝ որպես սոցիալական ինքնություն տիպի, առանձնահատկությունները, հանդիսանում է նրա հակա-



**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

հասարակական ուղղվածությունը, հանրային վտանգավորությունը<sup>10</sup>: Եթե նկատի ունենանք հանցանք կատարած անձ հասկացությունը բովանդակային առումով, ապա պետք է նշել, որ հակահասարակական հատկությունները բնորոշ են ոչ բոլոր հանցանք կատարած անձանց<sup>11</sup>:

Այսպիսով կարելի է ասել, որ պարտադիր ծառայության զինծառայող հանցագործը առավել կրիմինոգեն տարիքի հասած, անկայուն հոգեբանությամբ, ֆիզիկապես լավ պատրաստված, կյանքի հետադիմական արժեքաբանություն ունեցող,

հոգեբանական խառնվածքի խոլերիկ տիպին պատկանող չկայացած անձն է, որը զբաղեցնում է գլխավորող լիդերի դեր ոչ ֆորմալ բանակային կյանքում, և որին հատկանշական է ագրեսիվ-անարխիստական, բռի վարքագիծը՝ կապված ակոհոլային խմիչքների ու թմրանյութերի օգտագործման հետ, և որը կրում է հասարակության համար ոչ պիտանի անձի պիտակը:

<sup>1</sup> Տե՛ս Բեզնիկ Գ. Մ. “Криминологическая профилактика и социальное планирование”. М. 1979. С. 29.  
<sup>2</sup> Տե՛ս Դոլգովա Ա. Ի. “Изучение личности преступника”. Сов. гос. и право. 1978. N 6. С. 79.  
<sup>3</sup> Տե՛ս “Криминология”. Под ред. В. Н. Кудрявцева и В. Е. Эминова. М. 2002. С. 26.  
<sup>4</sup> Տե՛ս Կորոբեյնիկով Մ. Ս. “Сержанту о психологии”. М. 1965. С. 163.  
<sup>5</sup> Տե՛ս Անտոնյան Յ.Մ. “Тени прошлого”. М. 1996. С. 304-306.  
<sup>6</sup> Տե՛ս Լунесև Վ.Վ. “Нарушение можно предупредить”. М. 1987. С. 41.  
<sup>7</sup> Տե՛ս “Преступность и психические аномалии” под ред. Антоныаня Ю.М. и Бородин С.В. М. 1987. С. 14.  
<sup>8</sup> Տե՛ս Անտոնյան Յ.Մ., Ենիկեսև Մ.Ի., Էմինով Վ.Է. “Психология преступника и расследование преступлений”. М. 1996. С. 49-60.  
<sup>9</sup> Տե՛ս Լунесև Վ.Վ. “Мотивация преступного поведения”. М. 1991. С. 27.  
<sup>10</sup> Տե՛ս Վոլոժենկին Բ.Վ. “Общественная опасность личности, как криминологическая и уголовно-правовая категория”. М. 1979. С. 73.  
<sup>11</sup> Տե՛ս Անտոնյան Յ.Մ. “Изучение личности преступника”. М. 1982. С. 38.

**ՔԵԶԻՍԵ**

*Общая криминологическая характеристика преступлений военнослужащих*

Статья посвящена изучению криминологических аспектов преступлений военнослужащих, которые актуальны с точки зрения существующих в настоящее время неуставных отношений в Вооруженных Силах РА.

**SUMMARY**

*General characteristics of Criminal offenses troops*

Article examines the criminological aspects of military offenses, which are relevant from the point of view of the currently existing hazing in the Armed Forces of the Republic of Armenia.

## АНДРАНИК КАРАПЕТЯН

Соискатель кафедры уголовного процесса юридического факультета Оренбургского государственного университета



## УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫЕ ГАРАНТИИ ОХРАНЫ ТАЙНЫ

Несмотря на многочисленные исследования вопроса о правовых гарантиях, единого подхода к их понятию и определению не выработано. Более того, отдельные отраслевые исследования этого вопроса привнесли лишь многообразие точек зрения. В настоящий момент большое внимание уделяется не только правовым гарантиям, но и более узкому отраслевому их изучению, в частности, уголовно-процессуальным гарантиям.

Большинство исследователей под процессуальными гарантиями понимает средства, которые установлены уголовно-процессуальным законодательством и направлены на осуществление задач уголовного судопроизводства. Этой позиции придерживались и придерживаются такие ведущие исследователи в области уголовного процесса как К.Ф. Гуценко, П.А. Лупинская, Н.С. Алексеев и др.<sup>1</sup>. Нами поддерживается данная точка зрения и процессуальные гарантии рассматриваются именно в качестве законодательно предусмотренных средств, направленных на реализацию задач уголовного судопроизводства.

Статья 6 УПК РФ среди задач уголовного судопроизводства выделяет:

- 1) защиту прав и законных интересов лиц и организаций, пострадавших от преступлений;
- 2) защиту личности от незаконного и необоснованного обвинения, осуждения, ограничения ее прав и свобод.

Эти задачи являются основными задачами, стоящими перед лицами, которые осуществляют производство по уголовному делу.

Задачи, по мнению З.Д. Еникеева, - это ориентиры деятельности органов уголовной юстиции, имеют значение: информационное, регулирующее, программирующее, организующее-направляющее данную деятельность по конкретным уголовным делам. Без таких ориентиров, без

правовой информации о задачах и путях их решения уголовно-процессуальная деятельность слепа, равносильна движению корабля без компаса, способна породить произвол..., а также иные нарушения, ущемляющие права и интересы граждан<sup>2</sup>.

В процессе расследования уголовного дела возникают и решаются и иные более узкие, не перечисленные в ст. 6 УПК РФ, задачи, которые также направлены как на защиту интересов личности, так и на защиту интересов правосудия. Такие задачи определяются стадией производства по уголовному делу, проведением отдельного процессуального действия и другими факторами, в том числе и необходимостью защиты прав, свобод и законных интересов личности в процессе производства по уголовному делу.

Среди таких задач выделяется задача охраны в процессе производства по уголовному делу сведений, относящихся к категории тайн, конфиденциальной информации, а также информации с ограниченным доступом.

Уголовно-процессуальный механизм защиты охраняемой законом тайны включает и гарантии такой защиты.

Обратимся к характеристике некоторых положений уголовно-процессуального законодательства.

Общепризнанные нормы и принципы международного права регламентируют защиту личных и семейных тайн, а также сведений о личной жизни человека. В связи с этим, ч. 3 ст. 1 УПК РФ предусматривает, что общепризнанные принципы и нормы международного права и международные договоры Российской Федерации являются составной частью законодательства Российской Федерации, регулирующего уголовное судопроизводство. Это говорит о важности предпи-

саний международного права для уголовно-процессуальной деятельности.

Статья 13 УПК РФ гарантирует тайну переписки, телефонных и иных переговоров, почтовых, телеграфных и иных сообщений. Статья 29 УПК РФ среди полномочий суда выделяет такие полномочия как дача разрешения о производстве выемки предметов и документов, содержащих государственную или иную охраняемую федеральным законом тайну, а также предметов и документов, содержащих информацию о вкладах и счетах граждан в банках и иных кредитных организациях; о наложении ареста на корреспонденцию, разрешении на ее осмотр и выемку в учреждениях связи; о получении информации о соединениях между абонентами и (или) абонентскими устройствами.

Среди прав участников уголовного судопроизводства следует отметить, что многие из них наделены правом свидетельского иммунитета, который следует рассматривать в качестве гарантии неразглашения предусмотренных законом тайн. В частности о таких тайнах говорится в ч. 3 ст. 56 УПК РФ. А также недопустимость разглашения данных предварительного следствия, которые в качестве обязанности закреплены за каждым участником процесса: подозреваемым, обвиняемым, потерпевшим, свидетелем и др.

Уголовно-процессуальное законодательство содержит немало важных положений, которые следует рассматривать в качестве гарантий охраны тайны в уголовном процессе. В частности, ст. 161 УПК РФ предусматривает недопустимость разглашения данных предварительного следствия; ч. 9 ст. 166 УПК РФ предусматривает сохранение в тайне данных о личности участников процесса, которые могут не приводиться в протоколе следственного действия.

Статья 182 УПК РФ возлагает на следователя обязанности к принятию мер не разглашения выявленных в ходе обыска обстоятельств частной жизни лица, в помещении которого был произведен обыск, его личной и (или) семейная тайна, а также обстоятельств частной жизни других лиц.

Статья 183 УПК РФ устанавливает процессуальные гарантии при производстве выемки предметов и документов, содержащих государственную или иную охраняемую федеральным

законом тайну, предметов и документов, содержащих информацию о вкладах и счетах граждан в банках и иных кредитных организациях. Эти действия возможно произвести исключительно на основании судебного решения, что выступает в качестве гарантии защиты этих видов тайн в уголовном процессе.

Рассмотренные нами положения ст. 182 и 183 УПК РФ выявили недостаточный механизм защиты охраняемой законом тайны при производстве обыска и выемки. Следует отметить, что во многом процедура обыска и выемки весьма схожа. Поэтому несколько неоднозначная позиция законодателя относительно регламентации порядка обнаружения информации, документов и сведений, отнесенных к категории тайн, при производстве данных следственных действий и их сохранности, считаем непоследовательной.

Как в ходе обыска, так и в ходе выемки могут быть получены документы, содержащие сведения о частной жизни лица, в помещении которого был произведен обыск или осуществлена выемка, получены документы, содержащие сведения о личной и (или) семейной тайне такого лица, обстоятельства частной жизни других лиц. Кроме того, могут быть обнаружены документы или информация о иных видах тайн, охраняемых законом. Статья 182 УПК РФ содержит только указание на личную жизнь, личную и семейную тайны, которые следует сохранить. Но данная норма ничего не указывает на иные виды тайн, которые также подлежат сохранению, наряду с тайнами уже определенными законодателем. В то же время ст. 183 УПК РФ указывает на иные виды тайн – государственная и иная охраняемая законом тайна, что подразумевает включение в иную охраняемую законом тайну сведений о личной жизни, личной и семейной тайны участников уголовного судопроизводства и других лиц.

Следует отметить, что при производстве обыска и выемки, как правило, участвует большое количество лиц, часть из которых являются участниками уголовного судопроизводства (следователь, потерпевший, подозреваемый, обвиняемый, специалист и др.), а часть (такие как оперативные работники и другие лица) к таковым не относятся. Ни ст. 182 УПК РФ, ни ст. 183 УПК РФ не содержат

указания на то, что следователь обязан предупредить участников данных следственных действий о неразглашении сведений и содержания документов, относящихся к охраняемым законом тайнам. Законодатель не предусмотрел такой гарантии при производстве указанных следственных действий. Как не предусмотрел данных положений и в ст. 164 УПК РФ – Общие правила производства следственных действий, где не предусмотрено такой обязанности, со стороны лиц, осуществляющих следственные действия.

В связи с приведенным анализом законодательных положений нами вносится предложение по совершенствованию положений содержащихся в ст. 164 УПК РФ. По нашему мнению, данную норму следует дополнить ч. 5.1. следующего содержания:

- при производстве следственных действий, в ходе которых получают или исследуются сведения, отнесенные к государственной или иной охраняемой законом тайне, лицо, осуществляющее производство по уголовному делу, обязано предупредить всех участников такого следственного действия о неразглашении государственной или иной охраняемой законом тайны, а также предупредить их об ответственности, предусмотренной действующим законодательством. Об этом у участников следственного действия отбирается подписка, о чем указывается в протоколе следственного действия. Данное указание будет являться гарантией о неразглашении сведений отнесенных к той или иной, охраняемой законом тайне.

Гарантии защиты тайны предусмотрены в ст. 185 УПК РФ, которая определяет порядок наложения ареста на почтово-телеграфные отправления, их осмотр и выемку; ст. 186 УПК РФ, устанавливающая порядок контроля и записи переговоров; ст. 186.1 УПК РФ, регламентирующая порядок получения информации о соединениях между абонентами и (или) абонентскими устройствами.

Гарантии сохранения тайны предусмотрены и в ходе рассмотрения уголовного дела в суде. Статья 241 УПК РФ содержит несколько таких положений. Часть 2 определяет и устанавливает общие основания рассмотрения уголовного дела в закрытом судебном заседании, к которым относятся следующие:

1) разбирательство уголовного дела в суде

может привести к разглашению государственной или иной охраняемой федеральным законом тайны;

2) рассматриваются уголовные дела о преступлениях, совершенных лицами, не достигшими возраста шестнадцати лет;

3) рассмотрение уголовных дел о преступлениях против половой неприкосновенности и половой свободы личности и других преступлениях может привести к разглашению сведений об интимных сторонах жизни участников уголовного судопроизводства либо сведений, унижающих их честь и достоинство;

4) этого требуют интересы обеспечения безопасности участников судебного разбирательства, их близких родственников, родственников или близких лиц.

Перечисленные основания являются безусловными для рассмотрения уголовного дела в закрытом судебном заседании.

К условным основаниям относятся положения, содержащиеся в ч. 3 ст. 241 УПК РФ - переписка, запись телефонных и иных переговоров, телеграфные, почтовые и иные сообщения лиц могут быть оглашены в открытом судебном заседании только с их согласия. В противном случае указанные материалы оглашаются и исследуются в закрытом судебном заседании. Данные требования применяются и при исследовании материалов фотографирования, аудио- и (или) видеозаписей, кино- съемки, носящих личный характер.

К числу гарантий сохранения тайны следует отнести и положения ч. 7 ст. 241 УПК РФ, предусматривающей оглашение только вводной и резолютивной части приговора суда в двух случаях. К первому случаю относится рассмотрение уголовного дела в закрытом судебном заседании; ко второму случаю относится рассмотрение уголовного дела о преступлениях в сфере экономической деятельности.

Очевидно, что российский законодатель предусмотрел как безусловные основания рассмотрения уголовного дела в закрытом судебном заседании, которые содержатся в ч. 2 ст. 241 УПК РФ, так и условные основания, которые могут быть использованы участниками уголовного судопроизводства для сохранения в тайне сведений личного характера, семейных, личных тайн. Услов-

ные основания, как правило, зависят от той позиции, которую занимают участники уголовного судопроизводства.

Необходимо обратить внимание на ч. 5 ст. 49 УПК РФ и ч. 3 ст. 53 УПК РФ. Положения ч. 5 ст. 49 УПК РФ предусматривает обязанности защитника, который участвует в производстве по уголовному делу, в материалах которого содержатся сведения, составляющие государственную тайну, и который не имеет соответствующего допуска к указанным сведениям, дать подписку об их неразглашении. А вторая норма обязывает защитника не разглашать данные предварительного расследования, ставшие ему известными в связи с осуществлением защиты, если он был об этом заранее предупрежден. Эти положения закона являются гарантией неразглашения государственной тайны и тайны предварительного следствия.

Изучение действующего законодательства Российской Федерации позволяют сделать вывод о том, что в настоящий момент нормы об охране тайны в полной мере не позволяют регламентировать складывающиеся отношения. Они не всегда являются эффективными и не всегда достаточными для охраны тайны. Гарантий, предусмотренных действующим уголовно-процессуальным законодательством для охраны предусмотренных законом тайн явно недостаточно.

В настоящий момент к процессуальным гарантиям защиты тайны в уголовном процессе относятся следующие:

- получение отдельных сведений только по судебному решению;
- предупреждение участников уголовного судопроизводства о недопустимости разглашения данных предварительного расследования;
- рассмотрение уголовного дела или его части в закрытом процессе.

Установление гарантий в такой области государственной деятельности как уголовное судопроизводство является стратегически важной задачей, поскольку от ее решения будет зависеть уровень защиты прав, свобод и законных интересов участников уголовного процесса, демократизм уголовного судопроизводства в целом.

Это вызывает необходимость в совершенствовании механизма регулирования

отношений по охране тайны в уголовном судопроизводстве, расширение системы процессуальных гарантий. Считаем, что предложенные нами изменения действующего уголовно-процессуального законодательства позволят расширить систему процессуальных гарантий по охране тайн в уголовном процессе.

В настоящий момент гласность рассматривается законодателем лишь как одно из общих условий судебного разбирательства. Считаем, что данная законодательная новелла не позволяет в полной мере реализовывать положения об открытом гласном судебном разбирательстве, но и защищать институт тайны в уголовном судопроизводстве.

Нами поддерживается идея многих исследователей о введении в систему принципов уголовного судопроизводства России принципа гласности. Данный принцип следует поместить в статью 8<sup>1</sup> УПК РФ:

1. Разбирательство уголовных дел во всех судах открытое, за исключением случаев, предусмотренных действующим законодательством.

2. Лица, присутствующие в открытом судебном заседании, вправе вести аудиозапись и письменную запись. Проведение фотографирования, видеозаписи и (или) киносъемки допускается с разрешения председательствующего в судебном заседании.

3. Приговор суда провозглашается в открытом судебном заседании. В случае рассмотрения уголовного дела в закрытом судебном заседании на основании определения или постановления суда могут оглашаться только вводная и резолютивная части приговора.

<sup>1</sup> Уголовный процесс: учебник для юридических вузов и факультетов / под ред. Гупенко К.Ф. – М.: Изд-во «Зерцало», 2006; Уголовно-процессуальное право Российской Федерации: учебник / отв. ред. Лушинская П.А. – М.: Юрист, 2008; Алкасейев Н.С., Дасев В.Г., Кокорев Л.Д. Очерк развития науки советского уголовного процесса. – Воронеж: изд-во Воронежского университета, 1980 и др.

<sup>2</sup> Еникеев З.Д. Задачи и принципы уголовного процесса в свете проблем борьбы с преступностью /Еникеев З.Д. //Актуальные вопросы уголовного процесса современной России: межвузовский сб. науч. тр.; отв. ред. Еникеев З.Д. Уфа: РИО БашГУ, 2003. С. 4-5.

*Список литературы:*

1. Алкасейев Н.С., Дасев В.Г., Кокорев Л.Д. Очерк развития науки советского уголовного процесса. - Воронеж: изд-во Воронеж. ун-та, 1980.
2. Еникеев З.Д. Задачи и принципы уголовного процесса в свете проблем борьбы с преступностью. Актуальные вопросы уголовного процесса современной России: межвузовский сб. науч. тр.; отв. ред. Еникеев З.Д. - Уфа: РИО БашГУ, 2003.
3. Уголовный процесс: учебник для юридических вузов и факультетов / под ред. Гупенко К.Ф. – М.: Изд-во «Зерцало», 2006.
4. Уголовно-процессуальное право Российской Федерации: учебник / отв. ред. Лушинская П.А. – М.: Юрист, 2008.

**ԱՄՓՈՓՈՒՄ**

***Քրեական դատավարության գաղտնեխության ապահովման երաշխիքները***

Հոդվածում քննարկվում են օրենքով նախատեսված քրեական դատավարության գաղտնեխության ապահովման երաշխիքների հարցերը, առաջարկվում են առկա օրենսդրության բարելավման ուղիները:

*Հիմնարարներ՝ գաղտնիք, քրեական դատավարական երաշխիքներ, հրապարակայնության սկզբունք:*

**SUMMARY**

***Criminal procedural safeguards to protect the secrecy***

In the article are considered issues of procedural criminal guarantees of protection required by law secrets, made proposals to improve current law.

*Keywords: secret, procedural criminal guarantees, principle of publicity.*